

**Council of Europe**  
**Conseil de l'Europe**



**European Union**  
**Union européenne**

**This publication is financed by the European Union and the Council of Europe. It is published as part of the European Union/ Council of Europe Joint Programme "Combating ill-treatment and impunity".**

**Legal and Human Rights Capacity Building Department  
Directorate of Co-operation  
Directorate General of Human Rights and Legal Affairs  
Council of Europe  
F-67075 Strasbourg Cedex, <http://www.coe.int/justice>**

The opinions expressed in this publication are those of the authors and do not engage the responsibility of the European Union or the Council of Europe, or the institutions the author works for. They should not be regarded as placing upon the legal instruments mentioned in it any official interpretation capable of binding the governments of member States, the European Union's or the Council of Europe's statutory organs, or any organ set up by virtue of the European Convention on Human Rights.

**Սույն աշխատանքը հրատարակվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցությամբ: Այն հրատարակվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի՝ «Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքար» համատեղ ծրագրի շրջանակներում:**

**Իրավական և մարդու իրավունքների զարգացման ծրագրերի վարչություն**

**Համագործակցության տնօրինություն**

**Մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինություն**

**Եվրոպայի խորհուրդ**

**F-67075 Strasbourg Cedex, <http://www.coe.int/justice>**

Սույն հրատարակության մեջ արտահայտված տեսակետները հեղինակներինն են: Եվրոպական միությունը կամ Եվրոպայի խորհուրդը կամ այն կառույցները, որոնց համար հեղինակներն աշխատել են, դրանց առջնությամբ պատասխանատվություն չեն կրում: Դրանք չպետք է դիտվեն որպես իրավական ակտերի որևէ պաշտոնական մեկնաբանություն, որը կարող է պարտականություններ առաջացնել մասնակից պետությունների, ինչպես նաև Եվրոպական միության կամ Եվրոպայի խորհրդի կանոնադրական մարմինների կամ Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի ռեզոլյուցիայի ստեղծված մարմինների համար:

# COMBATING ILL-TREATMENT

## LEGAL ANALYSIS FOR PRETRIAL INVESTIGATION BODIES

**Editor: Davit AVETISYAN**

President of the Criminal Chamber of the Cassation Court the Republic of Armenia, Lawyer emeritus, doctor of law, professor

**Authors: Vahe YENGIBARYAN**

Executive Director of the Association of Judges of the Republic of Armenia, Professor of YSU Law Faculty, PhD in Law

**Anna VARDAPETYAN**

Attendant to the President of the Criminal Chamber of the Cassation Court the Republic of Armenia



Yerevan  
«Antares»  
2010

# ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆ  
ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## *Խմբագիր՝*      **ԴԱՎԻԹ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ,  
ՀՀ վաստակավոր իրավաբան,  
իրավագիտության թեկնածու, դոցենտ

## *Հեղինակներ՝*      **ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

ՀՀ դատավորների միության գործադիր տնօրեն,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դոցենտ,  
իրավագիտության թեկնածու, դոցենտ

## **ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի  
նախագահի ավագ օգնական



Երևան  
«Ամտարես»  
2010

ՀՏԴ 347 : 343 (479.25)  
ՊՄԴ 67.99 (2) 3 + 67.99 (2 Հ) 8  
Ե 472

Տպագրվում է  
ՀՀ դատավորների միության խորհրդի որոշմամբ

Ենգիբարյան Վահե, Վարդապետյան Աննա  
Ե 472 Վատ վերաբերմունքի դեմ պայքարը: Իրավական վերլուծությու-  
նում մինչդատական վարույթն իրականացնող մարմինների  
համար:/ Վ. Ենգիբարյան, Ա. Վարդապետյան: Խմբ.՝ Դ.  
Ավետիսյան.- Եր.: Անտարես, 2010.- 200 էջ:

Սույն աշխատանքի նպատակն է աջակցել հետաքննության և նա-  
խաքննության մարմիններին, դատախազներին, փաստաբաններին,  
դատավորներին, ինչպես նաև իրավակիրառ գործունեություն իրակա-  
նացնող մյուս մարմիններին ու կազմակերպություններին ծանոթանա-  
լու վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարի վերա-  
բերյալ ՀՀ օրենսդրությանն և քննչական ու դատական պրակտիկայի  
հիմնախնդիրներին:

Այն կարող է նպաստել նշված բնագավառում ներպետական  
դատարանների իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը:

ՀՏԴ 347 : 343 (479.25)  
ՊՄԴ 67.99 (2) 3 + 67.99 (2 Հ) 8

ISBN 978–9939–51– 248–8

- © ՀՀ դատավորների միություն, 2010
- © Ավետիսյան Դավիթ, 2010
- © Ենգիբարյան Վահե, 2010
- © Վարդապետյան Աննա, 2010

## Բովանդակություն

Նախաբան .....	9
Ձերբակալում .....	11
Ձերբակալված անձանց տեղեկացումն իրենց իրավունքների մասին .....	16
Ձերբակալվածներին պահելու վայրեր բերված անձանց գրանցումը .....	20
Ձերբակալված անձանց նամակագրության և հաղորդակցման իրավունքը .....	23
Պաշտպան ունենալու իրավունքը.....	24
Պաշտպանի մասնակցությունը վարույթին.....	30
Բժշկի դիմելու իրավունքը .....	37
Ձերբակալված անձի հարցաքննության ընդհանուր պայմանները .....	42
Կալանավորում.....	47
Անձին կալանքի տակ պահելու պայմանները.....	48
Դատավորի նոտ տարվելը.....	57
Խոշտանգումը որպես հանցագործություն .....	59
Վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդմանն արձագանքելը .....	63
Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննությունը, այդ քննության սկզբունքները.....	66
<i>Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննության սկզբունքները ...</i>	<i>70</i>
Վատ վերաբերմունքի վերաբերյալ ապացույցները .....	74
<i>Բժշկական ապացույցներ .....</i>	<i>74</i>
<i>Հարցաքննությունների իրականացումը և հարցաքննությունների արձանագրությունները .....</i>	<i>76</i>
<i>Վատ վերաբերմունքից տուժածի հարցաքննությունը .....</i>	<i>78</i>

Վատ վերաբերմունքից տուժած անչափահասի հարցաքննությունը.....	82
Վատ վերաբերմունքի մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի հարցաքննությունը.....	82
Վատ վերաբերմունքի վկաների հարցաքննությունը.....	83
Վատ վերաբերմունքի անուղղակի ապացույցներ.....	86
Վատ վերաբերմունքի զոհերի և վկաների պաշտպանությունը .....	87
Վատ վերաբերմունքի իրականացման մեջ մեղավոր անձանց հետապնդումն ու նրանց պատասխանատվության ենթարկելը ...	88
Վատ վերաբերմունքի արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունը .....	92
Վատ վերաբերմունքից տուժած անձանց փոխհատուցումը.....	97
Հավելվածներ .....	101



## Նախաբան

Վատ վերաբերմունքի<sup>1</sup> արգելքը կիրառելի է յուրաքանչյուր անձի և հատկապես ազատությունից զրկված անձանց նկատմամբ: Այս պահանջն ամրագրված է մարդու իրավունքների վերաբերյալ գրեթե բոլոր միջազգային փաստաթղթերում և աներկբա սահմանում է, որ ձերբակալված և կալանավորված անձինք չպետք է ենթարկվեն որևէ զրկանքի կամ հարկադրանքի, բացառությամբ այն զրկանքների ու հարկադրանքի միջոցների, որոնք բխում են ինքնին ազատությունից զրկելու փաստից:

Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքն ունի բացարձակ բնույթ, այսինքն՝ որևէ իրավիճակում այն ենթակա չէ սահմանափակման: Հանենատության համար նշենք, որ եթե անգամ մարդու այնպիսի հիմնարար իրավունք, ինչպիսին ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքն է, որոշակի իրավիճակներում (օրինակ՝ արտակարգ դրության ժամանակ) կարող է սահմանափակվել, ապա խոշտանգումների կանխարգելման համար անհրաժեշտ այնպիսի երաշխիքը, ինչպիսին է այն ժամկետի սահմանափակումը, որի ընթացքում անձը կարող է գտնվել անազատության մեջ՝ առանց նամակագրության և հաղորդակցման իրավունքի, պետք է շարունակի գործել:

Մտահոգությունն առ այն, որ անձը կարող է խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթարկվել նախքան օրենքով սահմանված կարգով ձերբակալվելը կամ կալանավորվելը, և հաշվի առնելով այն, որ վատ վերաբերմունքի ենթարկվելու վտանգը մեծ է ազատությունից փաստացի զրկելուն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական ակտերն ամրագրում են, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված միջազգային չափանիշները ենթակա են կի-

---

<sup>1</sup> «Վատ վերաբերմունք» (անգլերեն՝ ill treatment, ռուսերեն՝ плохое обращение) եզրույթն ուղղակիորեն չի կիրառվում ՀՀ օրենսդրության մեջ: Այն, կարելի է ասել, հավաքական իմաստ ունի և խոշտանգումների ու անպատժելիության դեմ պայքարի համատեքստում գործածվում է բնորոշելու համար խոշտանգումները, անմարդկային, նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը:

րառման անձին փաստացի ազատությունից զրկելու առաջին իսկ պահից սկսած:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի իմաստով անձին ազատությունից զրկելու փաստը ենթադրում է, որ այդ պահից սկսած նրա անվտանգության ապահովման պարտականությունը կրում են այն պաշտոնատար անձինք և պետական մարմինները, որոնք իրականացրել են ձերբակալումը կամ կալանավորումը, կամ ում տրամադրության տակ գտնվում է ազատությունից զրկված անձը:

Ներկայացված ձեռնարկը նվիրված է վատ վերաբերմունքի արգելքի և գործի քննության մինչդատական վարույթում անձի իրավունքների պաշտպանության վերոնշյալ հիմնախնդիրներին: Դրանում զետեղված են վատ վերաբերմունքի արգելքի միջազգային իրավական նվազագույն չափանիշները և դրանց վրա հիմնված՝ ՀՀ ներպետական օրենսդրության (ՀՀ Սահմանադրություն, ՀՀ քրեական դատավարության, ՀՀ քրեական և ՀՀ քրեակատարողական օրենսգրքեր, «Ոստիկանության» և «Ձերբակալված ու կալանավորված անձանց պահելու» մասին ՀՀ օրենքներ) պահանջները: Ձեռնարկում վերլուծված են նաև վատ վերաբերմունքի վերաբերյալ կամ դրան առնչվող՝ ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, որոնց ամբողջական տեքստերը ներկայացված են հավելվածի ձևով:

Չեղիմակները հույս ունեն, որ ներկայացված ձեռնարկն օգտակար կլինի հետաքննության և նախաքննության մարմինների համար և ուղեցույց կծառայի վատ վերաբերմունքի կանխարգելման ու դրա մեջ մեղավոր անձանց բացահայտման դժվարին գործում:

## Ձերբակալում

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ձերբակալման հասկացությունը, որի համաձայն՝ «Ձերբակալումը անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ հոդվածով սահմանված բնորոշումից երևում է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝

- 1) անձին ազատությունից փաստացի զրկելը,
- 2) նրան իրավասու մարմին բերելը,
- 3) ձերբակալման արձանագրություն կազմելը,
- 4) այդ մասին նրան հայտարարելը:

Այսինքն՝ անձը ձերբակալվածի կարգավիճակ է ձեռք բերում վերոնշյալ գործողություններից վերջինի՝ կազմված ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելուց հետո միայն: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով՝ նախքան նշված գործողության կատարումն անձը չունի ձերբակալվածի կարգավիճակ, չնայած որ փաստացի գտնվում է արգելանքի և իրավասու մարմնի տրամադրության տակ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ձերբակալումը կատարվում է՝

- 1) հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա.
- 2) քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա»:

Մեջբերված հոդվածի վերլուծությունից բխում է, որ անձի ձերբակալման հիմքը հիմնավոր կասկածն է առ այն, որ նա հանցագործություն է կատարել, բացի դրանից, անձի ձերբակալումը նպատակ է հետապնդում ապահովել նրա մասնակցությունը քրեական գործով վարույթին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131<sup>1</sup>-րդ հոդվածը սահմանում է կասկածյալի ձերբակալման կարգը: Նշված հոդվածի համա-

ծայն՝ «1. Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին: Ձերբակալման մասին արձանագրությունում նշվում է կասկածյալի պաշտպանության, ինչպես նաև սույն օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու մասին:

2. Արձանագրությունում նշվում են կազմելու ժամանակը (օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, րոպեն), ձերբակալման ժամանակը, վայրը, հիմքը (հիմքերը) և նպատակը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է ձերբակալվածը, նրա անձնական խուզարկության արդյունքները և այլ հանգամանքներ, ինչպես նաև ձերբակալվածի հայտարարություններն ու միջնորդությունները:

3. Ձերբակալման արձանագրությունը կազմելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում, հետաքննության մարմինը կամ քննիչը գրավոր իրազեկում է դատախազին»:

Մեջբերված իրավանորմից բխում է, որ եթե փաստացի ազատությունից զրկված և իրավասու մարմին բերված անձի նկատմամբ վարույթն իրականացնող մարմինը շարունակում և օրենքով սահմանված երեք ժամվա ընթացքում ավարտին է հասցնում ձերբակալման գործընթացը, ապա նրա ձերբակալման ժամկետն սկսում է հաշվվել նրան փաստացի արգելանքի վերցնելու պահից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա այս կարգավորումը թույլ է տալիս հետևություն անել այն մասին, որ փաստացի արգելանքի վերցված և իրավասու մարմին բերված անձը, նախքան ձերբակալման արձանագրության մասին իրեն հայտարարելը, կարող է չգիտակցել իր կարգավիճակը և, հետևաբար, հնարավորություն չունենալ իրացնելու այդ կարգավիճակից բխող իր իրավունքները:

ՀՀ գործող օրենսդրության մեջ առկա այս կարգավորման խոցելիությունը հաշվի առնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ՝ «(...) հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի հիմքով անձին ազատությունից զրկելու քրեադատավարական կառուցակարգերը չեն սահմանափակվում «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտներով, այլ նե-

րառում են նաև արգելանքի վերցվելու և վարույթն իրականացնող մարմին բերվելու կառուցակարգը: Համապատասխանաբար, մինչդեռ տական վարույթում «ծերբակալվածի» և «կալանավորվածի» կարգավիճակների հետ մեկտեղ ազատությունից զրկված անձը կարող է ունենալ նաև նախնական իրավական վիճակ, որը պայմանականորեն կարելի է անվանել «բերվածի» կարգավիճակ: (...)» (տե՛ս, Գագիկ Գառնիկի Միքայելյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի ԵԱԴԴ/0085/06/09 որոշման 20-րդ կետը):

Բերվածին ինքնուրույն դատավարական կարգավիճակ տալու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի մոտեցումը հիմնված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասում առկա օրենսդրական կարգավորման վրա, որը նախքան քրեական գործի հարուցումը թույլատրելի գործողությունների շարքում ամրագրում է նաև հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում բերման ենթարկվելը:

Հիշատակված նախադեպային որոշման 21-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է. «Չնայած *բերվածի* կարգավիճակի կարճատևությանը՝ բերվածը պետք է օժտված լինի Սահմանադրական և Կոնվենցիոն համապատասխան երաշխիքներով: (...)»:

Կոնվենցիոն երաշխիքների ներքո ՀՀ վճռաբեկ դատարանն առաջին հերթին նկատի է ունեցել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) արդարացի (...) դատաքննության իրավունք: (...)», ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ կետը, որը սահմանում է հանցագործություն կատարելու մեջ յուրաքանչյուր մեղադրվողի նվազագույն իրավունքները:

Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում առկա՝ «քրեական մեղադրանք» հասկացությունը ՀՀ վճռաբեկ դատարանը ևս հասկանում է ոչ թե *ձևական* (փաստաթղթային), այլ *բովանդակային* (գործնական) իմաստով (տե՛ս, *Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium)* գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 44): Այս առումով ՀՀ վճռաբեկ դատարանը համակարծիք է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում առկա այն

նոտեցման հետ, որ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (տե՛ս, *Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany)* գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73, *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia)* գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62, Գ.Կ.-ն ընդդեմ *Լեհաստանի (G.K. v. Poland)* գործով վճիռ, 2004թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98): Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը շեշտել է նաև, որ մինչդատական վարույթի նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի կիրառման եղանակը պայմանավորված է տվյալ վարույթի առանձնահատկություններով (Շաբելնիկն ընդդեմ Ուկրաինայի (Shabelnik v. Ukraine) գործով վճիռ, 2009թ. փետրվարի 19, գանգատ թիվ 16404/03, կետ 52):

Բերվածի կարգավիճակի սահմանման անհրաժեշտությունը ՀՀ վճռաբեկ դատարանի համար ակնհայտ դարձավ *Գ.Միքայելյանի* գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում, երբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ մեղադրյալը ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժին բերման է ենթարկվել 2009 թվականի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 03.05-ին, նրան ձերբակալելու մասին արձանագրությունը կազմվել է 2009 թվականի սեպտեմբերի 8-ին ժամը 23.30-ին: Այսինքն՝ սույն գործով Գ. Միքայելյանն ազատությունից փաստացի զրկվելու պահից մինչև իր ձերբակալման վերաբերյալ արձանագրություն կազմելը<sup>2</sup> (նոտավորապես 20 ժամ) պահվել է առանց դատավարական կարգավիճակ ունենալու և, հետևաբար, նաև զրկված է եղել իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար անհրաժեշտ երաշխիքներից օգտվելու հնարավորությունից:

<sup>2</sup> Որոշման մեջ արձանագրված դատավարական նախապատմության և փաստական հանգամանքների մեջ նշված չէ, թե երբ է ձերբակալման արձանագրությունը հայտարարվել բերվածին: Ենթադրում ենք, որ նախադեպային որոշման մեջ նշված հանգամանքի բացակայությունը պայմանավորված է Գ.Միքայելյանի վերաբերյալ գործում համապատասխան տեղեկության բացակայության հետ:

Ազատությունից զրկված անձը, ով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի իմաստով ունի բերվածի կարգավիճակ, օժտված է հետևյալ նվազագույն իրավունքներով.

(ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(ա) ենթակետից),

(բ) տեղեկացվելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից),

(գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասից),

(դ) լռելու (բխում է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասից):

Համապատասխանաբար, քրեական հետապնդման մարմինը պարտավոր է ապահովել բերվածի իրավունքների իրականացումը՝ բերվածի իրավունքները զրավոր պարզաբանելու, նրան առնվազն մեկ զանգի հնարավորություն ընձեռելու, բերվածի փաստաբանի մուտքը չխոչընդոտելու եղանակներով:

Այնքանով, որքանով վերաբերելի են (*mutatis mutandis*), սույն կետում ամրագրված նվազագույն իրավունքներով և երաշխիքներով օժտված են նաև ոստիկանությունում կամ քրեական հետապնդման այլ մարմնում գտնվող, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն անձինք, որոնք կարող են ողջամտորեն ենթադրել, որ (1) իրենց ազատությունը սահմանափակված է կամ իրենք ազատությունից զրկված են, և, միաժամանակ, որ (2) իրենք կասկածվում են հանցագործության մեջ» (տե՛ս, Գազիկ Գառնիկի Միքայելյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի ԵԱԴԴ/0085/06/09 որոշման 22-րդ կետը):

Բերվածի կարգավիճակի սահմանումից բացի, ՀՀ վճռաբեկ դատարանը անհրաժեշտ համարեց նաև ողջամիտ ժամկետային սահմանափակման ենթարկել անձին բերվածի կարգավիճակում պահելը՝ ընդօժեշտով, որ դա բխում է ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքների ապահովման անհրաժեշտությունից: Այսպես, Գ.Միքայելյանի վերաբերյալ որոշման 28-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածը պետք է մեկնաբանել 131<sup>1</sup>-րդ հոդվածի լուսիս ներքո և

ամրագրել, որ այն բանից հետո, երբ անձին քրեական հետապնդման մարմին բերելու պահից երեք ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմինը կկազմի կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, այդ մարմինը պարտավոր է անհապաղ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավելագույնը մեկ ժամվա ընթացքում դրա մասին հայտարարել ազատությունից զրկված անձին: Նման ժամկետային սահմանափակումը ողջամիտ է և բխում է ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքների ապահովման անհրաժեշտությունից: Նշված ժամկետային սահմանափակումից միակ իրավաչափ բացառությունը կարող է վերաբերել այն դեպքերին, երբ բերվածի ֆիզիոլոգիական վիճակը՝ ալկոհոլի, թմրամիջոցների կամ այլ թմրեցնող նյութերի ազդեցության տակ լինելը կամ այլ համարժեք վիճակը, քրեական հետապնդման մարմնին օբյեկտիվորեն զրկում է ձերբակալման արձանագրությունը բերվածին հայտարարելու հնարավորությունից:

Այսպիսով, եթե քրեական հետապնդման մարմին բերելուց չորս ժամ հետո ազատությունից զրկված անձին ձերբակալման արձանագրությունը չի հայտարարվի, ապա անձն օրենքի ուժով պետք է համարվի ձերբակալված և իրավունք ունենա օգտվելու ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից, այդ թվում՝ 33 Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված՝ 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չկալանավորվելու դեպքում անհապաղ ազատ արձակվելու իրավունքից»:

## **Ձերբակալված անձանց տեղեկացումն իրենց իրավունքների մասին**

Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի իմանալու իր ձերբակալման պատճառները, ինչպես նաև այդ անձին պետք է բացատրվեն նրա կարգավիճակից բխող իրավունքները: Ազատությունից զրկված անձն իրավունք ունի անձամբ կամ իշխանության ներկայացուցիչների միջոցով իր ընտանիքի անդամ(ներ)ին (հարազատ(ներ)ին, բարեկամ(ներ)ին) կամ ընկերոջը (ընկերներից) տեղեկացնել իրեն ազատությունից զրկելու փաստի և իր գտնվելու վայրի մասին: Եթե ազատությունից զրկված անձը տեղափոխվում է այլ վայր, ապա վերոնշյալ անձինք (ընտանիքի անդամ(ներ)ը կամ հարազատ(ներ)ը կամ բարեկամ(ներ)ը կամ ընկեր(ներ)ը) կրկին պետք է տե-



ղեկացվեն ազատությունից զրկված անձի գտնվելու վայրի մասին: Ազատությունից զրկված անձի գտնվելու վայրի մասին տեղեկությունը պետք է համապատասխան անձին կամ անձանց տրամադրվի անհապաղ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առանց անհիմն ձգձգումների:

Ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ ձերբակալված անձանց իրավունքների մասին տեղեկացումն ընդհանուր առմամբ ներառում է վերոշարադրյալ նվազագույն պահանջները, որոնք իրենց ամրագրումն են ստացել ինչպես ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերում, այնպես էլ ՀՀ ներպետական օրենսդրության մեջ:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) արդարացի (...) դատաքննության իրավունք: (...)»:

Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ՝ «Յուրաքանչյուր անձի ձերբակալման ժամանակ նրան հայտնվում են ձերբակալման պատճառները և շտապ կարգով հաղորդվում է նրան ներկայացվող ամեն մի մեղադրանք»:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն սահմանել է, որ բավական չէ ազատությունից զրկված անձին միայն տեղեկացնել ձերբակալման մասին՝ առանց նշելու նրան առաջադրված պաշտոնական մեղադրանքի էությունը: Անգամ «պետական անվտանգության հետ կապված գործերով» ոստիկանության և անվտանգության մարմինների աշխատակիցները պարտավոր են զրավոր շարադրել ձերբակալման պատճառները, որոնք պետք է ներկայացվեն դատարան քննության համար<sup>3</sup>:

---

<sup>3</sup> Տե՛ս, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի եզրափակիչ եզրահանգումներ. Սուդան, ՄԱԿ-ի փաստաթուղթ, CCPR/C/79/Add.85, 19 նոյեմբերի 1997թ., կետ 13:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ ձերբակալված յուրաքանչյուր անձի «պետք է հասկանալի, ոչ մասնագիտական և նրա համար ընկալելի լեզվով բացատրվեն նրա ձերբակալման իրավաբանական և փաստական հիմքերը, ինչը հնարավորություն կտա ձերբակալված անձին ցանկության դեպքում դիմել դատարան և վիճարկել նման ձերբակալման օրինականությունը»<sup>4</sup>:

CPT-ի հանձնարարականի համաձայն՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք պետք է տեղեկացված լինի իր ձերբակալման մասին իր ընտրությամբ ցանկացած անձի տեղեկացնելու, պաշտպան ունենալու և բժշկի դիմելու իրավունքների մասին: Այս իրավունքները ենթակա են իրացման ձերբակալման հենց սկզբից (այսինքն՝ այն պահից, երբ անձը պետք է գտնվի ոստիկանության տրամադրության տակ)<sup>5</sup>: CPT-ի հանձնարարականի համաձայն՝ «ձերբակալման ամենավաղ փուլերում ազատությունից զրկված անձանց պետք է տրամադրվի նրանց իրավունքների վերաբերյալ հուշաթերթիկ: Այդ հուշաթերթիկը պետք է մի քանի լեզուներով կազմված լինի, բացի այդ, ձերբակալված անձը պետք է ստորագրությամբ հաստատի, որ տեղեկացվել է իր իրավունքների մասին»<sup>6</sup>:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին»:

Սահմանադրական վերոնշյալ դրույթի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ՝ «Յուրաքանչյուր ձերբակալվածի և կալանավորվածի անհապաղ հաղորդվում են ձերբակալության կամ կալանավորման հիմքերը, ինչպես նաև այն հանցագործության փաստական հանգամանքները և

---

<sup>4</sup> Տե՛ս, Ֆոքսը, Քենիբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, կետ 40:

<sup>5</sup> Տե՛ս, «Քաղվածք CPT-ի գործունեության վերաբերյալ 12-րդ ընդհանուր զեկույցից», CPT/Inf (2002), էջ 12, կետ 40 և էջ 13, կետ 42:

<sup>6</sup> Տե՛ս, նույն տեղում, էջ 13, կետ 44:

իրավաբանական որակումը, որի կատարման մեջ նա կասկածվում կամ մեղադրվում է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Կասկածյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի ձերբակալվելուց հետո հետաքննության մարմնից, քննիչից կամ դատախազից անմիջապես ստանալ իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում»:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածն ամրագրում է, որ՝ «(...) Ոստիկանությունը պարտավոր է ձերբակալված անձանց իրական հնարավորություն ընձեռել օգտվելու իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից, ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում, տեղյակ պահել նրանց հարազատներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմին՝ նրանց գտնվելու վայրի մասին: Անհրաժեշտության դեպքում միջոցներ են ձեռնարկվում նրանց բժշկական և (կամ) այլ օգնություն ցույց տալու, ինչպես նաև ձերբակալման կապակցությամբ անձի կամ նրա ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու ուղղությամբ: (...)»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է ձերբակալված անձի հետևյալ իրավունքները.

1) մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալ իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների վերաբերյալ,

2) իր նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի,

3) իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով, դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին,

4) առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին,

5) սոցիալական ապահովության,

6) ստանալ իրավաբանական օգնություն,

7) անձնական անվտանգության ապահովման,

8) մտքի, խղճի և դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության,

9) հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ,

10) հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութամյա գիշերային քնի իրավունքը, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել դատավարական կամ այլ գործողությունների, բացառությամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի,

11) կոչվել իր անվամբ կամ ազգանվամբ,

12) անձնական ընդունելության խնդրանքով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետին, դրանց գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին,

13) իր մոտ ունենալ քրեական գործին կամ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն առնչվող փաստաթղթեր և գրառումներ, բացառությամբ այն փաստաթղթերի և գրառումների, որոնք պարունակում են պետական կամ ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք,

14) մասնակցել քաղաքացիաիրավական գործարքների:

Նույն հոդվածն ամրագրում է, որ ձերբակալված անձին վերապահվում են նաև օրենքով սահմանված այլ իրավունքներ:

## **Ձերբակալվածներին պահելու վայրեր բերված անձանց գրանցումը**

Ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք պետք է պահվի դրա համար հատուկ նախատեսված վայրերում, որոնք հայտնի են հասարակությանը որպես ձերբակալված անձանց պահելու վայրեր (ՁՊՎ):

Ազատությունից զրկված անձանց հարցաքննությունը թույլատրվում է իրականացնել միայն ձերբակալվածներին պահելու կամ հար-

ցաքննությունների իրականացման համար թույլատրված այլ վայրերում, հակառակ դեպքում, իրականացված հարցաքննությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունները, եթե դրանք հետագայում չեն հաստատվել անձի կողմից, չեն կարող դիտվել որպես թույլատրելի ապացույց և դրվել անձին առաջադրվող մեղադրանքի հիմքում:

ՁՊՎ-ներ բերված անձինք պետք է համապատասխան վայրի վարչակազմի կողմից գրանցվեն: Ձերբակալված անձանց վերաբերյալ տեղեկությունները (ձերբակալված անձի անուն, ազգանուն, հայրանուն, համապատասխան ՁՊՎ և խցի համար, ձերբակալված անձի համար պատասխանատու անձինք) պետք է պահվեն ՁՊՎ-ում, ինչպես նաև փոխանցվեն և հավաքվեն ձերբակալված անձանց պահելու վայրերի կենտրոնական մարմնում, այսինքն՝ այն մարմնում, որի ենթակայության տակ են գտնվում այդ վայրերը: Բացի դրանից, ձերբակալված անձանց վերաբերյալ տեղեկությունները պետք է հասանելի լինեն հասարակությանը:

Ձերբակալված անձանց անհատականացման համար անհրաժեշտ է՝ նրանց գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններից բացի, գրանցել ձերբակալված անձի կողմից ներկայացված բողոքների, դիմումների, այդ դիմումներին և բողոքներին իրավասու մարմինների կողմից տրված պատասխանների և ձերբակալված անձի առնչությամբ կայացված բոլոր որոշումների վերաբերյալ տեղեկությունները:

ՁՊՎ-ներում պահվող անձանց վերաբերյալ տեղեկությունները պետք է գրանցվեն այնպես, որ հնարավոր լինի հեշտությամբ բացահայտել այդ գրանցումների կեղծման յուրաքանչյուր փորձ կամ դեպք: Այդ նպատակով անհրաժեշտ է գրանցումները վարել համարակալված էջերով հատուկ գրանցամատյանում, որոնք կօգտագործվեն տևական ժամանակահատվածի ընթացքում (օրինակ՝ մի քանի տարի) և շուտ-շուտ չեն արխիվացվի:

Ձերբակալված անձանց պահելու վայրեր բերված անձանց գրանցման պահանջն ընդհանուր առմամբ ներառում է վերոշարադրյալ նվազագույն պահանջները, որոնք իրենց ամրագրումն են ստացել ՀՀ ներպետական և միջազգային օրենսդրության և Հայաստանի համար ուղեցույց հանդիսացող միջազգային փաստաթղթերի մեջ:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածն ամրագրում է, որ՝ «Ձերբակալված անձին ձերբակալվածներին պահելու վայր (...) ընդունում է տվյալ հիմնարկի

վարչակազմը՝ ներքին կանոնակարգով սահմանված կարգով: (...) Ձերբակալված անձը ձերբակալվածներին պահելու վայր (...) փոխադրվելուց անմիջապես հետո գրանցվում է դրա համար նախատեսված գրանցամատյաններում և անհատական քարտերում: Ձերբակալված (...) յուրաքանչյուր անձի համար վարվում է անձնական գործ, որում պարտադիր կարգով պետք է ներառվեն ընդունելու և արգելանքից (...) ազատելու տարեթվերն ու ամսաթվերը»:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն մշտել է, որ «ձերբակալված անձանց պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի ձերբակալված անձինք պահվեն այն վայրերում, որոնք պաշտոնապես ճանաչված են որպես ձերբակալված անձանց պահելու վայրեր, ինչպես նաև անհրաժեշտ է, որպեսզի ձերբակալված և ձերբակալման համար պատասխանատու անձանց անունները գրանցվեն համապատասխան մատյաններում (գրանցամատյաններում), որոնք հասանելի կլինեն շահագրգիռ բոլոր անձանց, այդ թվում՝ ձերբակալված անձանց հարազատների և ընկերների համար»<sup>7</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ անձի ձերբակալման փաստը չընդունելը հանդիսանում է եվրոպական կոնվենցիայով նախատեսված՝ անձի ազատության իրավունքի անհիմն սահմանափակման կանխարգելման և անձի անվտանգության ապահովման երաշխիքների «ամբողջական բացառում»<sup>8</sup>:

CPT-ն առաջարկում է յուրաքանչյուր ձերբակալված անձի վերաբերյալ գրառումներ կատարել, որոնցում պետք է արտացոլվեն «անձին անազատության մեջ պահելու բոլոր ասպեկտները և նրա նկատմամբ կիրառված բոլոր միջոցները (երբ է անձը ձերբակալվել և ի՞նչ հիմքով, երբ է տեղեկացվել իր իրավունքների մասին, անձի մոտ վնասվածքների, հոգեկան խանգարումների և այլնի առկայությունը, երբ են

---

<sup>7</sup> Տե՛ս, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի, 20-րդ ընդհանուր մեկնաբանությունները, 7-րդ հոդված (44-րդ համագումար, 1992թ.), Մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրի շրջանակներում կազմակերպությունների կողմից ընդունված Ընդհանուր մեկնաբանությունների ժողովածու, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI/GEN/1/Rev.1, 30 (1994), կետ 11:

<sup>8</sup>Տե՛ս, Կակիչին ընդդեմ Թուրքիայի ՄԻԵԴ 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, կետ 104:

ծերբակալման մասին տեղեկացվել հարազատները/հյուպատոսությունը և փաստաբանը, երբ է ձերբակալված անձին սնունդ առաջարկվել, երբ է նա առաջին անգամ հարցաքննվել, երբ է նա տեղափոխվել այլ հաստատություն կամ ազատ արձակվել և այլն): Այս գրառումները պետք է հասանելի լինեն ձերբակալված անձի փաստաբանին»<sup>9</sup>:

## **Ձերբակալված անձանց նամակագրության և հաղորդակցման իրավունքը**

Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դրսևորման վտանգը բավական մեծանում է այն դեպքերում, երբ ձերբակալված անձը զրկված է նամակագրության և հաղորդակցման իրավունքից, այսինքն՝ այն դեպքերում, երբ նրան արգելվում է շփվել արտաքին աշխարհի, իր ընտանիքի, պաշտպանի և բժշկական օգնություն իրականացնող անձանց հետ: Որքան երկար ժամանակ անձը գտնվի նման իրավիճակում, այնքան դժվար կլինի հետագայում պարզել, թե նա ենթարկվել է, արդյոք, խոշտանգման և (կամ) վատ վերաբերմունքի, քանի որ այդ մասին վկայող ապացույցները (ֆիզիկական և (կամ) հոգեկան վնասվածքները) կարող են պարզապես անհետանալ:

Միջազգային իրավական ակտերն ուղղակի և բացարձակ ձևակերպումներով չեն արգելում ձերբակալված անձանց նամակագրության և հաղորդակցման իրավունքի սահմանափակումը, սակայն բոլոր միջազգային իրավական ակտերն աներկբա ամրագրում են, որ բժշկի դիմելու և պաշտպան ունենալու, ինչպես նաև ձերբակալման մասին երրորդ անձի տեղեկացնելու իրավունքները կարող են սահմանափակվել միայն բացառիկ դեպքերում և շատ կարճ ժամանակով:

Վերոնշյալ հանգամանքի լույսի ներքո ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն արձանագրել է, որ ձերբակալված անձի նամակագրության և հաղորդակցման իրավունքների սահմանափակումը բարենպաստ հող է ստեղծում խոշտանգումների և (կամ) վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառման համար<sup>10</sup> և ինքնին կարող է խախտել Քաղա-

<sup>9</sup> Տե՛ս, CPT/Inf/E (2002) 1, էջ 7, կետ 40:

<sup>10</sup> Տե՛ս, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի նախնական դիտարկումներ, Պերու, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add.67, կետեր 18 և 24, 1996 թվականի հուլիսի 25:

քացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշ-  
նագրի 7-րդ կամ 10-րդ հոդվածները<sup>11</sup>: Կոմիտեն նշել է, որ որպես խոշ-  
տանգման և վատ վերաբերմունքի դրսևորման անթույլատրելիության  
երաշխիք պետք է հանդես գան ձերբակալված անձի նամակագրու-  
թյան և հաղորդակցման իրավունքի սահմանափակման դեմ ձեռնարկ-  
վող միջոցառումները<sup>12</sup>:

ՀՀ ներպետական օրենսդրության մեջ ձերբակալված անձանց նա-  
մակագրության և հաղորդակցման իրավունքն ամրագրված է «Ձերբա-  
կալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի  
առանձին դրույթներում: Մասնավորապես, նշված օրենքի 18-րդ հոդ-  
վածն ընդգծում է, որ դատախազների, դատավորների, մարդու իրա-  
վունքների պաշտպանի և ձերբակալման ու կալանավորման վայրերի  
նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների հետ ձերբակալ-  
ված ու կալանավորված անձանց գրավոր հաղորդակցությունները  
պետք է անհապաղ ուղարկվեն հասցեատերերին: Օրենքի նշված  
դրույթն ամրագրում է նաև, որ նման նամակները պետք է ուղարկվեն  
փակ ծրարով՝ մեկ օրվա ընթացքում:

Ձերբակալված անձանց նամակագրության հետ կապված ծախսե-  
րի հարցը լուծված է ՀՀ կառավարության՝ 03.08.2006թ. N1543-Ն որոշ-  
մամբ, որում ամրագրված դրույթների համաձայն՝ այն դեպքում, երբ  
ձերբակալված անձը դրամական միջոցներ չունի, այդ ծախսերը  
հոգում է համապատասխան ՁՊՎ-ի վարչակազմը:

## **Պաշտպան ունենալու իրավունքը**

Ձերբակալված անձն ունի անհապաղ իրավաբանական օգնու-  
թյուն ստանալու իրավունք: Նրան պետք է հնարավորություն ընձեռվի  
խորհրդապահական կարգով տեսակցել և խորհրդակցել իր պաշտպա-  
նի հետ, նա իրավունք ունի պահանջել, որպեսզի իր պաշտպանը ներ-

---

<sup>11</sup> Տե՛ս, Ալբերտ Վոմախ Մուկոնգն ընդդեմ Կամերունի (458/1991), 1994 թվականի հուլիսի 21, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/51/D/458/1991: Էլ-Մեգրեսիսն ընդդեմ Լիբիայի Արաբական Ջամահիրայի (440/1990), 1994 թվականի մարտի 23, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/50/D/440/1990:

<sup>12</sup> Տե՛ս, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 20-րդ ընդհանուր մեկնաբանությունները, կետ 11:



կա գտնվի հարցաքննությանը, ինչպես նաև պաշտպանի իր շահերը դատարանում:

Պաշտպան ունենալու իրավունքը կարևոր երաշխիք է խոշտանգումների և (կամ) վատ վերաբերմունքի կանխարգելման համար: Այս առումով կարևորվում է պաշտպան ունենալու իրավունքի իրացման անհապաղությունը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ՝ «Յուրաքանչյուր ոք, նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա (...) բավարար չափով ժամանակ ու հնարավորություններ ունենա իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր իսկ ընտրած պաշտպանի հետ հարաբերությունների մեջ մտնելու համար»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. (...) բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, գ) պաշտպանելու իրեն անձանք կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը»:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն ընդգծել է, որ ձերբակալված անձի պաշտպանության համար անհրաժեշտ է ապահովել նրա անհապաղ և պարբերական տեսակցությունները պաշտպանի և բժշկի հետ<sup>13</sup> և՝ «որ պաշտպան ունենալու իրավունքի անհապաղությունը» հնարավորություն կտա ապահովել ձերբակալված անձանց իրավունքների առավել ամբողջական պաշտպանությունը<sup>14</sup>:

<sup>13</sup> Տե՛ս, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 20-րդ ընդհանուր մեկնաբանություն, կետ 11:

<sup>14</sup> Տե՛ս, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ, Վրաստան, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add.74, 1997 թվականի ապրիլի 9, կետ:

Պաշտպանը պետք է շփվի կալանավորված անձի հետ՝ նման շփման ամբողջական խորհրդապահությունն ապահովող պայմաններում<sup>15</sup>: Իշխանությունները պետք է ապահովեն նաև, որպեսզի պաշտպաններն իրենց պաշտպանյալների խորհրդատվությունն ու շահերի ներկայացուցչությունն իրականացնեն մասնագիտական չափանիշներին համապատասխան: Իշխանությունները պետք է ապահովեն նաև, որպեսզի պաշտպանները չենթարկվեն ահաբեկման, խոչընդոտման, հետապնդման կամ ոչ իրավաչափ միջամտության<sup>16</sup>:

Սարդու իրավունքների եվրոպական դատարանն անհանգստություն է արտահայտել այն կապակցությամբ, որ կալանավորման տևական ժամանակահատվածի ընթացքում իրավական օգնության տրամադրման մերժումը կարող է հանգեցնել արդար դատաքննության իրավունքի խախտման<sup>17</sup>: Դատարանը նաև արձանագրել է, որ պաշտպան ունենալու իրավունքը հանդիսանում է «կալանավորման տևական ժամանակահատվածի ընթացքում վատ վերաբերմունքի բացակայության հիմնական երաշխիք»<sup>18</sup> և որ նման երաշխիքների բացակայության հետևանքով կալանավորման տևական ժամանակահատվածի ընթացքում ձերբակալված անձը հայտնվում է «իրեն ձերբակալած անձանց լիիրավ իշխանության տակ»<sup>19</sup>:

CPT-ն գտնում է, որ այդ իրավունքը պետք է իրացվի ձերբակալման պահից սկսած, այսինքն՝ այն պահից, երբ անձը պարտավոր է մնալ ոստիկանության տրամադրության տակ, և որ դա ներառում է «առաջին հարցաքննության ընթացքում պաշտպանի ներկայության՝ այդ

---

<sup>15</sup>Տե՛ս, ՄԱԿ-ի Սարդու իրավունքների կոմիտեի 13-րդ ընդհանուր մեկնաբանությունները, հոդված 14 (21-րդ համագումար, 1984թ.), Սարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրի շրջանակներում կազմակերպությունների կողմից ընդունված Ընդհանուր մեկնաբանությունների ժողովածու, ՄԱԿ-ի փաստաթուղթ HR\GEN\1\Rev.1 at 14 (1994թ.), կետ 9:

<sup>16</sup> Տե՛ս, նույն տեղում:

<sup>17</sup> Տե՛ս, Սյուրեյն ընդդեմ Սիացյալ Թագավորության, ՄԻԵԴ 1996 թվականի փետրվարի 8-ի վճիռը:

<sup>18</sup> Տե՛ս, Բրաննիգանն ու Մաքբրայթն ընդդեմ Սիացյալ Թագավորության, ՄԻԵԴ 1993 թվականի մայիսի 26-ի վճիռը, կետ 66:

<sup>19</sup> Տե՛ս, Ակսոյն ընդդեմ Թուրքիայի, ՄԻԵԴ 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, կետ 83:

անձի իրավունքը»<sup>20</sup>: Եթե որևէ կոնկրետ պաշտպանի մասնակցությունն անհնարին է՝ անվտանգության նկատառումներից ելնելով, ապա CPT-ն առաջարկում է ապահովել այլ անկախ պաշտպանի մասնակցությունը, ում առումով առկա է վստահություն, որ նա չի վտանգի քրեական հանցագործության քննության շահերը<sup>21</sup>:

Իրավաբանների դերակատարության վերաբերյալ հիմնական սկզբունքները<sup>22</sup> սահմանում են, որ՝ «Կառավարություններն ապահովում են, որպեսզի բոլոր ձերբակալված կամ կալանավորված անձինք, անկախ այն հանգամանքից, թե քրեական հանցագործության կատարման մեջ նրանց մեղադրանք առաջադրվել է, թե՛ ոչ, անհապաղ, ամեն դեպքում ոչ ուշ, քան ձերբակալման կամ կալանավորման պահից 48 ժամվա ընթացքում, պաշտպան ունենան»<sup>23</sup> և որ նման անձանց «տրամադրում են համապատասխան հնարավորություններ, ժամանակ և պայմաններ իրավաբանի հետ առանց հետաձգումների կամ գրաքննության և խորհրդապահական կարգով տեսակցելու, հաղորդակցվելու և խորհրդակցելու համար»<sup>24</sup>:

ՀՀ ներպետական օրենսդրության իմաստով կասկածյալն ունի պաշտպանության իրավունք: Կասկածյալի պաշտպանության իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունքների ամբողջությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալ որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքել իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության իրավունքը, որպես կասկածյալին վերապահված իրավունքների համակցություն, կասկածյալին հնարավորություն է տալիս իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենս-

<sup>20</sup> Տե՛ս, CPT/Inf/E (2002) 1, էջ 6, կետ 38:

<sup>21</sup> Տե՛ս, նույն տեղում, էջ 9, կետ 15:

<sup>22</sup> Ընդունվել են 1990 թվականին, Հանցավորության կանխարգելման և իրավախախտների հետ վարվեցողության վերաբերյալ ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսի ժամանակ:

<sup>23</sup> Տե՛ս, 7-րդ սկզբունքը:

<sup>24</sup> Տե՛ս, 8-րդ սկզբունքը:

գրքով սահմանված կարգով նշանակված պաշտպանի միջոցով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով կասկածյալի պաշտպանության իրավունքի իրականացման փաստացի հնարավորության ապահովման պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը:

Պաշտպանության իրավունքը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է: Բացի դրանից, այն հանդիսանում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված «զեմքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք (տես՝ Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ՀՀԲԲԴ 2/0153/01/08 որոշման 25-րդ կետը):

Պաշտպանության իրավունքն արտացոլված է ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Յուրաքանչյուր ոք ունի ձեռքակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք: (...)»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կասկածյալն ունի պաշտպանության իրավունք: (...)»:

Պաշտպանության իրավունքի իրացման հետ կապված առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում *Ն. Պողոսյանի* վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերը վկայակոչված նախադեպային որոշումը: Այս որոշման մեջ դատարանը զարգացրել է «քրեական մեղադրանքի» բովանդակային ընկալման կապակցությամբ Գ.Միքայելյանի վերաբեր-

յալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը և վերջինիս, ինչպես նաև որոշման մեջ արձանագրված փաստական հանգամանքների հիման վրա դատողություն արել այն մասին, որ նախաքննության ընթացքում ապացույցների ձեռքբերման ժամանակ Ն.Պողոսյանը **փաստացի** եղել է կասկածյալ և պետք է օգտվեր այդ կարգավիճակից բխող իրավունքներից:

«Քրեական մեղադրանք» հասկացության մեկնաբանման և կասկածյալի փաստացի կարգավիճակի վերաբերյալ դիրքորոշում հայտնելու անհրաժեշտությունը ՀՀ վճռաբեկ դատարանի համար ակնհայտ դարձավ Ն.Պողոսյանի գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում, երբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը տեղեկություններ ունենալով, որ Ն.Պողոսյանն ապօրինի թմրամիջոց է իրացրել, վերջինիս քրեական գործի վարույթին ներգրավել և հարցաքննել է որպես վկա, նախազգուշացրել ակնհայտ սուտ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հարցաքննության ընթացքում առաջադրել է հանցագործության կատարման մեջ նրան մերկացնող հարցեր (տես՝ Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ՀՀՔՐԴ 2/0153/01/08 որոշման 10-րդ կետը):

Որոշման մեջ արձանագրված փաստական հանգամանքները վկայում են նաև, որ ամբաստանյալ Ն.Պողոսյանը գրել-կարդալ չի իմացել, այսինքն՝ ոչ բավարար չափով է տիրապետել քրեական դատավարության լեզվին (տես՝, Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ՀՀՔՐԴ 2/0153/01/08 որոշման 9-րդ և 11-րդ կետերը): Դատարանն արձանագրել է նաև, որ Ն.Պողոսյանի վերաբերյալ քրեական գործի նյութերում բացակայում է նրա ստորագրությամբ վավերացված որևէ փաստաթղթային հաստատում, որով վերջինս լիազորում է փաստաբան Ա.Թամազյանին իրականացնել իր շահերի պաշտպանությունը, ինչպես նաև բացակայում է Ա.Թամազյանին պաշտպան նշանակելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի որոշումը<sup>25</sup> (տես՝, Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբեր-

---

<sup>25</sup> Սույն գործով փաստաբան Ա. Թամազյանի ստորագրությունն առկա է եղել Ն. Պողոսյանի հարցաքննությունների արձանագրությունների տակ:

յալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ՀՀԶՐԴ 2/0153/01/08 որոշման 7-րդ կետը):

Հինք ընդունելով վերը շարադրված հանգամանքները՝ կարծում ենք, *Ն. Պողոսյանի* վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի եզրակացությունը կանխատեսելի էր. «(...) սույն գործով նախաքննության ընթացքում խախտվել է Ն. Պողոսյանի պաշտպանության իրավունքը, քանի որ վերջինս, փաստացի լինելով կասկածյալ, հարցաքննվել է որպես վկա: Բացի այդ, վարույթն իրականացնող մարմնի կողմից նա չի ապահովվել պաշտպանով այն դեպքում, երբ առկա էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ պաշտպանի պարտադիր մասնակցության դեպք: Սույն գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, զրկելով Ն. Պողոսյանին առաջին իսկ հարցաքննության պահից պաշտպան ունենալու և օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից պաշտպանվելու փաստացի հնարավորությունից, (...)» (տես, Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ՀՀԶՐԴ 2/0153/01/08 որոշման 29-րդ կետը):

### **Պաշտպանի մասնակցությունը վարույթին**

Պաշտպանները պարտավոր են իրենց պաշտպանյալներին խորհրդատվություն տրամադրել և ներկայացնել նրանց շահերը մասնագիտական չափանիշներին համապատասխան, պաշտպանները չպետք է ենթարկվեն ահաբեկումների, հետապնդումների կամ ոչ տեղին միջամտությունների՝ անկախ նրանից, թե ուն կողմից է այդ միջամտությունն իրականացվում, պաշտպանի գործունեությանը խոչընդոտելն անթույլատրելի է:

Իրավաբանների դերակատարության վերաբերյալ հիմնական սկզբունքները սահմանում են, որ հենց պետությունն է պատասխանատու նրա համար, որ պաշտպանները «ա) կարողանան իրականացնել իրենց մասնագիտական պարտականությունները այնպիսի պայմաններում, որոնցում նրանք ազատ կլինեն սպառնալիքներից, խոչընդոտներից, ահաբեկումներից կամ անհիմն միջամտություններից, բ) կարողա-

---

Ա. Թամազյանի ներգրավման և մասնակցության հարցերին առավել մանրամասն անդրադարձ կկատարվի ստորև:

նան հանդիպել և առանց խոչընդոտների խորհրդակցել իրենց վստահորդների հետ երկրի ներսում և դրա սահմաններից դուրս, և գ) չենթարկվեն հետապնդման և դատական, վարչական, տնտեսական կամ այլ սանկցիաների կամ նման հետապնդման կամ սանկցիաների սպառնալիքի իրենց այն գործողությունների համար, որոնք իրականացվել են մասնագիտական պարտականությունների, նորմերի և էթիկայի պահանջներին համապատասխան»<sup>26</sup>: Այն դեպքերում, երբ պաշտպանի անվտանգությունն սպառնալիքի տակ է դրվում՝ կապված նրա կողմից իր պարտականությունների կատարման հետ, ապա իշխանությունները պարտավոր են նրան պատշաճ օգնություն տրամադրել<sup>27</sup>:

Պաշտպանի կողմից իր պարտականությունների կատարումը չպետք է հանգեցնի նրա պաշտպանյալի կամ այդ պաշտպանյալի գործի հետ նրա նույնացման<sup>28</sup>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրան ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են՝

1) կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով.

2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի որևէ մեկին երաշխավորել հրավիրելու որևէ պաշտպանի:

---

<sup>26</sup> Տե՛ս, 16-րդ սկզբունքը:

<sup>27</sup> Տե՛ս, 17-րդ սկզբունքը:

<sup>28</sup> Տե՛ս, 18-րդ սկզբունքը:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից պահանջում է փաստաբանին նշանակել պաշտպան՝

1) կասկածյալի կամ մեղադրյալի միջնորդությամբ.

2) այն դեպքում, երբ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ կասկածյալը կամ մեղադրյալը պաշտպան չունի:

4. Սույն հոդվածի երրորդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի կասկածյալին և մեղադրյալին առաջարկել, որ իրենք հրավիրեն այլ պաշտպան:

5. Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանն իրավունք ունեն կասկածյալին կամ մեղադրյալին առաջարկել հրավիրելու այլ պաշտպան կամ պաշտպան նշանակել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջոցով, եթե՝

1) պաշտպանի իրավավիճակ ձեռք բերելու պահից 24 ժամվա ընթացքում պաշտպանը հնարավորություն չունի ներկայանալու կամ չի ներկայանում կասկածյալի կամ արգելանքի վերցված մեղադրյալի առաջին հարցաքննությանը.

2) պաշտպանը հնարավորություն չունի մասնակցելու քրեական գործով վարույթին 3 օրից ավելի ժամանակով:

6. Կասկածյալը և մեղադրյալը կարող են ունենալ մի քանի պաշտպաններ: Դատավարական գործողությունը, որին պաշտպանի մասնակցությունն անհրաժեշտ է, չի կարող անօրինական ճանաչվել, եթե համապատասխան կասկածյալի կամ մեղադրյալի ոչ բոլոր պաշտպաններն են մասնակցել տվյալ գործողությանը:

7. Միևնույն քրեական գործով մեկից ավելի կասկածյալները կամ մեղադրյալները կարող են ունենալ մեկ պաշտպան, բացառությամբ պաշտպանյալների շահերի միջև հակասության առկայության, ինչպես նաև այն դեպքերի, երբ վտանգ կա, որ նրանց միջև պաշտպանի շփումները կարող են խոչընդոտել արդարադատության իրականացմանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը սահմանում է նաև պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքեր: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝



- 1) այդպիսի ցանկություն հայտնել է կասկածյալը կամ մեղադրյալը.
- 2) կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր անզարգացածության, այլ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով.
- 3) կասկածյալի կամ մեղադրյալի մոտ առկա է հոգեկան հիվանդություն կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում.
- 4) կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին.
- 5) հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է.
- 6) մեղադրյալը ժամկետային ծառայության զինծառայող է.
- 7) կասկածյալների կամ մեղադրյալների շահերի միջև կան հակասություններ, և նրանցից մեկը պաշտպան ունի.
- 8) քրեական հետապնդումն իրականացվում է այն անձի նկատմամբ, որին վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարում անմեղսունակության վիճակում.
- 9) կասկածյալը կամ մեղադրյալն անգործունակ է.
- 10) դատական քննության արագացված կարգի կիրառման դեպքում.
- 11) դատարանը կիրառում է սույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան:
2. Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է՝
  - 1) կասկածյալի կամ մեղադրյալի կողմից պաշտպան ունենալու ցանկություն հայտնելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում.
  - 2) համապատասխանաբար՝ կասկածյալին ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարելու կամ մեղադրանք առաջադրելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նախատեսված դեպքերում.
  - 3) հիվանդությունը հայտնաբերելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 3-րդ կետով նախատեսված դեպքում.

4) մեղադրանք առաջադրելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում.

5) այդպիսի հանգամանքներ հայտնաբերելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքում.

6) այդպիսի հանգամանքներ հայտնաբերելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 9-րդ կետով նախատեսված դեպքում.

7) միջնորդություն ներկայացնելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 10-րդ կետով նախատեսված դեպքում.

8) սանկցիան կիրառելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում:

3. Պաշտպան ունենալու կասկածյալի կամ մեղադրյալի արտահայտած ցանկությունը քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունը կանխորոշող հանգամանք չէ, եթե նրանք ունեցել են նշանակված պաշտպան, սակայն հայտարարել են պաշտպանից հրաժարվելու մասին, որն ընդունել է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

4. Քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

5. Սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում դատարանը չի ընդունում պաշտպանից ամբաստանյալի հրաժարումը և սույն օրենսգրքով սահմանված կարգով նշանակում է պաշտպան կամ պահպանում է նշանակված պաշտպանի լիազորությունները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ «Իր իրավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ սույն օրենսգրքով իրավասու մարմնի որոշումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պաշտպանից հրաժարվելը նշանակում է կասկածյալի կամ մեղադրյալի մտադրությունը՝ իր պաշտպանությունն իրականացնել

առանց որևէ պաշտպանի իրավաբանական օգնության: Պաշտպանից հրաժարվելու մասին կասկածյալի կամ մեղադրյալի հայտարարությունն արտացոլվում է արձանագրության մեջ:

2. Պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան: Չի ընդունվում պաշտպանից հրաժարումը, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ: Սույն օրենսգրքի 69 հոդվածի առաջին մասի 2-5-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները:

3. Պաշտպանից հրաժարվելու պահից կասկածյալը և մեղադրյալը համարվում են իրենց պաշտպանությունն ինքնուրույն իրականացնող, որը տվյալ դեպքում իրավունքներից չի զրկում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից հետազայում նշանակված կամ քրեական գործով վարույթին մասնակցելուց չազատված պաշտպանին թույլատրել մասնակցելու վարույթին:

4. Պաշտպանից հրաժարված կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունի քրեական գործով վարույթի ցանկացած պահի փոխել իր դիրքորոշումն այդ առիթով: Տվյալ դեպքում, նոր պաշտպանի մասնակցությունը հիմք չէ գործի վարույթը վերսկսելու համար»:

Քրեական դատավարությունում պաշտպանի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածում:

Քրեական դատավարությունում պաշտպանի կարգավիճակի և դատավարությանը նրա մասնակցության վերաբերյալ ՀՀ ներպետական օրենսդրության մեջ առկա կարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս հետևություն անել այն մասին, որ օրենսդիրը հստակ սահմանել է գործով վարույթին պաշտպանի հրավիրման ընթացակարգը, այն է՝ վարույթն իրականացնող մարմինը կասկածյալի (մեղադրյալի) կամ նրա օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի (մեղադրյալի) խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց

հրավերով ներկայացած փաստաբանին ներգրավում է որպես պաշտպան: Այս դեպքում պաշտպանին վարույթ ներգրավելու հիմքը կասկածյալի (մեղադրյալի) ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումն է: Եթե կասկածյալը (մեղադրյալը) չունի պաշտպան և վարույթն իրականացնող մարմնին չի ներկայացնում որևէ փաստաբանի, սակայն պաշտպանի մասնակցությունը պարտադիր է (առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված հիմքերից մեկը), ապա այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը ՀՀ փաստաբանների պալատից պահանջում է որևէ փաստաբանի նշանակել պաշտպան: ՀՀ փաստաբանների պալատի նշանակումից հետո պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է պաշտպան նշանակելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի որոշումը:

ՀՀ քրեադատավարական օրենքում առկա այս կարգավորումը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված պահանջն այն մասին, որ՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի որևէ մեկին երաշխավորել հրավիրելու որևէ պաշտպանի», վկայում են, որ պաշտպանի ընտրության և նշանակման իրավասությունը քննիչը չունի, պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերում պաշտպանը նշանակվում է ՀՀ փաստաբանների պալատի կողմից:

*Ն. Պողոսյանի* վերաբերյալ նախադեպային որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը կարծիք է արտահայտել այն մասին, որ՝ «(...) ՀՀ քրեադատավարական օրենքում նման պահանջի և ընթացակարգի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել կասկածյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ դրանով իսկ նպաստելով քրեական գործի արդարացի քննությանն ու լուծմանը, ինչպես նաև բացառել վարույթն իրականացնող մարմնի կողմից իր նախաձեռնությամբ որևէ մեկին որպես պաշտպան երաշխավորելը» (տե՛ս, Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ՀՀԲՐԴ 2/0153/01/08 որոշման 27-րդ կետը):

Անդրադառնալով նշված որոշման մեջ ամբաստանյալի պաշտպանի ներգրավման հետ կապված հարցերին՝ հարկ ենք համարում ընդգծել, որ որոշման մեջ արձանագրված փաստական հանգամանքները վկայում են, որ փաստաբան Ա. Թամազյանը սույն գործի վարույթին

ներգրավվել է 2008 թվականի օգոստոսի 27-ից, մինչդեռ քրեական գործի նյութերում բացակայում է Ն. Պողոսյանի ստորագրությամբ վավերացված որևէ փաստաթղթային հաստատում, որով վերջինս լիազորում է փաստաբան Ա. Թամազյանին իրականացնել իր շահերի պաշտպանությունը, ինչպես նաև բացակայում է Ա. Թամազյանին պաշտպան նշանակելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի որոշումը:

Այս հանգամանքի հիման վրա հետագայում ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 2009 թվականի օգոստոսի 28-ի թիվ 19/2-Ա որոշմամբ փաստաբան Ա. Թամազյանը կարգապահական պատասխանատվության է ենթարկվել՝ սույն գործի մախաքննության ընթացքում Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի խախտում թույլ տալու համար:

Վերոշարադրյալի լույսի ներքո, կարծում ենք, ՀՀ վճռաբեկ դատարանի եզրակացությունը կանխատեսելի էր. «(...) սույն գործով փաստաբան Ա.Թամազյանի մասնակցությունը կրել է անօրինական բնույթ, քանի որ վերջինս վարույթին ներգրավվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգի խախտմամբ»: Բացի դրանից, ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է նաև, որ Ն. Պողոսյանի գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում չպարզաբանված է մնում այն հարցը, թե փաստաբան Ա. Թամազյանն ի վերջո ինչպես է ներգրավվել սույն գործի վարույթին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ (...) ստորադաս դատարանը պետք է քննության առնի նաև այն հարցը, թե սույն գործով փաստաբան Ա. Թամազյանի մասնակցության առումով արդյո՞ք առկա է եղել քննիչի երաշխավորությունը (Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ՀՀԲԲԴ 2/0153/01/08 որոշման 28-րդ և 30-րդ կետերը):

## **Բժշկի դիմելու իրավունքը**

Ձերբակալված անձը պետք է բժշկական հետազոտության ենթարկվի ձերբակալումից հետո որքան հնարավոր է շուտ: Նման հետազոտություններ պետք է իրականացվեն անձին անազատության մեջ պահելու բոլոր փուլերում: Ձերբակալված անձը լրացուցիչ իրավունք ունի հետազոտության ենթարկվել իր ընտրած բժշկի կողմից:

Բժշկական հետազոտությունը պետք է իրականացվի կողմնակի անձանց, այդ թվում համապատասխան պետական մարմինների ներկայացուցիչների լսողության և, ցանկալի է, նաև տեսողության դաշտից դուրս: Յուրաքանչյուր բժշկական հետազոտության արդյունքները, ինչպես նաև ազատությունից զրկված անձի համապատասխան հայտարարությունները և բժշկի եզրակացությունները պետք է պաշտոնապես արձանագրվեն բժշկի կողմից: Բժշկի կողմից կազմված վերոնշյալ արձանագրությունները պետք է հասանելի լինեն ինչպես անազատության մեջ պահվող անձին, այնպես էլ նրա պաշտպանին:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն արձանագրել է, որ ազատությունից զրկված անձանց պաշտպանության սկզբունքից բխում է յուրաքանչյուր նման անձի անհապաղ և պարբերաբար բժշկի դիմելու իրավունքի ապահովման անհրաժեշտությունը<sup>29</sup>:

Ցանկացած ձևով ձերբակալված կամ ազատազրկված անձանց պաշտպանության վերաբերյալ սկզբունքները<sup>30</sup> ամրագրում են, որ՝ «Ձերբակալված կամ անազատության մեջ գտնվող անձին ձերբակալման կամ ազատազրկման վայր բերվելուց կարճ ժամանակ հետո տրամադրվում է պատշաճ բժշկական հետազոտություն անցնելու հնարավորություն, դրանից հետո բժշկական սպասարկում և բուժում նրան տրամադրվում է ամեն անգամ, երբ դրա անհրաժեշտությունն առաջանում է: Բժշկական սպասարկումը և բուժումը տրամադրվում են անվճար»<sup>31</sup>: Ձերբակալված անձինք իրավունք ունեն պահանջելու կրկնակի բժշկական եզրակացության կազմում իրենց ընտրած բժշկի կողմից և իրավունք ունեն ստանալու իրենց հիվանդության պատմությունը<sup>32</sup>:

ՄԱԿ-ի կողմից ընդունված՝ կալանավորված անձանց հետ վարվեցողության նվազագույն չափանիշները սահմանում են, որ ձերբակալված կամ կալանավորված անձինք, ովքեր կարիք ունեն հատուկ բուժ-

---

<sup>29</sup> Տե՛ս, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 20-րդ ընդհանուր կարգի դիտարկումները, կետ 11:

<sup>30</sup> Ընդունվել են 1988 թվականի դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 43/173 բանաձևով:

<sup>31</sup> Տե՛ս, 24-րդ սկզբունքը:

<sup>32</sup> Տե՛ս, 25-րդ սկզբունքը:

ման, պետք է նման բուժում անցնելու համար տեղափոխվեն մասնագիտացված բժշկական հաստատություններ կամ հիվանդանոցներ<sup>33</sup>:

CPT-ն ընդգծել է, որ եթե անգամ ձերբակալված անձանց բուժման համար կան պետության կողմից նշանակված բժիշկներ, միևնույն է, վատ վերաբերմունքի կանխարգելման անհրաժեշտությունից ելնելով պետք է, ի լրումն դրա, ձերբակալված անձանց տրամադրել իրենց ընտրած բժշկին դիմելու իրավունք<sup>34</sup>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ այն չի նախատեսում բժշկի դիմելու իրավունքը սահմանող որևէ էական նորմ:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է միայն, որ՝ «Ոստիկանությունը պարտավոր է ձերբակալված անձանց իրական հնարավորություն ընձեռել օգտվելու իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից, ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում, տեղյակ պահել նրանց հարազատներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմին՝ նրանց գտնվելու վայրի մասին: Անհրաժեշտության դեպքում միջոցներ են ձեռնարկվում նրանց բժշկական և (կամ) այլ օգնություն ցույց տալու, ինչպես նաև ձերբակալման կապակցությամբ անձի կամ նրա ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու ուղղությամբ»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան: Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

<sup>33</sup> Տե՛ս, Նվազագույն չափանիշային կանոնների 22(2)-րդ կանոնը:

<sup>34</sup> Տե՛ս, CPT/Inf/E (2002) 1, էջ 6, կետ 36 և հավելված 1:

Ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերն ապահովում են ձերբակալված կամ կալանավորված անձանց առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջների կատարումը:

Կալանավորվածներին պահելու վայրում պետք է աշխատի ընդհանուր մասնագիտացում ունեցող առնվազն մեկ բժիշկ:

Մասնագիտացված բուժօգնության կարիք ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը փոխադրվում է հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն: Ձերբակալված և կալանավորված անձանց բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական, օգնություն ցույց տալու, նրանց բուժհաստատություններում պահելու, ինչպես նաև բուժսպասարկման գործում այդ հաստատությունների աշխատողներին ներգրավելու կարգը սահմանում է լիազորված մարմինը:

Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության դաշտից դուրս: Բուժզննության արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում, և այդ մասին իրազեկվում է հիվանդը, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմինը:

Ձերբակալված կամ կալանավորված անձի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է ձերբակալված կամ կալանավորված անձի մերձավոր ազգականներին, քրեական վարույթն իրականացնող մարմնին և հսկողություն իրականացնող դատախազին:

Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում համապատասխան հիմնարկի վարչակազմն այդ մասին անհապաղ հայտնում է վերադաս մարմնին, որն էլ տեղեկացնում է շահագրգիռ գերատեսչություններին, այդ թվում՝ համապատասխան պետության



դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործողությունները կատարելուց հետո աճյունը հանձնվում է այն պահանջող անձին՝ նախապատվությունը տալով մերձավոր ազգականներին: Եթե աճյունը երեք օրվա ընթացքում չի պահանջվել, հուղարկավորությունը կատարվում է պետության հաշվին:

Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ ծանր հիվանդություն հայտնաբերելու դեպքում, որը կարող է հանգեցնել նրա հոգեկան խանգարման կամ մահվան, համապատասխան հիմնարկի պետը բժշկական եզրակացության հիման վրա միջնորդում է քրեական վարույթն իրականացնող մարմնին և հսկողություն իրականացնող դատախազին՝ հարկադրանքի միջոցը վերացնելու կամ փոխելու վերաբերյալ:

Ձերբակալված կամ կալանավորված անձը պետք է հնարավորություն ունենա մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում բավարարել իր սանիտարահիգիենիկ պահանջները: Նրա անձնական հիգիենայի պահպանման պայմանները և կանոնները սահմանվում են ներքին կանոնակարգով:

Արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին ենթարկել որևէ բժշկական կամ գիտական փորձի՝ անկախ վերջինիս համաձայնության»:

ՀՀ կառավարության՝ 05.06.2008 թվականի N574-Ն որոշման 13-րդ կետի համաձայն՝ «Ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի, հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաև ձերբակալված անձի ցանկությամբ ընտրված բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊԿ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջվել՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում՝ համաձայն N12 ձևի, անձնական գործում և դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին»:

## **Ձերբակալված անձի հարցաքննության ընդհանուր պայմանները**

«Հարցաքննություն» եզրույթը վերաբերելի է ոչ միայն այն ժամանակահատվածին, երբ ձերբակալված անձին օրենքով սահմանված կարգով հարցեր են տրվում, այլև այդ գործընթացին նախորդող և հաջորդող ժամանակահատվածներին, երբ ձերբակալված անձի նկատմամբ ֆիզիկական և հոգեկան ճնշում է գործադրվում՝ նպատակ ունենալով ապակողմնորոշել նրան և դրդել զիջումների գնալ հետագայում՝ օրենքով սահմանված կարգով իրականացվող հարցաքննությունների ժամանակ:

ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիայի 11-րդ հոդվածն ամրագրում է, որ՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում խոշտանգումների որևէ դեպք թույլ չտալու համար պարբերաբար քննարկում է հարցաքննությանն առնչվող կանոնները, հրահանգները, մեթոդներն ու պրակտիկան, ինչպես նաև ձերբակալության պայմաններն ու այն անձանց հանդեպ վերաբերմունքը, ովքեր ենթարկվել են ցանկացած ձևի ձերբակալության, կալանքի կամ բանտարկության»:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն արձանագրել է, որ «հարցաքննությունների իրականացման կանոնների, հրահանգների, մեթոդների և պրակտիկայի, ինչպես նաև կալանքի տակ պահելու պայմանների և ցանկացած ձևով ձերբակալված անձանց ցուցաբերվող վերաբերմունքի նկատմամբ մշտական հսկողությունը և դրանց համակարգային վերանայումը հանդիսանում են խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման արդյունավետ միջոց»<sup>35</sup>:

Կոմիտեն նաև սահմանել է, որ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի (ե) կետը<sup>36</sup> պետք է հասկանալ այն իմաստով, որ մինչդատական

<sup>35</sup> Տե՛ս, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 20-րդ ընդհանուր մեկնաբանությունները, կետ 11:

<sup>36</sup> Սույն հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման

վարույթն իրականացնող մարմինները չպետք է ուղղակի կամ անուղղակի ֆիզիկական կամ հոգեկան ճնշում գործադրեն մեղադրյալի վրա՝ նպատակ ունենալով նրանից ինքնախոստովանություն ստանալ: *Afortiori* անթույլատրելի է ինքնախոստովանություն ստանալու նպատակով մեղադրյալի նկատմամբ այնպիսի վերաբերմունք ցուցաբերել, որը հակասում է Դաշնագրի 7-րդ<sup>37</sup> հոդվածին»<sup>38</sup>:

CPT-ի կարծիքով՝ «անհրաժեշտ է մշակել հարցաքննությունների իրականացման պարզ և հստակ կանոններ կամ հրահանգներ: Ձերբակալված անձը պետք է տեղեկացվի իր հարցաքննության իրականացմանը ներկա գտնվող բոլոր անձանց ինքնության մասին: Պետք է լինեն հստակ կանոններ, որոնք կսահմանեն հարցաքննության թույլատրելի տևողությունը, հանգստի և ընդմիջումների ժամանակահատվածները, այն վայրերը, որտեղ կարող են իրականացվել հարցաքննությունները, ինչպես նաև այն, թե արդյոք ձերբակալված անձը պետք է իրեն առաջադրվող հարցերին պատասխանի կանգնած և ինչպես պետք է իրականացվի թմրամիջոցների կամ ալկոհոլի ազդեցության տակ գտնվող անձանց հարցաքննությունը: Անհրաժեշտ է նաև գրառումներ կատարել, որոնցում արտացոլված կլինի, թե երբ է սկսվել և երբ է ավարտվել հարցաքննությունը, ինչ խնդրանքներ է ներկայացրել ձերբակալված անձը հարցաքննության ժամանակ, ինչպես նաև տեղեկության այն մասին, թե ովքեր են ներկա գտնվել հարցաքննությանը»<sup>39</sup>:

---

վրա (...) հարցաքննել նրան հակացուցող վկաներին կամ իրավունք ունենալ, որ այդ վկաները հարցաքննվեն, և ունենալ իր վկաներին կանչելու և հարցաքննելու իրավունք՝ այն նույն պայմաններով, որ գոյություն ունեն նրան հակացուցող վկաների համար»:

<sup>37</sup> Սույն հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ էլ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, ոչ մի անձ չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվի բժշկական կամ գիտական փորձերի»:

<sup>38</sup> Տե՛ս, Կելլին ընդդեմ Յամայկայի, (253/1987), 1991 թվականի ապրիլի 8: ՄԱԿ-ի Սարդու իրավունքների կոմիտեի զեկույց, (A/46/40), 1991թ.: Կոնտերիսն ընդդեմ Ուրուգվայի, (139/1983), 1985 թվականի հուլիսի 17, 2 Sel. Dec. 168: Էստրելլան ընդդեմ Ուրուգվայի, (74/1980), 1983 թվականի մարտի 29, 2 Sel. Dec. 93:

<sup>39</sup> Տե՛ս, CPT/Inf/E (2002) 1, էջ 7, կետ 39:

Ղատական հետապնդում իրականացնող անձանց դերակատարության վերաբերյալ ՄԱԿ-ի ղեկավար սկզբունքները<sup>40</sup> սահմանում են՝ «Երբ ղատական հետապնդում իրականացնող անձինք ձեռք են բերում կասկածյալի մեղքը հիմնավորող ապացույցներ, որոնք, ինչպես հայտնի է կամ ողջամտորեն կարող է հայտնի լինել նրանց, որ ձեռք են բերվել անօրինական մեթոդներով, մասնավորապես՝ մարդու իրավունքների կոպիտ խախտման, հատկապես խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ մարդու այլ իրավունքների խախտման արդյունքում, հրաժարվում են օգտագործել այդ ապացույցները յուրաքանչյուր անձի նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ապացույցներն օգտագործվում են նման մեթոդներ կիրառած անձի դեմ, (...)»<sup>41</sup>:

Ցանկացած ձևով ձերբակալված կամ ազատազրկված անձանց պաշտպանության վերաբերյալ սկզբունքներն ամրագրում են, որ՝ «Արգելվում է չարաշահել ձերբակալված կամ անազատության մեջ գտնվող անձի կարգավիճակը՝ նպատակ ունենալով հարկադրել նրան ինքնախոստովանական ցուցմունք տալ, ինքնախոստովանության այլ ձևեր դրսևորել կամ ցուցմունք տալ ցանկացած այլ անձի դեմ (...): Ձերբակալված ոչ մի անձ չպետք է հարցաքննության ժամանակ ենթարկվի բռնության, սպառնալիքի կամ այնպիսի մեթոդների, որոնք խաթարում են որոշում կայացնելու կամ դատողություններ անելու նրա ունակությունը»<sup>42</sup>:

Ղատախազները չպետք է մասնակցեն այնպիսի հարցաքննությունների, որոնց ընթացքում կիրառվում են ինքնախոստովանության կամ տեղեկությունների ստացման հարկադրական մեթոդներ: Նրանք պետք է նաև համոզվեն, որ նման մեթոդներ չեն կիրառվում իրավապահ մարմինների կողմից այնպիսի ապացույցներ ձեռք բերելու նպատակով, որոնք հնարավորություն կտան կասկածյալին հանցագործութե-

<sup>40</sup> Ընդունվել է Հանցավորության կանխման և իրավախախտների հետ վարվեցողության վերաբերյալ ՄԱԿ-ի 8-րդ կոմգրեսի ժամանակ (27 օգոստոսի-7 սեպտեմբերի 1990 թվական: Կուբա, Հավանա):

<sup>41</sup> Ղատական հետապնդում իրականացնող անձանց դերակատարության վերաբերյալ ՄԱԿ-ի ղեկավար սկզբունքներ, 16-րդ սկզբունք:

<sup>42</sup> Տե՛ս, 21-րդ սկզբունքը:

յան կատարման մեջ մեղադրանք առաջադրել: Ռատախազը պետք է համոզված լինի, որ իրեն ներկայացվող յուրաքանչյուր տեղեկություն ձեռք է բերվել առանց ֆիզիկական և (կամ) հոգեկան հարկադրանքի, նա պետք է նաև ուշադրություն դարձնի խոշտանգումների և (կամ) վատ վերաբերմունքի վերաբերյալ բոլոր հայտարարություններին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հրաժարվի ձերբակալված կամ կալանավորված անձին տեղափոխել այն վայր, որտեղ նա կարող է ենթարկվել կամ ենթարկվել է նման վերաբերմունքի:

Հարցաքննությունների ժամանակ խոշտանգումների և վատ վերաբերմունքի կիրառման վտանգը մեծ է այն դեպքերում, երբ մինչդաստական վարույթն իրականացնող մարմինները ձգտում են մեղադրանքը կառուցել անազատության մեջ գտնված ժամանակ անձից ձեռք բերված ցուցումներնրի վրա: Այս վտանգն առավել ակնհայտ է դառնում այն դեպքերում, երբ չի ապահովվում ազատությունից զրկված անձի պաշտպանի մասնակցությունը նրա հարցաքննություններին:

Բոլոր դեպքերում անհրաժեշտ է սահմանել և պահպանել հարցաքննությունների իրականացման հստակ ընթացակարգեր, որոնք զերծ կլինեն հարցաքննվող անձի նկատմամբ չարաշահումների և վատ վերաբերմունքի դրսևորումներից: Այս առումով հատկապես կարևոր դերակատարություն ունի բոլոր հարցաքննությունների արձանագրումը, որպեսզի հարցաքննության ժամանակ ստացված տեղեկությունը հասանելի լինի դատարանին գործի դատական քննության փուլում:

Անփոփելիվ վերը շարադրված մոտեցումներն ու պահանջները՝ կարծում ենք, կարելի է առանձնացնել հարցաքննությունների իրականացման հետևյալ նվազագույն պահանջները.

- հարցաքննությունները պետք է իրականացվեն միայն դրա համար հատուկ նախատեսված վայրերում, իսկ բոլոր այն տեղեկությունները, որոնք ձերբակալված անձից ձեռք կբերվեն վերոնշյալ վայրերից դուրս և հետագայում չեն հաստատվի օրենքով սահմանված կարգով և օրենքով դրա համար հատուկ նախատեսված վայրերում իրականացված հարցաքննությունների ժամանակ, դատարանի կողմից չպետք է դիտվեն որպես թույլատրելի ապացույց,
- ձերբակալված անձը պետք է իրավունք ունենա, որ իր յուրաքանչյուր հարցաքննությանը մասնակցի իր պաշտպանը,

- յուրաքանչյուր հարցաքննությունն սկսելուց առաջ ձերբակալված անձը պետք է տեղեկացվի հարցաքննությանը ներկա բոլոր անձանց ինքնության մասին,
- հարցաքննությանը ներկա բոլոր անձանց անուններն ու ազգանունները պետք է գրանցվեն մշտական գրանցամատյանում, որում պետք է նշվեն նաև հարցաքննության սկիզբն ու ավարտը, ինչպես նաև ձերբակալված անձի կողմից հարցաքննության ընթացքում ներկայացված բոլոր խնդրանքները,
- ձերբակալված անձը պետք է տեղեկացվի հարցաքննության թույլատրելի տևողության, հարցաքննությունների ընթացքում հանգստի և ընդմիջումների ժամանակահատվածների, հարցաքննությունների իրականացման թույլատրելի վայրերի մասին, ինչպես նաև այն մասին, թե նա պարտավոր է, արդյոք, կանգնել, երբ նրան հարց են տալիս: Բոլոր այս ընթացակարգերը պետք է սահմանված լինեն օրենքով և պետք է անվերապահորեն պահպանվեն,
- արգելվում է կապել հարցաքննվող անձանց աչքերը կամ ծածկել նրանց գլուխները, քանի որ դա կարող է հանգեցնել նրանց խոցելիության և ինքնից հանդիսանալ խոշտանգում կամ վատ վերաբերմունք: Այս արգելքը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի առկայության դեպքում անհամեմատ բարդ կլինի հայտնաբերել դրա համար մեղավոր անձին, քանի որ խոշտանգված կամ վատ վերաբերմունքի ենթարկված անձը չի կարողանա կամ կոժվարանա նկարագրել նրան,
- բոլոր հարցաքննությունները պետք է արձանագրվեն (էլեկտրոնային կամ այլ եղանակով), ինչպես նաև ձերբակալված անձը և (կամ) նրա պաշտպանը պետք է իրավունք ունենան ստանալ այդ արձանագրությունները:

Հարցաքննությունների արձանագրման էլեկտրոնային եղանակներն էականորեն օգնում են նվազեցնել խոշտանգումների և վատ վերաբերմունքի կիրառման վտանգը, այդ մեթոդներն իշխանությունների կողմից կարող են օգտագործվել նաև որպես սուտ, անհիմն մեղադրանքներից պաշտպանության երաշխիք: Վերջինիս ապահովման նպատակով անհրաժեշտ է հարցաքննության էլեկտրոնային (ծայնային) արձանագրության մեկ օրինակը հարցաքննվող անձի ներկայությամբ կնքել և պահել, իսկ երկրորդը կցել գործին,

- իշխանությունները պետք է մշակեն և պարբերաբար վերանայեն թմրամիջոցների, ալկոհոլի կամ դեղամիջոցների ազդեցության

տակ կամ շոկային իրավիճակում գտնվող անձանց հարցաքննության իրականացման ընթացակարգերը,

- հատուկ երաշխիքներ պետք է նախատեսվեն խոցելի անձանց (օրինակ՝ կանանց, անչափահասների, հոգեկան խանգարում ունեցող անձանց և այլն) հարցաքննության ժամանակ:

Վերոնշյալ պահանջների անշեղ կատարումը հնարավորություն կտա երաշխավորել խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ սահմանադրական և օրենսդրական արգելքի պահպանումը, ինչպես նաև վերջինիս նկատմամբ համապատասխան վերահսկողություն ապահովել:

## Կալանավորում

Կալանավորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է: Այն պետք է ընտրվի միայն այն ժամանակ, երբ խափանման մյուս միջոցները քրեական գործի վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց թվում առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը (տե՛ս, Արամ Սեյրանի ճուղությունի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի ՎԲ-132/07 որոշումը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է

- 1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.
- 2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գոր-

ծի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

- 3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.
- 4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.
- 5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: (...)»:

Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանը դեռևս 2007 թվականին, հիմնվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ հոդվածի 3-րդ մասի վրա, ինչպես նաև որպես ուղեցույց ունենալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Կաբալերոն ընդդեմ Միացյալ Թագավորության* (Caballero v. THE UNITED KINGDOM, Application no. 32819/96, 08.02.2000թ.) և *Էս Բի Սին ընդդեմ Միացյալ Թագավորության* (S.B.C. v. THE UNITED KINGDOM, Application no. 39360/98, 19.06.2001թ.) գործերով վճիռները, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ՝ «(...) ՀՀ իրավասու դատարանները, անկախ անձին մեղսագրված հանցագործության ծանրության աստիճանից, լիազորված են քննարկել մեղադրյալին գրավի կիրառմամբ կալանքից ազատ արձակելու հնարավորության հարցը» (տես, Տարոն Ռազմիկի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հուլիսի 13-ի ՎԲ-115/07 որոշումը):

## **Անձին կալանքի տակ պահելու պայմանները**

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն արձանագրել է, որ անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ այնպիսի վերաբերմունքը, որը համապատասխանում է նրանց արժանապատվության հարգմանը, հանդիսանում է այն հիմնական չափանիշը, որը ենթակա է



համընդհանուր կիրառության: Պետությունները չեն կարող վկայակոչել նյութական միջոցների բացակայությունը կամ ֆինանսական դժվարությունները որպես անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ անմարդկային վերաբերմունքի արդարացում: Պետությունները պարտավոր են բոլոր ձերբակալված և կալանավորված անձանց ապահովել նրանց հիմնական պահանջմունքները բավարարող ծառայություններով<sup>43</sup>:

Պատշաճ սնունդ և հանգստի վայրեր չտրամադրելը հանդիսանում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 10-րդ հոդվածի<sup>44</sup> խախտում, եթե միայն այն պայմանավորված չէ բացառիկ հանգամանքներով<sup>45</sup>: Կոմիտեն նաև նշել է, որ անձին միայնակ երկարատև անազատության մեջ պահելը կարող է հանգեցնել խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելքի խախտման,

---

<sup>43</sup> Տե՛ս, Կելլին ընդդեմ Յամայկայի, (253/1987), 1991 թվականի ապրիլի 8, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի զեկույց, (A/46/40), 1991թ.: Պարկանին ընդդեմ Յունգրիայի (410/1990), 1992 թվականի հուլիսի 27: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի զեկույց, (A/47/40), 1992թ.:

<sup>44</sup> Սույն հոդվածի համաձայն՝

«1. Ազատագրված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք:

2. ա/ այն դեպքերում, երբ բացակայում են բացառիկ հանգամանքները, մեղադրյալները տեղավորվում են դատապարտյալներից առանձին և նրանց տրվում է չդատապարտված անձանց վերաբերյալ նրանց կարգավիճակին համապատասխանող առանձին ռեժիմ:

բ/ անչափահաս մեղադրյալներն առանձնացվում են չափահասներից և ամենակարճ ժամկետում հասցվում են դատարան՝ որոշում կայացնելու համար:

3. Պատժական համակարգով ձերբակալվածների համար նախատեսվում է ռեժիմ, որի էական նպատակը նրանց ուղղումն է և սոցիալական վերադաստիարակությունը: Անչափահաս իրավախախտողները առանձնացվում են չափահասներից, և նրանց տրվում է իրենց տարիքին ու իրավական կարգավիճակին համապատասխանող ռեժիմ»:

<sup>45</sup> Տե՛ս, Կելլին ընդդեմ Յամայկայի, (253/1987), կետ 5:

որը նախատեսված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածում<sup>46</sup>:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն պետություններին մատնանշել է ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու բոլոր վայրերից բոլոր այն սարքավորումների և միջոցների դուրսբերման անհրաժեշտության մասին, որոնք կարող են օգտագործվել խոշտանգումների և վատ վերաբերմունքի դրսևորման համար<sup>47</sup>:

Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեն առաջարկել է պետություններին դադարեցնել էլեկտրաշոկային գոտիների և զսպող բազկաթռների՝ որպես ազատությունից զրկված անձանց հանդարտացման մեթոդների կիրառումը, քանի որ դա «գրեթե անխուսափելիորեն» հանգեցնում է դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դրսևորման<sup>48</sup>:

Ցանկացած ձևով ձերբակալված կամ ազատագրված անձանց պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի սկզբունքներն արձանագրում են, որ յուրաքանչյուր ձերբակալված կամ ազատագրված անձ իրավունք ունի իր նկատմամբ վերաբերմունքի բարելավման վերաբերյալ խնդրանք ներկայացնել կամ բողոքել վատ վերաբերմունքի դեմ: Ղեկավարությունը պետք է արագ արձագանքի, և խնդրանքի կամ բողոքի մերժման դեպքում այն կարող է բողոքարկվել դատարան կամ վերահսկողություն իրականացնող մարմին<sup>49</sup>:

Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն չափանիշներն ամրագրում են, որ անվտանգության այնպիսի միջոցները, ինչպիսիք ձեռնաշղթաներն են, շղթաները, ոտնաշղթաները կամ զսպաշապիկները, ձերբակալված կամ ազատագրված անձանց նկատմամբ կարող են կիրառվել միայն անվտանգության նկատառումներից ելնելով և ոչ թե որպես պատիժ<sup>50</sup>: Անվտանգության միջոցների

---

<sup>46</sup> Տե՛ս, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 20-րդ ընդհանուր մեկնաբանությունները, կետ 6:

<sup>47</sup> Տե՛ս, նույն տեղում, կետ 11:

<sup>48</sup> Տե՛ս, Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի եզրակացություններ և հանձնարարականներ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 2000 թվականի մայիսի 15, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/44, կետ 180 (c):

<sup>49</sup> Տե՛ս, 33-րդ սկզբունքը:

<sup>50</sup> Տե՛ս, 33-րդ կանոնը:

կիրառման դեպքում դրանց կիրառման ժամկետը չպետք է գերազանցի խիստ անհրաժեշտ ժամանակը, անվտանգության միջոցների կիրառման մեթոդները և միջոցները սահմանվում են քրեակատարողական հիմնարկների կենտրոնական մարմնի կողմից<sup>51</sup>:

Կալանավորված անձի նկատմամբ ուժ կարող է կիրառվել միայն խիստ անհրաժեշտության դեպքում, հիմնարկում անվտանգության և կարգի պահպանման նպատակով, փախուստի, օրինական կարգի դեմ ոտնձգելու կամ անձնական անվտանգության նկատմամբ սպառնալիքի առկայության դեպքերում: Համենայն դեպս, յուրաքանչյուր դեպքում ուժի կիրառումը թույլատրելի է միայն այն ժամանակ, երբ ոչ ուժային մեթոդներն անարդյունավետ են<sup>52</sup>:

CPT-ն ընդգծել է, որ «կալանավորված անձը, ում նկատմամբ անվտանգության միջոցներ են կիրառվել, պետք է ամհապաղ բժշկական զննություն անցնելու և, անհրաժեշտության դեպքում, բժշկական օգնություն ստանալու իրավունք ունենա: Այն բացառիկ դեպքերում, երբ անհրաժեշտ է անվտանգության այնպիսի միջոցներ կիրառել, որոնք կապված են ֆիզիկական ներգործության հետ, կալանավորված անձը պետք է գտնվի անընդհատ հսկողության տակ: Անվտանգության միջոցները պետք է վերացվեն առաջին իսկ հնարավորության դեպքում, դրանք երբևէ չպետք է կիրառվեն որպես պատժի տեսակ: Կալանավորված անձանց նկատմամբ ուժի կիրառման յուրաքանչյուր դեպք պետք է արձանագրվի գրանցամատյանում»<sup>53</sup>:

Իրավակարգի պահպանության նպատակով պաշտոնատար անձանց կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքներն ամրագրում են, որ ուժ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ մնացած բոլոր միջոցներն անարդյունավետ են<sup>54</sup>, բացի դրանից, անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր միջոցները վնասի և մարմնական վնասվածքների նվազեցման նպատակով, առաջին իսկ հնարավորության դեպքում տուժած անձանց պետք է բժշկական օգնություն ցուցաբերվի<sup>55</sup>:

---

51 Տե՛ս, 34-րդ կանոնը:

52 Տե՛ս, 54-րդ կանոնը:

53 Տե՛ս, CPT/Inf/E (2002) 1, էջ 19, կետ 53(2):

54 Տե՛ս, 4-րդ սկզբունքը:

55 Տե՛ս, 5-րդ սկզբունքը:

Իրավապահ մարմինները հրազեն կարող են օգտագործել միայն այն սպանության կամ լուրջ վնասվածքի անխուսափելի սպառնալիքից պաշտպանվելու, կյանքի համար լուրջ վտանգ ներկայացնող հանցագործության կանխարգելման, այդպիսի վտանգ ներկայացնող անձի ձերբակալման կամ նրա փախուստը կանխելու նպատակով և միայն այն դեպքում, երբ նվազ ծայրահեղ միջոցները ոչ արդյունավետ են: Խոցելու նպատակով կրակելը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ դա բացարձակ անհրաժեշտ է կյանքի պաշտպանության համար<sup>56</sup>:

Կալանավորված անձանց հետ վարվեցողության հիմնական սկզբունքներն ամրագրում են, որ՝ պետությունները պետք է ջանքեր գործադրեն հրաժարվելու համար մենախցում պահելը որպես պատժամիջոց կիրառելուց կամ գոնե սահմանափակեն դրա կիրառումը<sup>57</sup>:

Կալանավորված անձանց հետ վարվեցողության նվազագույն չափանիշային կանոնները սահմանում են, որ. «Ֆիզիկական պատիժները, մութ խցում կալանավորելը և դաժան, անմարդկային կամ մարդու արժանապատվությունը նվաստացնող պատիժների ձևերի կիրառումը կարգապահական խախտումների համար՝ հարկ է արգելել»<sup>58</sup>:

CPT-ն ընդգծել է, որ մենախցում պահելը «նման պատժի ենթարկվող անձի համար չափազանց կործանարար հետևանքներ» կարող է ունենալ, որոշակի հանգամանքների առկայության դեպքում կարող է «հանգեցնել անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի» և յուրաքանչյուր դեպքում պետք է կիրառվի հնարավորինս կարճ ժամանակահատվածով<sup>59</sup>: Չնայած այն հանգամանքին, որ տարբեր երկրներում կալանավորված անձանց պահելու պայմանները տարբեր են, CPT-ն մշակել է գործոնների ընդհանուր ցանկ<sup>60</sup>, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել անձին կարճաժամկետ կալանավորման տակ պահելու վայրի պատշաճ լինելը գնահատելիս: Այսպես.

- խցերը պետք է մաքուր լինեն և ունենան բավարար տարածք այնքան թվով անձանց համար, որքան դրանում սովորաբար պահվում է, խցերը նաև պետք է լուսավոր լինեն (այսինքն՝ ունենան բավա-

---

<sup>56</sup> Տե՛ս, 9-րդ սկզբունքը:

<sup>57</sup> Կալանավորված անձանց հետ վարվեցողության 7-րդ սկզբունքը:

<sup>58</sup> 31-րդ կանոնը:

<sup>59</sup> CPT/Inf/E (2002) 1, էջ 20, կետ 56(2):

<sup>60</sup> CPT/Inf/E (2002) 1, էջ 8, կետ 42:

րար լուսավորություն կարդալու համար)՝ բացառությամբ քնելու ժամերի, խցերը նաև պետք է օդափոխվեն,

- խցերում պետք է աթոռ կամ նստարան լինի, իսկ եթե այդ խցում անձը պահվելու է նաև գիշերը, ապա նա պետք է ապահովվի անկողնային մաքուր պարագաներով,
- կալանավորված անձինք պետք է իրենց կարիքները հոգալու և լվացվելու հնարավորություն ունենան,
- կալանավորված անձանց պետք է խնելու ջրից օգտվելու հնարավորություն տրվի, իսկ սնունդը պետք է տրամադրվի ամեն օր՝ համապատասխան ժամի, այդ թվում օրվա մեջ մեկ անգամ նրանց պետք է տրվի տաք սնունդ,
- 24 և ավելի ժամ կալանքի տակ գտնվող անձանց պետք է թույլատրվի զբոսնել մաքուր օդում:

CPT-ի կողմից առաջարկված գործոնները կարծաժամկետ կալանավորման պայմանների նվազագույն չափանիշներն են, ինչ վերաբերում է երկարատև կալանավորմանը, ապա դրա համար ավելի խիստ չափանիշներ են գործում, և եթե անձին երկարաժամկետ կալանքի տակ պահելու պայմանները չեն համապատասխանում այդ չափանիշներին, ապա առկա է անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք<sup>61</sup>:

*Կանանց կալանքի տակ պահելու առանձնահատկությունները*

Կալանավորված անձանց հետ վարվեցողության նվազագույն չափանիշները սահմանում են, որ կալանավորված կանանց նկատմամբ խնամքը և հսկողությունը պետք է իրականացնեն համապատասխան հիմնարկի վարչակազմի միայն իգական սեռի ներկայացուցիչները<sup>62</sup>: Տղամարդիկ և կանայք պետք է պահվեն տարբեր հաստատություններում կամ գտնվեն նույն հաստատության տարբեր վայրերում և համապատասխան հիմնարկի վարչակազմի իգական սեռի ներկայացուցչի հսկողության ներքո: Վարչակազմի արական սեռի ներկայացուցիչները կանանց պահելու վայրեր կարող են մուտք գործել միայն վարչակազմի իգական սեռի ներկայացուցչի ուղեկցությամբ<sup>63</sup>: Կանանց պահելու

<sup>61</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս, Պիրսն ընդդեմ Յունաստանի ՄԻԵԴ 2001 թվականի ապրիլի 19-ի վճիռը, Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի ՄԻԵԴ 2002 թվականի հուլիսի 15-ի վճիռը:

<sup>62</sup> Տե՛ս, Նվազագույն չափանիշային կանոններ 8(a) և 53:

<sup>63</sup> Տե՛ս, նույն տեղում:

վայրերում պետք է առկա լինեն համապատասխան սենյակներ հղի կանանց և ծննդկանների, ինչպես նաև հետծննդյան շրջանում գտնվող կանանց խնամքի համար<sup>64</sup>: Այնտեղ, որտեղ դա հնարավոր է, անհրաժեշտ է հոգ տանել այն մասին, որ ծննդաբերությունն իրականացվի ոչ թե բանտում, այլ քաղաքացիական հիվանդանոցում<sup>65</sup>:

Անչափահասներին կայանքի տակ պահելու  
առանձնահատկությունները

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում<sup>66</sup> թվարկված են որոշակի պարտականություններ, որոնք կապված են անչափահասներին (մինչև 18 տարեկան երեխաներին) մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու հետ: Նշված կոնվենցիայի 37-րդ հոդվածում ընդգծված է, որ՝ «Մասնակից պետություններն ապահովում են, որ

ա) ոչ մի երեխա չենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը վիրավորող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մահապատիժ, ոչ ցմահ բանտարկություն, որն ազատման հնարավորություն չի նախատեսում, չի սահմանվում 18 տարին չլրացած անձանց կողմից կատարված հանցագործությունների համար,

բ) ոչ մի երեխա չզրկվի ազատությունից անօրինական կամ կանաչական կերպով: Երեխայի ձերբակալությունը, կալանքը կամ բանտարկությունը իրականացվում են համաձայն օրենքի և գործադրվում միայն որպես ծայրահեղ միջոց՝ որքան հնարավոր է կարճ ժամանակամիջոցում,

գ) ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա օգտվի մարդասիրական վերաբերմունքից և իր անձի անկապտելի արժանապատվության նկատմամբ հարգանքից, հաշվի առնելով նրա տարիքի անձանց պահանջումները: Մասնավորապես, ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է առանձնացվի մեծահասակներից, եթե միայն չի համարվում, որ, երեխայի լավագույն շահերից ելնելով, հարկավոր չէ այդ անել, և պետք է իրավունք ունենա կապ պահպանել իր

---

<sup>64</sup> Տե՛ս, 23-րդ կանոնը:

<sup>65</sup> Տե՛ս, նույն տեղում:

<sup>66</sup> Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1989 թվականի նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով: Ուժի մեջ է մտել 1990 թվականի սեպտեմբերի 2-ին:

ընտանիքի հետ՝ նամակագրության և տեսակցությունների միջոցով, բացառությամբ հատուկ համաճարմանների,

դ) ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա իրավունք ունենա անհապաղ օգտվելու համապատասխան իրավական և այլ օգնությունից, ինչպես նաև դատարանի կամ իրավասու, անկախ և անկողմնակալ այլ մարմնի առաջ վիճարկել իրեն ազատությունից զրկելու օրինականությունը և իրավունք ունենա նրանց կողմից անհապաղ որոշում ակնկալել այդպիսի ցանկացած դատավարական գործողության առթիվ»:

Նույն միջազգային իրավական ակտի 39-րդ հոդվածը պարտավորեցնում է պետություններին *inter alia* աջակցել խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, ինչպես նաև ոտնահարման, շահագործման կամ բռնության ցանկացած ձևի զոհ հանդիսացած երեխայի ֆիզիկական և հոգեկան բուժմանը և սոցիալական վերաինտեգրմանը:

CPT-ն սահմանել է երեխաներին վատ վերաբերմունքից պաշտպանելու մի քանի կոնկրետ երաշխիքներ: Նշված մարմինն ընդգծել է՝ «կարևոր է, որ ազատությունից զրկված բոլոր անձինք (այդ թվում՝ անչափահասները) ոստիկանության կողմից ձերբակալվելու առաջին իսկ պահից իրավունք ունենան իրենց հարազատին կամ երրորդ այլ անձի հայտնել իրենց ձերբակալման փաստի մասին, ինչպես նաև իրավունք ունենան դիմելու փաստաբանի և բժշկի: Նշված երաշխիքներից բացի, որոշ իրավական համակարգեր ընդունում են, որ անչափահասներին բնորոշ խոցելիությունը հաշվի առնելով անհրաժեշտ է ոստիկանության աշխատակիցներին պարտավորեցնել անվտանգության լրացուցիչ միջոցներ ձեռնարկել: Դա ենթադրում է, որ ոստիկանության աշխատակիցները պարտավորեցվում են իրենք ապահովել համապատասխան անձանց տեղեկացումն անչափահասի ձերբակալման մասին (անկախ այն բանից, թե անչափահասը նման խնդրանքով դիմել է, թե՛ ոչ): Կարող են լինել նաև դեպքեր, երբ ոստիկաններն իրավունք չունենան հարցաքննել անչափահասին համապատասխան անձի և (կամ) պաշտպանի բացակայության պայմաններում»<sup>67</sup>:

<sup>67</sup> Տե՛ս, CPT/Inf/E (2002) 1, էջ 57, կետ 23:

Յոգեկան խանգարում ունեցող անձանց անազատության մեջ պահելու առանձնահատկությունները

Յոգեկան խանգարումներով տառապող անձանց պաշտպանության և բժշկական հոգեբուժական օգնության որակի բարձրացման սկզբունքները<sup>68</sup> սահմանում են, որ՝ «Յոգեկան խանգարում ունեցող կամ այդպիսիք համարվող բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և նրանց բնորոշ մարդկային արժանապատվության հարգման իրավունք»<sup>69</sup>: «Յոգեկան խանգարում ունեցող կամ այդպիսին համարվող բոլոր անձինք տնտեսական, սեռական կամ շահագործման այլ ձևերից, ֆիզիկական կամ բռնության այլ ձևերից և իրենց արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից պաշտպանության իրավունք ունեն»<sup>70</sup>: Կալանավորված անձանց հետ վարվեցողության նվազագույն չափանիշները նաև ամրագրում են, որ հոգեկան խանգարում ունեցող անձինք չպետք է պահվեն բանտերում, «այլ հոգեկան խանգարումներ կամ թերություններ ունեցող կալանավորներին անհրաժեշտ է հսկողության տակ պահել և բուժել հատուկ հաստատություններում՝ բժշկի հսկողության տակ»<sup>71</sup>:

CPT-ն արձանագրել է, որ «Յոգեկան խանգարում ունեցող անձինք պետք պահվեն բավարար սարքավորումներ և պատշաճ պատրաստված անձնակազմ ունեցող բժշկական հաստատություններում: Նման հաստատություն կարող է հանդիսանալ հասարակ հոգեբուժական հիվանդանոցը կամ պենիտենցիար համակարգում գործող՝ հատուկ սարքավորումներ ունեցող հոգեբուժական հաստատությունը»<sup>72</sup>: Յոգեպես անկայուն և անհանգիստ հիվանդների բուժումը պետք է իրականացվի խիստ հսկողության ներքո՝ հիվանդի նկատմամբ խնամքի ապահովման և, անհրաժեշտության դեպքում, հանգստացնող դեղամիջոցների կիրառման հետ մեկտեղ: Ֆիզիկական ներգործության միջոցների կիրառումն արդարացված է միայն հազվադեպ, այդ դեպքերում ևս միշտ պահանջվում է բժշկի անմիջական ցուցումի կամ նրա հավանության

---

<sup>68</sup>Ընդունվել են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1991 թվականի դեկտեմբերի 17-ի 46/119 բանաձևով:

<sup>69</sup>Տե՛ս, 2-րդ սկզբունքը:

<sup>70</sup>Տե՛ս, 3-րդ սկզբունքը:

<sup>71</sup>Տե՛ս, Նվազագույն չափանիշային կանոնները, կետ 82:

<sup>72</sup>Տե՛ս, CPT/Inf/E (2002) 1, էջ 33, կետ 43:



առկայությունը, եթե նման միջոցների կիրառման առաջարկ է արվել: Ֆիզիկական ներգործության միջոցները պետք է վերացվեն առաջին իսկ հնարավորության դեպքում: Ֆիզիկական ներգործության միջոցների կիրառման բոլոր դեպքերը պետք է արձանագրվեն<sup>73</sup>:

## Դատավորի մոտ տարվելը

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական մեղադրանքով յուրաքանչյուր ձերբակալված կամ կալանավորված անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ այլ պաշտոնակատար անձի մոտ, որին օրենքով պատկանում է դատական իշխանության իրականացման իրավունքը, և որն ունի պատշաճ ժամկետում դատական քննություն վարելու կամ ազատելու իրավունք: Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելը ընդհանուր կանոն չպետք է լինի, բայց ազատումը կարող է կախման մեջ դրվել դատարան ներկայանալու, ցանկացած փուլում դատական քննության ներկայանալու և անհրաժեշտության դեպքում դատավճիռն ի կատար ածելու համար ներկայանալու երաշխիքներ տալուց»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

Մեջբերված դրույթներն աներկբա հավաստումն են այն բանի, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք *habeas corpus* ընթացակարգի միջոցով իրավունք ունի վիճարկելու իրեն կալանքի տակ պահելու օրինականությունը:

---

<sup>73</sup>Տե՛ս, նույն տեղում, էջ 33, կետ 44:

Այս ընթացակարգը, սակայն, լուրջ երաշխիք է ոչ միայն անօրինակա- կան ձերբակալման կամ կալանավորման, այլ նաև խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառման դեմ: Ինչպես ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել են, որ անհապաղ դատարան դիմելու իրավունքը լուրջ երաշխիք է խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեմ անգամ արտակարգ դրության ժամանակ<sup>74</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ կալանավորման օրինականության նկատմամբ վերահսկողությունը կոչված է երաշխավորելու, որպեսզի կալանավորումն իրականացվի ներպետական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգին համապատասխան և միայն այն հիմքերով, որոնք նախատեսված են ներպետական օրենսդրությամբ<sup>75</sup>: Ձերբակալումը պետք է համապատասխանի ներպետական օրենսդրության ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական նորմերին: Դատարանը պետք է երաշխավորի, որ ձերբակալումը, միջազգային չափանիշների իմաստով, կամայական չէ<sup>76</sup>:

CPT-ն առաջարկում է, որ՝ «Ոստիկանության կողմից ձերբակալված բոլոր անձինք, ովքեր ենթադրվում է, որ նախնական կալանքի են ենթարկվելու, տարվեն դատավորի մոտ... Դատավորի հետ մնալով անձի հանդիպումը նրան հնարավորություն կտա վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոք ներկայացնել: Բացի այդ, անգամ բողոքի բացակայության պայմաններում դատավորն ինքը հնարավորություն կունենա տեսնել բռնության կիրառման հետքերը (օրինակ՝ տեսանելի մարմնական վնասվածքները, ձերբակալված անձի վիճակը, նրա վարքագիծը) և ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել»<sup>77</sup>:

CPT-ի մեջբերված դիրքորոշումից ակնհայտ է, որ ձերբակալված անձը պետք է հնարավորինս շուտ տարվի դատավորի մոտ, իսկ վեր-

---

<sup>74</sup> Տե՛ս, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 29-րդ ընդհանուր մեկնաբանությունները, Արտակարգ դրություն (հոդված 4), 2001 թվականի հուլիսի 24, կետ 16: Ակտյն ընդդեմ Թուրքիայի ՄԻԵԴ վճիռը, 1996թ., զանգատ թիվ 21987/93:

<sup>75</sup> Նավարրան ընդդեմ Ֆրանսիայի ՄԻԵԴ 1993 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 26:

<sup>76</sup> Տե՛ս, նույն տեղում:

<sup>77</sup> CPT/Inf/E (2002) 1, էջ 14, կետ 45:

ջինս էլ, իր հերթին, պետք է ուշադրություն դարձնի դատարան բերված անձանց վիճակի վրա (մարմնական վնասվածքների առկայություն, անձի ֆիզիկական կամ հոգեկան վիճակ, նրա վարքագիծը), ինչպես նաև այդ անձին դատարան բերած պաշտոնատար անձանց վարքագծի, ձերբակալված անձի նկատմամբ նրանց վերաբերմունքի վրա:

Այլ կերպ ասած, դատավորը, ում մոտ բերվել է ձերբակալված անձը, պետք է իր վարքագծով ցույց տա, որ լրջորեն է վերաբերվելու վատ վերաբերմունքի մասին յուրաքանչյուր բողոքի, բացի դրանից, անհրաժեշտության դեպքում միջոցներ կձեռնարկի վատ վերաբերմունքի կամ նման վերաբերմունքի սպառնալիքի ենթարկված անձանց պաշտպանության համար:

Եթե դատարան բերված անձը չի տիրապետում այն լեզվին, որով իրականացվում է դատական քննությունը, ապա նրան պետք է թարգմանիչ տրամադրվի: Այս պահանջը ոչ միայն կոչված է ապահովելու արդար դատաքննության իրավունքի իրացումը, այլ նաև լուրջ երաշխիք է խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի մասին հայտնելու՝ անձի հնարավորության ապահովման համար:

Վերոգրյալից բացի, հարկ ենք համարում ընդգծել, որ դատավորի մոտ տարվելու երաշխիքի արդյունավետ իրացման նպատակով անհրաժեշտ է ապահովել, որպեսզի այն մարմինները, որոնք իրականացնում են ձերբակալված անձի հսկողությունը դատարանի դահլիճում, կառուցվածքային առումով առանձնացված լինեն տվյալ անձի վերաբերյալ քրեական գործով վարույթն իրականացնող մարմիններից: Բանն այն է, որ եթե դատարանի դահլիճում գտնվի վարույթն իրականացնող մարմինը, ապա դատարան բերված անձը կխուսափի իր նկատմամբ իրականացված վատ վերաբերմունքի մասին հայտարարելուց՝ վախենալով հետագա հաշվեհարդարից:

## **Խոշտանգումը որպես հանցագործություն**

ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածը կրում է «խոշտանգումը» վերտառությունը: Այս հոդվածի համաձայն՝ խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել այդ օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով (դիտավորությամբ առողջությանը ծանր և միջին ծանրույթ-

յան վնաս պատճառելը) նախատեսված հետևանքներ: Այս արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 3 տարի ժամկետով:

Հոդվածի երկրորդ մասը որպես արարքը ժանրացնող հանգամանքներ նախատեսում է նույն գործողությունները երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարելը, անձի կամ նրա մերձավորի նկատմամբ կատարելը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ, անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի, ինչպես նաև առևանգված կամ որպես պատանդ վերցված անձի, ակնհայտ հղի կնոջ նկատմամբ, մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, առանձին դաժանությանը կամ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով կատարելը:

Նորմի օրենսդրական շարադրանքից բխում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման հանցակազմը չի բովանդակում հանցագործության նպատակի և հատուկ սուբյեկտի վերաբերյալ պահանջներ: Մասնավորապես, հոդվածում չի նշվում ցուցմունքներ կամ կատարված հանցագործության վերաբերյալ տեղեկություններ ստանալու, վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվող անձին ահաբեկելու կամ պատժելու կամ նրա նկատմամբ խտրական վերաբերմունք դրսևորելու նպատակների մասին, բացի դրանից, հանցակազմի սուբյեկտը հատուկ չէ:

ՀՀ քրեական օրենսդրության իմաստով որպես խոշտանգման հանցակազմի հետևանք չի նախատեսվում առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս պատճառելը: Վերոգրյալից բացի, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշների առկայության դեպքում քրեական գործ կարող է հարուցվել միայն տուժողի բողոքի հիման վրա և կարճվել հանցագործի հետ վերջինիս հաշտվելու դեպքում:

Մինչդեռ «խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբարմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի 1984 թվականի դեկտեմբերի 10-ի կոնվենցիայի»<sup>78</sup> 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն կոնվենցիայի նպատակների հա-

<sup>78</sup> Նշված կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 13-ից:

մար «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրոշմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց»:

Նույն կոնվենցիայի 2-րդ հոդվածն ամրագրում է, որ՝

«1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական կամ այլ միջոցներ՝ իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում խոշտանգումների դեպքերը կանխելու համար:

2. Ոչ մի բացառիկ իրադրություն, ինչպիսին էլ այն լինի՝ պատերազմի առկայություն կամ պատերազմի վտանգ, ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չի կարող հանդիսանալ խոշտանգումների արդարացում:

3. Վերադաս պետի կամ պետական իշխանության հրամանը չի կարող համարվել խոշտանգումների արդարացում»<sup>79</sup>: Բացի դրանից, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն արձանագրել է, որ՝ «Մասնակից պետությունները, ներկայացնելով իրենց զեկույցները, պետք է հայտնեն իրենց քրեական իրավունքի այն դրույթների մասին, որոնք արգելում են խոշտանգումները և դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը, և նշեն,

<sup>79</sup> Այս սկզբունքը ներառված է եղել նաև Նյուրնբերգի և Տոկիոյի տրիբունալների կանոնադրության մեջ և հետագայում հաստատվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից: Այն ամրագրված է նաև Ռուանդայի և նախկին Հարավսլավիայի գործերով միջազգային տրիբունալների կանոնադրությունների, և, որոշակի փոփոխություններով, նաև Միջազգային քրեական դատարանի ստատուտի մեջ:

թե ինչ պատժամիջոցներ են կիրառվում նման արարքների կատարման համար պաշտոնատար կամ պետության անունից հանդես եկող այլ անձանց, ինչպես նաև մասնավոր անձանց կողմից: Այն անձինք, ովքեր արգելված արարքի կատարմանը դրդելով կամ դրանց կատարման վերաբերյալ հրաման տալով կամ դրանց կատարման նկատմամբ հանդուրժողականություն դրսևորելով կամ այդպիսի արարքներ կատարելով խախտել են «խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 7-րդ հոդվածը, պետք է ենթարկվեն պատասխանատվության: Հետևաբար, այն անձինք, ովքեր հրաժարվել են նման հրամաններ կատարելուց, չպետք է ենթարկվեն պատասխանատվության կամ որևէ ձևով հետապնդման»<sup>80</sup>:

Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ խոշտանգման հանցակազմը ներառված չէր նաև «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ կետում թվարկված՝ ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածների շարքում, որոնց վրա համաներում չի տարածվում:

խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի առկայության հիմքով քրեական գործերի հարուցման, քննության և լուծման պրակտիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ նման դեպքերում քրեական գործերը հարուցվում, քննվում և լուծվում են ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309-րդ կամ 341-րդ հոդվածներով: Վկայակոչված հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ քրեական օրենսդրության իմաստով պատժելի է միայն դատավարության ընթացքում խոշտանգմամբ ցուցումներ կամ որոշակի եզրակացություն տալուն հարկադրելը: Պաշտոնատար անձի կողմից խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի դրսևորման բազմաթիվ այլ դեպքեր, օրինակ՝ խոշտանգում հանրահավաքների ժամանակ, քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում և այլն, դուրս են մնում օրենսդրական կարգավորումների շրջանակից: Վերոգրյալից բացի, ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից բռնության ոչ ամեն մի դրսևորում կարող է առաջացնել խոշտանգման հանցակազմի կիրառում, խոսքը, մասնավորապես, այն

---

<sup>80</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 20-րդ ընդհանուր մեկնաբանությունները, կետ 13:

դեպքերի մասին է, երբ բացատրություն տալուն, հաղորդուն ներկայացնելուն, մեղայականով ներկայանալուն հարկադրելու նպատակով քննիչը կամ ոստիկանը խոշտանգում են անձին կամ ցուցմունք ստանալու նպատակով պատճառում են դաժան ցավ կամ տառապանք: Բոլոր նշված դեպքերում պաշտոնատար անձը ենթակա է քրեական պատասխանատվության պաշտոնեական լիազորություններն անցնելու և (կամ) առողջությանը ծանր վնաս հասցնելու համար: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով արգելված արարքներին, ապա վերջիններս, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի դրսևորման համար կարելի է ասել, ածանցյալ, հովանավորող բնույթ ունեն: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով պաշտոնատար անձը ենթակա է պատասխանատվության այն դեպքում, երբ պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով կամ ծառայողական պարտականությունները չկատարելով նպաստավոր պայմաններ է ստեղծում խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դրսևորման կամ հետագայում դրանց չբացահայտման կամ բացահայտմանը խոչընդոտելու համար<sup>81</sup>:

## **Վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդմանն արձագանքելը**

Եթե ձերբակալված անձը, նրա հարազատը կամ պաշտպանը խոշտանգումների կիրառման վերաբերյալ բողոք են ներկայացնում, ապա այդ կապակցությամբ համապատասխան քննությունը պետք է իրականացվի **անհապաղ**: Կալանքի տակ պահելու ընթացքում կամ կալանավորումից ազատ արձակվելուց հետո անձի մահանալու դեպքում մահվան պատճառների բացահայտման նպատակով պետք է իրականացվի անկախ քննություն:

---

<sup>81</sup> Խոշտանգման՝ որպես հանցագործության մասին առավել մանրամասն տե՛ս, Վահե Ենգիբարյան. «Վատ վերաբերմունքի ու անպատժելիության դեմ պայքարը և Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկան», Երևան 2010: Վահե Ենգիբարյան, Աննա Վարդապետյան. «Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարը. ՀՀ օրենսդրության ու դատական պրակտիկայի հիմնախնդիրները», Երևան 2010:

Իրավասու մարմնի կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքի գրանցման գործընթացը պետք է պարզ և սկզբնական շրջանում խորհրդապահական բնույթ կրի: Բողոքի ներկայացման մեխանիզմի առկայության մասին պետք է հայտնի լինի հասարակությանը, իսկ քաղաքացիների կողմից խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի մասին հաղորդումներ ներկայացնելը պետք է խրախուսվի: Եթե խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու համար պահանջվում է որոշակի ձևաթղթեր կամ փաստաթղթեր լրացնել, ապա հասարակությունը պետք է տեղյակ լինի վերջիններիս մասին, և նշված ձևաթղթերը կամ փաստաթղթերը պետք է կազմվեն բոլոր այն լեզուներով, որոնցով խոսում է տվյալ երկրի բնակչությունը:

Այն մարմինը, ում ներկայացվել է վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքը, պետք է առանց ձգձգումների ընդունի այն և հաստատի դրա ընդունումը: Եթե բողոքը վերաբերում է ընթացիկ ժամանակահատվածին և առկա է վտանգ, որ կարող է շարունակվել ձեռքակալված անձին վատ վերաբերմունքի ենթարկել, ապա համապատասխան իրավասու մարմինը պետք է բողոքին արձագանքի անհապաղ, սակայն նման հանգամանքի բացակայության դեպքում ևս վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքի քննության և լուծման համար պետք է նախատեսվեն հստակ ժամկետային սահմանափակումներ: Վատ վերաբերմունքի ենթադրյալ տուժողներին և նրանց օրինական ներկայացուցիչներին պետք է հասանելի լինեն ներկայացված բողոքի քննության և լուծման արդյունքները:

Վերագրյալից բացի, վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքի քննության ընթացքում և դրանից հետո անհրաժեշտ է ապահովել ինչպես վատ վերաբերմունքից ենթադրյալ տուժածների, այնպես էլ վկաների պաշտպանությունը: Այն անձինք, որոնցդեմ բողոք է ներկայացվել, պետք է զրկված լինեն բողոքաբերի, վկաների, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև բողոքի կապակցությամբ քննություն իրականացնող անձանց նկատմամբ ուղղակի կամ անուղղակի կերպով իշխանական կամ վերահսկողական գործառույթներ իրականացնելուց: Եթե վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքում առկա մեղադրանքներն ակնհայտորեն անհիմն չեն, ապա բողոքի կապակցությամբ քննության իրականացման ժամանակահատվածում այն պաշտոնատար անձանց լիազորությունները, որոնց դեմ ներկայացվել է այդ բո-



դոքը, պետք է ժամանակավորապես (ընդհուպ մինչև քննության կամ հետագա դատական կամ կարգապահական վարույթի ավարտը) դադարեցվեն: Այն դեպքերում, երբ առկա է վտանգ, որ ձերբակալված կամ կալանավորված անձին կշարունակվի ենթարկել վատ վերաբերմունքի, նա պետք է տեղափոխվի ազատությունից զրկված անձանց պահելու այլ վայր և պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ այդ անձի անվտանգության ապահովման նպատակով: Անհրաժեշտության դեպքում վատ վերաբերմունքից ենթադրյալ տուժածները և վկաները պետք է ներառվեն վկաների պաշտպանության ծրագրում: Վկաների պաշտպանության ծրագիրը պետք է հասանելի լինի վատ վերաբերմունքից բոլոր ենթադրյալ տուժածները և վկաների համար՝ անկախ հանցագործության կատարման համար վերջիններիս դատապարտված լինելու հանգամանքից:

Պրակտիկայում քիչ չեն դեպքերը, երբ անձը վատ վերաբերմունքի մասին հայտարարություն անում է դատարանում և վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդմանն արձագանքելու պարտականությունը դրվում է դատարանի վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ «Դատարանի լիազորություններն են մասնավորապես՝

(...)

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմելը,

(...)»:

Սույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝ (...) դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, (...)»:

Օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը իրենց վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին, իսկ դատարանը նման որոշում կայացնելու միջնորդությամբ դիմում է դատախազին, եթե մեղադրյալին վերագրվող հանցագործություններից բացի բացահայտված է առաջինի հետ չկապված այլ հանցագործություն, որը կատարել է այլ անձ՝ առանց մեղադրյալի մասնակցության»:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջքերված դրույթների վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Ա. Գոդյանի* վերաբերյալ նախադեպային որոշման մեջ արձանագրել է, որ՝ «(...) եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող քրեական գործի քննության ընթացքում հայտնաբերում են հանցագործության ակնհայտ հատկանիշներ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա պարտավոր են քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին» (տե՛ս, Արայիկ Էդուարդի Գոդյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի ԵԱԲԴ/0049/01/09 որոշման 29-րդ կետը):

*Ա. Գոդյանի* վերաբերյալ որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ստորադաս դատարանները մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող համապատասխան դատախազին Ա.Գոդյանի նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնություն գործադրելու վերաբերյալ հայտարարությունն ստուգելու և նրա նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնություն գործադրելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու միջնորդություն չեն ներկայացրել: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը եզրակացություն է արել այն մասին, որ ստորադաս դատարանների կողմից պատշաճ արձագանք չի տրվել իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա. Գոդյանի հայտարարություններին, ինչը հանգեցրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածների, ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասից բխող պահանջների չպահպանման:

## **Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննությունը, այդ քննության սկզբունքները**

Միջազգային իրավունքը հստակ սահմանում է վատ վերաբերմունքի վերաբերյալ քննություն իրականացնելու պարտականությունը: Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվոթ-

յունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան պահանջում է, որ մասնակից պետությունները խոշտանգման փաստի կապակցությամբ անհապաղ և անաչառ հետաքննություն անցկացնեն սեփական նախաձեռնությամբ, եթե անգամ չկա ներկայացված բողոք, բացի դրանից, վերոնշյալ կոնվենցիայի պահանջն է, որ մասնակից պետությունները երաշխավորեն յուրաքանչյուր անձի՝ բողոք ներկայացնելու, ներկայացված բողոքի քննության և հետագա բոլոր սպառնալիքներից կամ վատ վերաբերմունքից պաշտպանության իրավունքը<sup>82</sup>: Նույն պահանջները ՄԱԿ-ի կոնվենցիան նախատեսում է դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեպքերի համար<sup>83</sup>:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն նշել է, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ բողոք ներկայացնելու իրավունքը պետք է արտացոլված լինի ներպետական օրենսդրության մեջ: Բողոքները պետք է արագ և անաչառ քննության առնվեն իրավասու մարմինների կողմից: Պետությունները նաև պետք է պատասխանատվության ենթարկեն այն անձանց, ովքեր մասնակցել են խոշտանգումների կիրառմանը՝ «արգելված արարքների կատարմանը դրդելով կամ դրանց կատարման հրաման տալով կամ նման արարքների կատարման նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք դրսևորելով կամ ինքնին նման արարքներ կատարելով»<sup>84</sup>:

---

<sup>82</sup> Տե՛ս, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 12 և 13-րդ հոդվածները:

<sup>83</sup> Տե՛ս, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 16-րդ հոդվածը:

<sup>84</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 20-րդ ընդհանուր մեկնաբանությունները, կետեր 13 և 14:

<sup>85</sup> Տե՛ս, Ասսենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի ՄԻԵԴ 1998 թվականի հոկտեմբերի 28-ր վճիռը, Ակտյն ընդդեմ Թուրքիայի ՄԻԵԴ 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը:

<sup>86</sup> Տե՛ս, Ռիբիչն ընդդեմ Ավստրիայի ՄԻԵԴ 1995 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, Ակտյն ընդդեմ Թուրքիայի ՄԻԵԴ 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, Ասսենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի ՄԻԵԴ 1998 թվականի հոկտեմբերի 28-ր վճիռը, Կուրտն ընդդեմ Թուրքիայի ՄԻԵԴ 1998

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ պետությունները պարտավոր են քննել խոշտանգումների վերաբերյալ բոլոր «վիճելի բողոքները», ինչը ենթադրում է ինչպես արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի, այնպես էլ խոշտանգումներից պաշտպանության իրավունքի առկայությունը<sup>85</sup>։ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ՝ «եթե անձը ոստիկանության կողմից կալանավորվել է առողջ, իսկ կալանքից ազատվելու ժամանակ ունի մարմնական վնասվածքներ, ապա պետությունը պարտավոր է ներկայացնել այդ վնասվածքների պատճառների վերաբերյալ ճշմարտաման բացատրությունները»<sup>86</sup>։ Եթե որևէ անձ պետական մարմինների կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոք է ներկայացնում, որն ստուգման կարիք ունի, ապա իշխանությունները պարտավոր են արդյունավետ և անկախ պաշտոնական քննություն, այդ թվում վկաների հարցաքննություն իրականացնել և ձեռք բերել դատաբժշկական ապացույցներ, ինչի արդյունքում հնարավոր կլինի բացահայտել և պատժել վերոնշյալ խախտման մեջ մեղավոր անձանց<sup>87</sup>։ Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ նման պարտականության բացակայության դեպքում «խոշտանգումների և անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար նշանակությանը, պրակտիկայում ոչ արդյունավետ կլինի և պետական մարմինների ներկայացուցիչներին որոշ դեպքերում թույլ կտա անպատժելիորեն խախտել իրենց իրավասության տակ գտնվող անձանց իրավունքները»<sup>88</sup>։

---

թվականի մայիսի 25-ի վճիռը, Կակիչին ընդդեմ Թուրքիայի ՄԻԵԴ 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, Ակդենիզը և այլոք ընդդեմ Թուրքիայի ՄԻԵԴ 2001 թվականի մայիսի 31-ի վճիռը։

<sup>87</sup> Տե՛ս, նույն տեղում։ Տե՛ս նաև Սևթան Վեզնեդարողլին ընդդեմ Թուրքիայի ՄԻԵԴ 2000 թվականի ապրիլի 11-ի վճիռը, Քելլին և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը։

<sup>88</sup> Տե՛ս, նույն տեղում։ Տե՛ս նաև Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի ՄԻԵԴ 1999 թվականի հուլիսի 28-ի վճիռը։

Հարկ ենք համարում ընդգծել, որ *Ա.Գզոյանի* վերաբերյալ նախադեպային որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ՝ «(...) նախաքննության մարմնի դեմ ներկայացված բողոքները պետք է քննվեն անկախ մարմնի կողմից, որը չպետք է կապված լինի նախաքննության մարմնի հետ և պետք է առանձնացված լինի վերջինից»:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 1998 թվականի նոյեմբերի 19-ի Եզրափակիչ Դիտարկումներում նշված է՝ «Կոմիտեն առաջարկում է հատուկ անկախ մարմին հիմնադրել՝ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից թույլ տրված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի առնչությամբ բերված բողոքներն ուսումնասիրելու նպատակով» (տե՛ս Մարդու իրավունքների կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները, Հայաստան, CCPR/C/79/Add.100., 19 նոյեմբերի 1998թ., կետ 12):

*Ռամսահայն ընդդեմ Նիդեռլանդների և Բատին և այլոք ընդդեմ Թուրքիայի* վճիռներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման համաձայն՝ չպետք է լինի ինստիտուցիոնալ կամ ենթակարգային կապ քննիչների և այն ոստիկանների միջև, ում դեմ բողոք է ներկայացվել (տե՛ս *Bati and Others v. Turkey*, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, *Ramsahai v. The Netherlands*, 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 52391/99)» (Արայիկ Էդուարդի Գզոյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի ԵԱԲԴ/0049/01/09 որոշման 32-րդ կետը):

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննությունները նպատակ են հետապնդում բացահայտել բողոքում նշված՝ խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառման փաստերը, վատ վերաբերմունքի դրսևորման հետ առնչություն ունեցող դեպքերը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի դրսևորումը կանխարգելելու ուղղությամբ:

Հինք ընդունելով վերոշարադրյալը՝ կարող ենք ասել, որ վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքի քննությունը նպատակ է հետապնդում հավաքել ապացույցներ հետևյալ նպատակներով՝

- վատ վերաբերմունք դրսևորած անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկել,
- վատ վերաբերմունքի համար պատասխանատու անձանց քրեական հետապնդման ենթարկել,

- վատ վերաբերմունքից տուժած անձին համապատասխան փոխ-հատուցում տրամադրել:

Իհարկե, ապացուցման չափանիշը վերոնշյալ երեք նպատակներից յուրաքանչյուրի դեպքում տարբեր է, սակայն նշված նպատակներից յուրաքանչյուրը հասանելի կարող է լինել միայն այն դեպքում, եթե հավաքված ապացույցները բավարար լինեն որոշակի հանգամանքների հաստատման կամ ժխտման համար:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննության կարևորագույն հայեցակետերից մեկը քննության տարբեր ուղղությունների դադարեցման կամ, ընդհակառակը՝ սկսման պատճառների գրանցումն է, բնականաբար, ենթակա են գրանցման նաև այն որոշումները, որոնց հիման վրա կոնկրետ գործով քննության ուղղություններից մեկը դադարեցվել է, իսկ մյուսը՝ սկսվել: Նշված տեղեկության գրանցումն ու պահպանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա անհրաժեշտությունը կարող է առաջանալ հետագայում՝ գործի դատական քննության փուլում:

#### *Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննության սկզբունքները*

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննությունը պետք է իրականացվի նույն սկզբունքներով, ինչ յուրաքանչյուր այլ ծանր հանցագործության քննությունը՝ հաշի առնելով միայն այն, որ վատ վերաբերմունքի հետ կապված հանցագործություններն իրականացվում են իրավապահ կամ պետական այլ մարմինների կողմից, հետևաբար, ի տարբերություն այլ հանցագործությունների, նման հանցագործությունների քննությունն ու բացահայտումն ավելի դժվար է: Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառման հետ կապված հանցագործությունները հաճախ կատարվում են արտաքին աշխարհի համար փակ վայրերում, որտեղ չեն կարող լինել անկախ ականատես վկաներ, վատ վերաբերմունքի վերաբերյալ ապացույցները կարող են հեշտությամբ վերացվել կամ թաքցվել, իսկ իրավապահ կամ այլ պետական մարմինների աշխատակիցները՝ լռել և քննությանը չհայտնել վատ վերաբերմունքի վերաբերյալ իրենց հայտնի տեղեկությունը: Քիչ չեն դեպքերը, երբ վատ վերաբերմունքի վերաբերյալ տեղեկություններ հրաժարվում են հայտնել ենթադրյալ տուժողները կամ վկաները՝ վախենալով հետագա հաշվեհարդարից: Այլ կերպ ասած, վատ վերաբեր-

մունքի և խոշտանգումների դեպքերի մեծամասնությունը տեղի է ունենում այնպիսի վայրերում, որտեղ ապացույցների պահպանման կամ դեպքի տեղի զննության հետ կապված դժվարություններն անխուսափելի են, հետևաբար, վատ վերաբերմունքի վերաբերյալ գործեր քննող անձանց պետք է տրամադրվի ցանկացած շենք կամ տարածք մուտք գործելու հնարավորություն, ինչպես նաև նրանք պետք է իրավունք ունենան պահանջել, որպեսզի ապահովվի այն վայրերի անձեռնմխելիությունը, որտեղ ենթադրվում է, որ վատ վերաբերմունքը տեղի է ունեցել: Վերոնշյալ պահանջները չպահպանելու դեպքում քննության ընթացքը կարող է խաթարվել առարկաների տեղափոխության, ապացույցների վերացման, կորստի կամ կեղծման պատճառով:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննություն իրականացնող անձինք պետք է հետևողականորեն գրանցեն բոլոր այն վայրերը, որտեղ վատ վերաբերմունքի ենթադրյալ տուժողը պահվել է՝ նպատակ ունենալով ապահովել վատ վերաբերմունքի վերաբերյալ ապացույցների հայտնաբերումն ու պահպանումը: Քննությունն իրականացնող անձը պետք է ուշադրություն դարձնի այն տարրերի առկայության կամ բացակայության վրա, որոնք հաստատում կամ ժխտում են վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունը, ինչպես նաև հետևողականորեն հավաքի կոնկրետ անձի կամ անձանց կողմից վատ վերաբերմունքի դրսևորման պրակտիկայի մասին վկայող յուրաքանչյուր ապացույց:

Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառման ենթադրյալ վայրերի զննությունը և համապատասխան ապացույցների հավաքումը ենթադրում է, որ՝

- վատ վերաբերմունքի վերաբերյալ քննության իրականացման յուրաքանչյուր վայր կամ տարածք մուտքը պետք է արգելվի, ինչի արդյունքում հնարավոր կլինի կանխել հնարավոր ապացույցների կորուստը: Նշված վայրեր մուտք գործելու իրավունք պետք է ունենան միայն վատ վերաբերմունքի վերաբերյալ քննություն իրականացնող անձինք,
- իրեղեն ապացույցները պետք է օրենքով սահմանված կարգով հավաքվեն, մշակվեն, փաթեթավորվեն, կնքվեն, պիտակավորվեն և պահվեն այնպիսի պայմաններում, որ բացառվեն դրանց կեղտոտումը, կորուստը կամ դրանք կեղծելու փորձերը: Եթե ենթադրյալ վատ վերաբերմունքը տեղի է ունեցել ոչ վաղ անցյալում, ապա

անհրաժեշտ է դեպքի տեղից հավաքել և պահել օրգանիզմի ցանկացած արտադրության նմուշներ (արյուն, սերմահեղուկ և այլն), մազեր, հյուսվածքներ և մանրաթելեր, որոնք հնարավոր կլինի հայտնաբերել դեպքի վայրում,

- առգրավվեն և պահպանվեն բոլոր այն առարկաները, որոնք կարող են օգտագործված լինել վատ վերաբերմունքի ժամանակ,
- եթե դեպքը տեղի է ունեցել համեմատաբար ոչ վաղ անցյալում, ապա՝ վերցվեն դեպքի վայրում հայտնաբերված մատնահետքերը,
- լուսանկարվի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև համապատասխան մասշտաբի սահմանմամբ մատիտով կամ գրիչով ճեպանկարվի դեպքի տեղը,
- քանոնի և գունային աղյուսակի կիրառմամբ լուսանկարվեն ենթադրյալ տուժողի վրա առկա մարմնական վնասվածքները, ինչը հնարավորություն կտա ցուցադրել մարմնական վնասվածքների չափն ու լրջությունը,
- վատ վերաբերմունքի դրսևորման ժամանակ ներկա գտնված անձանց տվյալներն արձանագրվեն, ինչը հնարավորություն կտա հետագայում կապ հաստատել վերջիններիս հետ և հարցաքննել,
- հնարավորության դեպքում վատ վերաբերմունքի ենթադրյալ տուժողի և վատ վերաբերմունքի դրսևորման մեջ կասկածվող անձի հագուստը վերցվի և լաբորատոր կարգով ստուգվի վատ վերաբերմունքի հնարավոր ապացույցների ձեռքբերման նպատակով,
- պահպանվեն քննությանը վերաբերող բոլոր գրառումները և փաստաթղթերը՝ հետագայում դրանք փորձաքննության ենթարկելու և որպես ապացույց օգտագործելու նպատակով:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննությունը, վերոշարադրյալ պահանջների հետ մեկտեղ, ենթարկվում է նաև այլ հանցագործությունների քննությանը ներպետական և միջազգային օրենսդրությամբ առաջադրվող պահանջներին, այդ թվում ամենեղության կանխավարկածի պահպանման պահանջին, հնարավորության դեպքում նրանք պետք է իրականացվող քննության մասին տեղյակ պահվեն այն անձինք, ովքեր կարող են հետագայում ձեռք բերել կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ: Ինչ վերաբերում է վատ վերաբերմունքի ենթադրյալ զոհերի հետ վարվեցողության պահանջներին, ապա քննությունն իրականացնող անձինք պետք է առաջին հերթին համբերատար լինեն և հաշվի առնեն այդ անձանց խոցելիությունն ու հնարավոր անհավասարակշռվածությունը:



Վատ վերաբերմունքի վերաբերյալ բոլոր քննությունների արդյունքները պետք է հրապարակային լինեն: Հրապարակայնության պահանջը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքը չի հաստատվում իրականացված քննությամբ: Վերջին դեպքում վատ վերաբերմունքի արդյունքների հրապարակումը նպատակ է հետապնդում ապահովել հասարակության տեղեկացումն այն մասին, որ քննությունն իրականացվել է օրենքով սահմանված կարգով:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննության ավարտից հետո բողոքաբերին պետք է ուղարկվի քննության արդյունքների վերաբերյալ պատճառաբանված փաստաթուղթ, որում արտացոլված կլինեն ինչպես քննության ժամանակ հավաքված ապացույցները, այնպես էլ քննության ժամանակ բացահայտված փաստերը: Վերոնշյալ փաստաթուղթը պետք է կազմված լինի այնպես, որ անաչառ անձի մոտ կասկած չառաջանա առ այն, որ իրականացվել է խիստ, անաչառ, անհավասար քննություն, որի արդյունքում քննությունն իրականացնող մարմինները հանգել են փաստաթղթում ներկայացված հետևությունների:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննությունների արդյունքները պետք է պարբերաբար վերլուծվեն՝ դրանց կատարելագործման ուղիների մշակման նկատառումներից ելնելով:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննությունն իրականացնող անձանց ևս որոշակի պահանջներ են ներկայացվում, մասնավորապես՝

- քանի դեռ հակառակն ապացուցված չէ, բոլոր միջադեպերն անհրաժեշտ է քննել որպես վատ վերաբերմունքի հետ կապված հավանական (պոտենցիալ) հանցագործություններ,
- քննությունը պետք է պլանավորված լինի,
- գործի հանգամանքները պետք է քննվեն մանրամասնորեն և անաչառ, ձեռք բերված ամբողջ տեղեկությունը պետք է գրանցվի և փաստաթղթավորվի,
- կողմերին պետք է քննության վերաբերյալ համապատասխան տեղեկություն տրամադրվի,
- անհրաժեշտության դեպքում քննության ամբողջ ընթացքում վատ վերաբերմունքից ենթադրյալ տուժածներին և վկաներին պետք է պաշտպանություն տրամադրվի, ինչպես նաև պետք է ձեռնարկվեն բոլոր միջոցները, որպեսզի վատ վերաբերմունքի ենթադրյալ կասկածյալները կամ մեղադրյալները չկարողանան խաթարել քննության ընթացքը,

- վատ վերաբերմունքի վերաբերյալ քննության իրականացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել վատ վերաբերմունքից տուժած անձանց, իսկ մահվան ելքի դեպքում՝ այդ անձի հարազատների խոցելիությունը,
- վատ վերաբերմունքի վերաբերյալ քննության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ենթադրյալ տուժողների և հանցագործների այնպիսի բնութագրիչ հանգամանքներ, ինչպիսիք են՝ ռասան, սեռը, սեռական կողմնորոշումը, քաղաքացիությունը, քաղաքական և կրոնական հայացքները, մշակույթը, սոցիալական և էթնիկ ծագումը:

## **Վատ վերաբերմունքի վերաբերյալ ապացույցները**

### Բժշկական ապացույցներ

Բժշկական ապացույցները խոշտանգումների և վատ վերաբերմունքի կիրառման հետ կապված հանցագործությունների քննության ժամանակ լուրջ դերակատարություն ունեն: Բժշկական ապացույցներով հնարավոր է հիմնավորել, որ մարմնական վնասվածքները կամ վատ վերաբերմունքի ենթադրյալ գոհի վարքագծի փոփոխությունները հետևանք են խոշտանգման կամ վատ վերաբերմունքի: Ժամանակակից բժշկական տեխնոլոգիաները թույլ են տալիս բացահայտել փափուկ հյուսվածքների կամ նյարդերի այնպիսի վնասվածքներ, որոնք անզեն աչքով տեսնել հնարավոր չէ:

Բժշկական ապացույցների կարևորությունն ընդգծվել է *Ա. Գզոյանի* վերաբերյալ նախադեպային որոշման մեջ, որում ՀՀ վճռաբեկ դատարանը, ուղեցույց ունենալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Մամադովն ընդդեմ Ադրբեջանի* վճռի մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը, ամրագրել է, որ՝ «(...) ծառայողական քննություն իրականացրած մարմինը չի անդրադարձել մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարությանը, դա ստուգելու նպատակով դատաբժշկական փորձաքննություն չի նշանակել, մինչդեռ դատաբժշկական ապացույցներն առանցքային նշանակություն ունեն խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունների արդյունավետ քննության համար: Այս առումով Վճռաբեկ դատարանի համար ուղեցույց է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Մամադովն ընդդեմ Ադրբեջանի* գործով վճռի մեջ ամրագրված մոտեցումն այն մասին, որ. «Իշխանությունները պետք է

ողջամիտ քայլեր ձեռնարկեն ապահովելու համար միջադեպին վերաբերող ապացույցների պահպանությունը՝ ներառյալ դատաբժշկական ապացույցները: (...) [Դ]ատաբժշկական ապացույցները ժամանակային առումով չապահովելը հանդիսանում է սույն գործով ոչ արդյունավետ քննություն իրականացնելու հիմնական գործոններից մեկը: Ժամանակին կատարված բժշկական հետազոտությունը բժշկին հնարավորություն կտար վնասվածքների պատճառման ժամանակի և դրանց պատճառների վերաբերյալ առավել որոշակի եզրակացության հանգել» (տե՛ս, *Mammadov (Jalaloglu) v. Azerbaijan*, 2007 թվականի հունվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 34445/04, կետ 74)» (տե՛ս, Արայիկ Էդուարդի Գզոյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի ԵԱԲԴ/0049/01/09 որոշման 24-րդ կետը):

Վատ վերաբերմունքը շատ հաճախ հոգեկան վնասվածքներ է պատճառում, նման դեպքերում բժշկական ապացույցների ձեռքբերման համար անհրաժեշտ է դատահոգեբանական և (կամ) դատահոգեբուժական ուղորտի մասնագետի օգնությունը: Թեև հոգեկան վնասվածքները դժվար է հայտնաբերել, քանի որ դրանք անհատական են և կապված են կոնկրետ անձի հոգեկան առանձնահատկությունների հետ, այնուամենայնիվ, դատական հոգեբանության և դատական հոգեբուժության ժամանակակից մեթոդները հնարավորություն են տալիս հայտնաբերել այդ վնասվածքները:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննության համար կարևորվում են ձեռքբերվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրերում իրականացված բժշկական զննությունների արձանագրությունները, ինչպես նաև համապատասխան վայրերի բժշկական անձնակազմի անդամների հարցաքննությունները: Բժշկական անձնակազմի հարցաքննությունը նպատակ է հետապնդում պարզել՝

- արդյոք նրանք հնարավորություն ունեցել են անկախ զննություն իրականացնել,
- նրանց կողմից զննության իրականացման ժամանակ այլ անձ կամ անձինք ներկա եղել են,
- զննության իրականացման ժամանակ անձի վրա բռնության հետքեր հայտնաբերվել են,
- զննության արդյունքում արդյոք արձանագրություն կազմվել է,
- ինչ է նշվել արձանագրության մեջ,

- զննության իրականացման կամ արձանագրության կազմման ժամանակ նրանց նկատմամբ ճնշում գործադրելու փորձեր եղել են կամ ճնշում գործադրվել է:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննության համար դժվար է գերազմահատել դատաբժշկական, դատահոգեբանական և դատահոգեբուժական փորձաքննությունների եզրակացությունները, ուստի վատ վերաբերմունքի վերաբերյալ դեպքերի քննության ժամանակ վերոնշյալ փորձաքննություններից մեկի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ բոլորի նշանակումը պարտադիր է:

*Հարցաքննությունների իրականացումը և հարցաքննությունների արձանագրությունները*

Վատ վերաբերմունքի զոհերի, վկաների, կասկածյալների հարցաքննությունների և դրանց արձանագրման վրա ընդհանուր առմամբ տարածվում են այն նույն պահանջները, որոնք ներկայացվում են ցանկացած այլ քրեական կամ կարգապահական վարույթի ընթացքում իրականացվող հարցաքննություններին և դրանց արձանագրման կարգին: Ցանկացած այլ հարցաքննության մեծ, վատ վերաբերմունքի քննության ընթացքում իրականացվող հարցաքննությունը նպատակ է հետապնդում ստանալ ճշմարիտ տեղեկություններ, որոնց միջոցով հնարավոր կլինի բացահայտել, թե ինչ է տեղի ունեցել:

Վերոնշյալ ընդհանուր պահանջներից բացի, վատ վերաբերմունքի վերաբերյալ գործերի քննության ժամանակ իրականացվող հարցաքննություններին ներկայացվում են որոշակի առանձնահատուկ պահանջներ ևս: Սասնավորապես, գործի համար նշանակության ունեցող հանգամանքների վերհանման նպատակով կարևորվում է հարցաքննվող և հարցաքննող անձանց միջև վստահության առկայությունը, հարցաքննվող անձի նկատմամբ համբերատարությունը և հարցաքննության իրականացման մեթոդայնությունը: Վատ վերաբերմունքի վերաբերյալ գործերով իրականացվող հարցաքննությունների այս հայեցակետը մասնաբաժնի ամրագրված է Ստամբուլյան արձանագրության մեջ<sup>89</sup>:

---

<sup>89</sup> Ստամբուլյան արձանագրություն «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ քննության և փաստաթղթավորման

Վատ վերաբերմունքի վերաբերյալ գործերով իրականացված հարցաքննությունների արձանագրությունները տեղեկության արժեքավոր աղբյուր են, սակայն անհրաժեշտ է հիշել, որ դրանք վատ վերաբերմունքի վերաբերյալ գործի քննության ընթացքում ձեռք բերվող ապացույցների մի մասն են կազմում և պետք է դրանցով սահմանափակել գործի ամբողջ քննությունը: Այս առումով հատկապես վտանգավոր են վատ վերաբերմունքի մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց ինքնախոստովանական ցուցմունքների արձանագրությունները, քանի որ գործի դատական քննության ընթացքում դրանցում ամրագրված տեղեկությունը շատ հեշտությամբ կարող է փոխվել՝ հանգեցնելով մեղադրանքի թուլացմանը:

Հարցաքննությունները պետք է իրականացվեն անկողմնակալ կերպով, իսկ դրանց արդյունքում ստացված տեղեկությունները պետք է համեմատվեն այն հանգամանքների հետ, որոնք արդեն հայտնի են քննություն իրականացնող անձին: Հարցաքննության ժամանակ հարցերը պետք է ձևակերպվեն հստակ: Հարցաքննություն իրականացնող անձը պարտավոր է ընդունել իր հարցի առաջին իսկ պատասխանը և նրա կողմից հարցը մի քանի անգամ համառորեն կրկնելը չի կարող դիտվել որպես անբարեխիղճ կերպով հարցաքննության իրականացում: Այն դեպքերում, երբ վատ վերաբերմունքի մեջ կասկածվող կամ մեղադրվող անձն օգտվում է լռելու իրավունքից, հարցաքննություն իրականացնող անձն իրավունք ունի հարցեր տալ և հարցաքննության արձանագրության մեջ գրանցել այդ հարցերի կապակցությամբ դրսևորվող արձագանքը կամ դրա բացակայությունը: Հարցաքննություն իրականացնող անձը պետք է ծանոթ լինի հարցաքննվող անձի մշակութային և կրոնական հայացքներին, ինչը հնարավորություն կտա խուսափել վերջինիս վարքագծի վերաբերյալ սխալ ենթադրություններից: Հարցաքննություն իրականացնող անձը պետք է զգուշություն դրսևորի այն առումով, որ իր մշակութային արժեքների և պատկերացումների հիման վրա ենթադրություններ չանի:

Անփոփելիով վերոգրյալը՝ ստորև շարադրենք այն պահանջները, որոնք ներկայացվում են վատ վերաբերմունքի վերաբերյալ գործերով

---

*ուղեցույց*», ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Գլխավոր հանձնակատարի վարչություն, Նյու Յորք և ժնև, 2001թ.:

հարցաքննությունն իրականացնող անձին: Այսպես, հարցաքննությունն իրականացնող անձը պետք է.

- հնարավորինս շատ բան իմանա ենթադրյալ հանցագործության և դրա հետ կապված հանգամանքների մասին,
- իմանա, թե ինչ ապացույցներ են արդեն ձեռք բերվել,
- իմանա, թե հատկապես ինչ տեղեկություն է ցանկանում ստանալ հարցաքննվող անձից,
- իմանա, թե ինչ է անհրաժեշտ ապացուցել կոնկրետ գործով,
- հնարավորինս շատ բան իմանա հարցաքննվող անձի մասին:

Ինչ վերաբերում է հարցաքննությունների արձանագրություններին, ապա վատ վերաբերմունքի վերաբերյալ գործերի քննության ընթացքում իրականացվող հարցաքննությունների արձանագրությունների մեջ պետք է *verbatim* (ձեռագիր, եթե բացակայում են արձանագրման էլեկտրոնային միջոցները) արտացոլված լինեն հարցաքննության իրականացման պայմանները, հարցերը, դրանց պատասխանները և վերջիններիս ուղեկցող բոլոր երևույթները:

#### Վատ վերաբերմունքից տուժածի հարցաքննությունը

Վատ վերաբերմունքից ենթադրյալ տուժածի հարցաքննության կարևորությունը դժվար է գերազանահատել, քանի որ մեծամասամբ վատ վերաբերմունքի վերաբերյալ գործերով որպես հիմնական ապացույցներ են հանդես գալիս բժշկական ապացույցները և վատ վերաբերմունքից ենթադրյալ տուժածի հարցաքննության արձանագրությունը:

Վատ վերաբերմունքից ենթադրյալ տուժածի հարցաքննության իրականացման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն պետք է իրականացվի հարցաքննվող անձի ֆիզիկական և հոգեկան վիճակի առավելագույնս հաշվառմամբ: Անհրաժեշտ է զգույշ լինել անձին կրկին հոգեկան վնասվածք չպատճառելու համար: Վատ վերաբերմունքից ենթադրյալ տուժածի հարցաքննությունը կարող է իրականացվել մի քանի փուլով՝ որոշակի ժամանակահատվածի ընթացքում, քանի որ դեպքի առանձին մանրամասներ իմանալու համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել հարցաքննվող անձի վստահությունը: Ընդհանրապես, վատ վերաբերմունքից ենթադրյալ տուժածների հարցաքննությունը խորհուրդ է տրվում սկսել չեզոք հարցերի քննարկումից, որոնք կապված չեն վատ վերաբերմունքի հետ: Այսպիսի մոտեցումը հնարա-

վորություն կտա «վստահության մթնոլորտ» ստեղծել և կոյուրացնի առանձին, առավել զգայուն հարցերի քննարկումը:

Վատ վերաբերմունքի ենթադրյալ զոհերի հարցաքննության հիմնական նպատակը հնարավորինս մանրամասն տեղեկություն ստանալն է հետևյալ հարցերի վերաբերյալ.

- Ի՞նչ է կատարվել տուժողի հետ:
- Ե՞րբ է կատարվել:
- Որտե՞ղ է դա տեղի ունեցել:
- Ո՞վ է կատարել այդ արարքը:
- Ի՞նչ հաճախականությամբ:
- Ինչո՞ւ է դա կատարվել:
- Ի՞նչ հետևանքներ են առաջացել:

Վատ վերաբերմունքի ենթադրյալ զոհի հարցաքննության իրականացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ նա կարող է վախեցած և շփոթված լինել կամ գտնվել հետվնասվածքային սթրեսի վիճակում: Հարցաքննություն իրականացնող անձը պետք է գիտակցի, որ նշված հանգամանքները կարող են ազդել նրա կողմից տրված տեղեկությունների հաջորդականության և հետևողականության վրա, իսկ առանձին հարցեր հասկանալը կարող է պարզապես դժվար լինել տուժողի համար: Վերջին դեպքում անհրաժեշտ է վերածնունդի հարցը կամ անդրադառնալ դրան հարցաքննության հաջորդ փուլերում:

Եսեկյան համալսարանում գործող մարդու իրավունքների կենտրոնի կողմից մշակվել է այն հարցերի մոտավոր շրջանակը, որոնք պետք է պարզի քննիչը վատ վերաբերմունքի ենթադրյալ զոհի հարցաքննության ընթացքում<sup>90</sup>: Այդ հարցերի թվին են դասվում.

- Հարցաքննվող անձին մախքան ձերբակալելը սպառնացե՞լ են: Ինչպե՞ս է իրականացվել ձերբակալումը և դրա ընթացքում հարցաքննվող անձին մարմնական վասվածքներ պատճառվե՞լ են: Որևէ անձ ներկա գտնվե՞լ է ձերբակալմանը: Հարցաքննվող անձը ենթարկվե՞լ է, արդյոք, վատ վերաբերմունքի մախքան կալանավորումը:

---

<sup>90</sup> Կամիլ Ժիֆար «Խոշտանգումներ. հաղորդումների կազմման վերաբերյալ ուղեցույց», Մարդու իրավունքների կենտրոն, Եսեկյան համալսարան՝ համագործակցությամբ Բրիտանական արտաքին գործերի և Միության գործերով մախարարության հետ, 2000թ.:

- Որտե՞ղ է պահվել հարցաքննվողը:
- Որքա՞ն ժամանակ է նա պահվել այդ վայրում:
- Տեղափոխվե՞լ է, արդյոք, մի վայրից մյուսը: Եթե այո, ապա՝ ո՞ր և ե՞րբ է նա տեղափոխվել: Ինչպե՞ս է իրականացվել տեղափոխումը, անձին բացատրվե՞լ են, արդյոք, նրա տեղափոխման պատճառները: Եթե տեղափոխումը ժամանակավոր բնույթ է կրել, ապա անհրաժեշտ է պարզել, թե որքան ժամանակ է անձը պահվել այդ վայրում:
- Ե՞րբ են իրականացվել ենթադրյալ խոշտանգումները:
- Ո՞վ է մասնակցել ձերբակալմանը, կալանավորմանը և ենթադրյալ խոշտանգումներին (այդ անձանց նկարագրությունը):
- Ի՞նչ են ասել հարցաքննվողին այդ անձինք կամ ի՞նչ հարցեր են տվել:
- Ի՞նչ կարգ էր գործում կալանավայրում:
- Ի՞նչ խոշտանգումներ են իրականացվել (խոշտանգումների իրականացման փաստերի նկարագրությունը), ի՞նչ մեթոդներ, գործիքներ կամ այլ առարկաներ են կիրառվել:
- Ինչպիսի՞ն էր այն վայրը, որտեղ իրականացվել են ենթադրյալ խոշտանգումները: Անհրաժեշտության դեպքում հարցաքննվող անձին կարելի է խնդրել, որ նա նկարի այդ վայրը, դրանում առարկաների դասավորվածությունը:
- Հարցաքննվող անձը սեռական բռնության ենթարկվե՞լ է:
- Ի՞նչ մարմնական վնասվածքներ է ստացել հարցաքննվող անձը ենթադրյալ խոշտանգման արդյունքում:
- Այլ անձինք ներկա եղե՞լ են ենթադրյալ խոշտանգումների իրականացման ժամանակ:
- Ենթադրյալ խոշտանգումների իրականացումից առաջ, հետո կամ դրա ընթացքում բժշկական անձնակազմի անդամ ներկա գտնվե՞լ է, եթե այո, ապա ինչո՞ւն է կայացել նրանց դերակատարությունը:
- Խոշտանգումից անմիջապես հետո կամ որոշ ժամանակ անց, այդ թվում ազատ արձակվելուց հետո, հարցաքննվող անձին որևէ բժշկական օգնություն տրամադրվե՞լ է: Բժշկական օգնություն իրականացնող անձին անկախ բժշկական զննություն իրականացնելու հնարավորություն ընձեռվե՞լ է: Բժշկական զննության ժամանակ որևէ անձ ներկա գտնվե՞լ է: Ձննության արդյունքում բժշկի կողմից արձանագրություն կազմվե՞լ է, ի՞նչ է դրանում նշվել:
- Հարցաքննվող անձը որևէ մեկի հայտնե՞լ է իրեն խոշտանգելու վերաբերյալ, եթե այո, ապա ի՞նչ արձագանք է ստացել, քննություն



իրականացվել է, վկաների և ենթադրյալ իրավախախտների հարցաքննություն իրականացվել է:

- ենթադրյալ խոշտանգումից հետո հարցաքննվող անձը որևէ կապ ունեցել է իրեն ազատությունից զրկած անձանց հետ:

Հնարավորության դեպքում հարցաքննվող անձին կարելի է ճշտող հարցեր տալ, օրինակ, թե որտեղից նա գիտի, որ սենյակը հենց այս չափի էր կամ ինչ է նրան հիշեցնում այս կամ այն հոտը, ում էր նման հարցաքննվողին ենթադրաբար խոշտանգած անձը և այլն: Նման հարցերը հնարավորություն կտան լրացուցիչ տեղեկություն ստանալ կամ ամրապնդել ունեցած տեղեկությունը: Բացի դրանից, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ հարցաքննվող անձը կարող է զրկված լինել իրեն ենթադրաբար խոշտանգած անձին տեսնելու հնարավորությունից՝ աչքերը կապված լինելու կամ այլ պատճառով, ուստի նման դեպքերում հարցաքննվող անձին պետք է հարցնել, թե նա ինչ է լսել, զգացել կամ շոշափել:

Եթե վատ վերաբերմունքը սեռական բռնության ձևով է իրականացվել, ապա ենթադրյալ տուժողների հարցաքննության ժամանակ անհրաժեշտ է զգուշություն դրսևորել և անշեղորեն պահպանել խորհրդապահության սկզբունքը, քանի որ այդ դեպքերի նկարագրությունը հարցաքննվող անձի համար կարող է շատ ծանր փորձություն լինել: Սեռական բռնությունների զոհերի հարցաքննությունը ցանկալի է, որ իրականացնեն հարցաքննվող անձի հետ նույն սեռի քննիչները:

Սեռական բռնությունների զոհերը մեծամասամբ չեն ցանկանում պատմել իրենց հետ կատարվածի մասին, սկզբնական շրջանում նրանք անգամ ժխտում են բռնության փաստը, ինչը խոչընդոտում է վատ վերաբերմունքի վերաբերյալ քննությանը: Այդ պատճառով անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները սեռական բռնության, այն կատարող անձանց մասին մանրամասն և հստակ տեղեկություններ ստանալու համար: Սեռական բռնության զոհերի հարցաքննության ժամանակ կարևոր է «վստահության մթնոլորտի» առկայությունը և հարցաքննությունն իրականացնող անձի համբերատարությունը, նշված հանգամանքների առկայության դեպքում է հնարավոր հարցաքննության տարբեր փուլերի ընթացքում սեռական բռնության ենթադրյալ զոհից ստանալ անհրաժեշտ տեղեկություն:

Վատ վերաբերմունքից տուժած անչափահասի հարցաքննությունը

Անչափահասները կարող են իրենք ենթարկվել վատ վերաբերմունքի կամ նրանց կարող են պարտադրել դիտել, թե ինչպես են խոշտանգվում իրենց ծնողները կամ հարազատները: Երկու դեպքերն էլ երեխայի համար կարող են հոգեկան ծանր հետևանքներ ունենալ, ուստի անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր միջոցները երեխային հարցաքննության ընթացքում կրկին հոգեկան վնասվածքի չենթարկելու համար:

Անչափահասների հարցաքննությունն էականորեն տարբերվում է չափահաս անձանց հարցաքննությունից, այդ պատճառով էլ հարցաքննություն իրականացնող անձը պետք է երեխաների հետ աշխատելու որոշակի փորձ ունենա և երեխաների հարցաքննության վերաբերյալ հատուկ ուսուցում անցած լինի:

Երեխաների հարցաքննության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրա վարքագծին, ժեստերին և միմիկային, քանի որ դրանք հաճախ ավելի շատ տեղեկություն են պարունակում, քան բառերը: Հարցաքննության ընթացքում երեխայի նկատմամբ ցանկացած ճնշում անթույլատրելի է:

Վատ վերաբերմունքի մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի հարցաքննությունը

Վատ վերաբերմունքի մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց հարցաքննության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ վերջիններս պաշտոնատար անձինք են և, որպես կանոն, ունեն քրեական արդարադատության հետ աշխատանքի բավական մեծ փորձ: Նշված հանգամանքը ենթադրում է, որ վատ վերաբերմունքի մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց հարցաքննությունն անհրաժեշտ է նախապես պլանավորել և համակարգել, ինչպես նաև որոշել այն հարցերի շրջանակը, որոնք ուղղվելու են ենթադրյալ հանցագործին: Հարկ է նշել, որ վատ վերաբերմունքի պատշաճ քննությունը ենթադրում է ոչ միայն վատ վերաբերմունքի կատարման մեջ անմիջականորեն կասկածվող կամ մեղադրվող անձանց, այլև բոլոր այն անձանց հարցաքննությունը, ովքեր պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում վատ վերաբերմունքի ենթարկված անձին պահելու վայրում կամ գիտեին վատ վերաբերմունքի մասին, սակայն միջոցներ չեն ձեռնարկել այն կանխելու համար կամ այդ մասին չեն հայտնել համապատասխան իրավասու մարմնին:

Վատ վերաբերմունքի մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց հարցաքննությունը պետք է իրականացվի անկախ և անկողմնակալ կերպով: Նշված պահանջները կարևորվում են հատկապես այն պատճառով, որ այն պաշտոնատար անձը, ով կասկածվում կամ մեղադրվում է վատ վերաբերմունքի մեջ, կարող է վայելել իր գործընկերների համակրանքը, նրա հարցաքննությունը կարող է իրականացվել շահերի և քննության ընթացքի վրա ազդող այլ գործոնների բախման ֆոնի վրա:

Վատ վերաբերմունքի մեջ կասկածվող կամ մեղադրվող անձինք պետք է հարցաքննվեն առանձին, նրանց չպետք է թույլատրվի խորհրդակցել միմյանց հետ: Քննության իրականացման ողջ ընթացքում նրանց լիազորությունները պետք է ժամանակավորապես դադարեցվեն: Վատ վերաբերմունքի մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց հարցաքննությունն անհրաժեշտ է իրականացնել այնպես, որ հետագայում դրանց անթույլատրելիության հարց չբարձրանա:

#### *Վատ վերաբերմունքի վկաների հարցաքննությունը*

Վկաները, ովքեր տեսել են անձին ձերբակալումից առաջ կամ հենց ձերբակալման ընթացքում, կարող են արժեքավոր տեղեկություն տալ նրա ֆիզիկական վիճակի մասին, նկարագրել, թե ինչ հանգամանքներում, ինչ միջոցներով և ինչպես է իրականացվել ձերբակալումը, ինչպես նաև ճանաչել իրավապահ մարմինների այն աշխատակիցներին, ովքեր անմիջականորեն իրականացրել են ենթադրաբար վատ վերաբերմունքի ենթարկված անձի ձերբակալումը:

Որպես վատ վերաբերմունքի վկաներ կարող են հարցաքննվել նաև տվյալ անձի հետ պահված այլ ձերբակալվածները կամ կալանավորվածները: Նրանք կարող են տեղեկություն հայտնել այն մասին, թե երբ է վատ վերաբերմունքի ենթարկված անձը տարվել հարցաքննության, ինչ վիճակում է եղել հարցաքննությունից առաջ կամ հետո, կամ ընդհանրապես նա վերադարձել է հարցաքննությունից հետո, թե՛ ոչ: Այս վկաները կարող են լսած լինել ձայներ, ճիչեր կամ տեսած լինել խոշտանգման գործիքները, դրանց վրա առկա հետքերը: Նրանք կարող են հայտնել, թե ինչ վնասվածքներ են եղել վատ վերաբերմունքի ենթարկված անձի վրա, որոնք են դրանցից հին, որոնք են նոր, նրանք կարող են հիշել վատ վերաբերմունքի իրականացման վայրը, ժամա-

նակը կամ դա իրականացնող անձին կամ անձանց: Չի բացառվում, որ այս անձինք ևս ենթարկված լինեն վատ վերաբերմունքի կամ տեղեկություն հայտնեն այլ անձանց նկատմամբ իրականացված վատ վերաբերմունքի մասին:

Որպես վատ վերաբերմունքի վկաներ կարող են հանդես գալ այլ ոստիկանները, ոստիկանության կամ ազատությունից զրկված անձին պահելու վայրի այլ աշխատակիցները, քանի որ նրանք ևս կարող է լսած կամ տեսած լինեն, թե ինչպես են իրականացվում խոշտանգումները կամ վատ վերաբերմունքի այլ ձևերը, նրանք կարող է տեղեկություն ունենան, թե ինչպես և ում կողմից են նախապատրաստվել այդ հանցագործությունները կամ կարող է մասնակցած լինեն վատ վերաբերմունքի հետքերը թաքցնելուն:

Այն դեպքերում, երբ վատ վերաբերմունքի ենթարկված անձը դեռևս պահվում է անազատության մեջ կամ անհայտացել կամ մահացել է, ապա որպես վկա կարող են հարցաքննվել նրա հարազատները, հարևանները, ընկերները և այլոք, քանի որ նրանք ևս կարող են վատ վերաբերմունքի վերաբերյալ քննության համար արժեքավոր տեղեկություն հայտնել:

Վատ վերաբերմունքի վկաների հարցաքննություններին և դրանց արձանագրմանը ներկայացվում են այն նույն պահանջները, ինչ ցանկացած այլ քրեական կամ կարգապահական վարույթի ընթացքում իրականացվող հարցաքննություններին և դրանց արձանագրման կարգին: Վատ վերաբերմունքի վկաների հարցաքննությունը ևս նպատակ է հետապնդում ստանալ ճշմարիտ տեղեկություններ, որոնց միջոցով հնարավոր կլինի բացահայտել, թե ինչ է տեղի ունեցել: Վերոնշյալ ընդհանուր պահանջներից բացի, սակայն, վատ վերաբերմունքի վերաբերյալ գործերի քննության ժամանակ իրականացվող հարցաքննություններին ներկայացվում են որոշակի առանձնահատուկ պահանջներ ևս: Մասնավորապես, վատ վերաբերմունքի վկայի հարցաքննության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նրա խոցելիությունը, վախեցած կամ շփոթված լինելը: Անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի նման վկան հարցաքննության ընթացքում կրկին հոգեկան վնասվածք չստանա և նրա ցուցմունքների որակի վրա չազդեն իր իսկ շփոթվածությունն ու խոցելիությունը: Վատ վերաբերմունքի վկայի հարցաքննության ժամանակ չպետք է անտեսել այն հանգամանքը, որ նա կարող է հետվնասվածքային սթրես կամ ժամանակավոր հոգեկան

խանգարում ունենալ, ինչը կարող է ազդել նրա հիշողության, զրուցելու ունակության և հարցաքննության ժամանակ տրվող արձագանքների վրա:

Վերոշարադրյալ հանգամանքները հաշվի առնելով՝ առաջարկվում է վատ վերաբերմունքի վկաների հարցաքննության ժամանակ պահպանել հետևյալ կանոնները՝

- կրկնել կամ վերաձևակերպել վկային ուղղված հարցերը, քանի որ նրան կարող է որոշակի ժամանակ պետք լինել տրված հարցը հասկանալու և դրան պատասխանելու համար,
- հարցերը ձևակերպել պարզ, ինչը հնարավորություն կտա վկային հեշտությամբ ընկալել հարցը և, հետևաբար՝ նաև հեշտությամբ պատասխանել դրանց,
- ձևակերպել բաց հարցեր, որոնք սպառնալիք չեն պարունակի կամ սպառնալիքի առկայություն չեն ենթադրի: Վկային ուղղվող հարցերը պետք է լինեն բաց, այսինքն՝ իրենցում չբովանդակեն հարցի պատասխանը և դրանով իսկ չուղղորդեն վկային: Վկային ուղղվող հարցում սպառնալիքի բացակայության պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ կոպիտ, սպառնացող հարցը կարող է ծայրահեղական արձագանքներ առաջացնել վկայի մոտ. նա կարող է նախահարձակ (ագրեսիվ) դառնալ կամ, ընդհակառակը, փորձել հաճոյանալ հարցաքննությունն իրականացնող անձին: Վերոնշյալ երկու դեպքում էլ անպայման կտուժի վկայի կողմից տրվող տեղեկության որակը:

Վատ վերաբերմունքի վկայի ցուցմունքների գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև վատ վերաբերմունքի դրսևորման հանգամանքները, քանի որ արարքը, որը կարող է տրիվիալ լինել մի ենթատեքստում, այլ հանգամանքներում կարող է նվաստացուցիչ կամ տրավմատիկ բնույթ կրել, օրինակ, վկայի կամ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ արված արտահայտությունը, որը սովորական պայմաններում անվնաս է թվում, որոշակի իրավիճակում կարող է այլ երանգ ունենալ և ընկալվել որպես սպառնալիք: Ցուցմունքների գնահատման ժամանակ չպետք է անտեսել նաև տվյալ հասարակությունում առկա պատկերացումները պատվի, արժանապատվության, ամոթի և այլ բարոյական կատեգորիաների վերաբերյալ:

### Վատ վերաբերմունքի անուղղակի ապացույցներ

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննության ընթացքում անուղղակի ապացույցների ձեռքբերման և զնահատման կարևորությունն ակնհայտ է՝ հաշվի առնելով հատկապես անազատության մեջ պահվող անձի նկատմամբ վատ վերաբերմունքի իրականացման փաստի ապացուցման դժվարությունը: Վատ վերաբերմունքի վերաբերյալ գործերով որպես անուղղակի ապացույցներ կարող են օգտագործվել հետևյալ հանգամանքները.

- անձը պահվել է գաղտնի վայրում և ոչ թե ազատությունից զրկված անձանց պահելու համար նախատեսված վայրերում,
- անձը որոշակի ժամանակահատվածի ընթացքում պահվել է անազատության մեջ՝ առանց նամակագրության կամ հաղորդակցման իրավունքի,
- անձը երկար ժամանակահատվածի ընթացքում պահվել է մեկուսի կամ մենախցում,
- անձը չի գրանցվել ազատությունից զրկված անձանց պահելու համապատասխան հիմնարկի գրանցամատյանում կամ դրանում առկա են անհամապատասխանություններ կամ անճշտություններ,
- իրեն ազատությունից զրկելու ամենավաղ փուլում անձը չի տեղեկացվել իր իրավունքների մասին,
- անձը զրկված է եղել պաշտպան ունենալու իրավունքից,
- ազատությունից զրկված օտարերկրյա քաղաքացին զրկված է եղել իր երկրի հյուպատոսական կամ դիվանագիտական ծառայությանը դիմելու հնարավորությունից,
- ազատությունից զրկված անձը բժշկական զննության չի ենթարկվել,
- առկա են թերություններ կամ կեղծիքներ անձի վերաբերյալ բժշկական փաստաթղթերում,
- անձը հարցաքննվել է պաշտպանի բացակայությամբ,
- անձի ցուցմունքները գրանցվել են ոչ ճիշտ կամ ոչ հարցաքննության իրականացման ընթացքում,
- անձի հարցաքննության արձանագրություններում հետագայում անօրինական ձևով փոփոխություններ են մտցվել,
- ազատությունից զրկված լինելու ամբողջ ընթացքում անձի աչքերը կամ բերանը կապվել են, առանց որևէ հիմքի նրան ձեռնաշղթաներ են հագցրել կամ զրկել իր հագուստով մնալու իրավունքից կամ ենթարկել են այլ սահմանափակումների,

- եթե *bona fide* իրավապաշտպան կազմակերպություններին, այցելուներին և փորձագետներին արգելվել է ազատությունից զրկված անձանց պահելու վայրեր մուտք գործել կամ նշված վայրեր նրանց մուտք գործելը հետաձգվել է անորոշ ժամանակով կամ դրան որևէ այլ կերպ խոչընդոտներ են հարուցվել:

## **Վատ վերաբերմունքի զոհերի և վկաների պաշտպանությունը**

Վատ վերաբերմունքի զոհերը և վկաները, հատկապես այն վկաները, ովքեր կարող են հետագայում կանչվել դատարան ցուցմունք տալու, շատ հաճախ կարող են ենթարկվել ֆիզիկական բռնության և (կամ) նման բռնության սպառնալիքի այն անձանց կողմից, ովքեր ցանկանում են խոչընդոտել նրանց կողմից ցուցմունք տալը: Այդ բռնությունները և սպառնալիքները կարող են լուրջ ազդեցություն ունենալ հատկապես այն դեպքերում, երբ վատ վերաբերմունքի տուժողը կամ վկան պահվում են անազատության մեջ: Նման երևույթներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է վատ վերաբերմունքի զոհերի և վկաների պաշտպանության միջոցներ ձեռնարկել:

Վատ վերաբերմունքի զոհերի և վկաների պաշտպանության ամենապարզ եղանակը դատարանում ցուցմունք տալու նպատակով կանչված այս անձանց դատարան գնալու և դատարանում գտնվելու ամբողջ ընթացքում նրանց ուղեկցող անձի տրամադրումն է: Վատ վերաբերմունքի տուժողների և վկաների պաշտպանության այլ ձևերն են.

- անձնական անվտանգության պահպանման վերաբերյալ խորհուրդները,
- պաշտպանության ենթակա անձի տանն անվտանգության ֆիզիկական միջոցների՝ անվտանգության համակարգերի, կողպեքների և այլնի տեղադրումը,
- բնակության կամ աշխատանքի վայրի փոփոխությունը,
- անձնական տվյալների և բնակության վայրի փոփոխությունը,
- անձի պաշտպանությունը կեղծ մեղադրանքներից,
- անձի ֆիզիկական պաշտպանությունը թիկնապահների հատկացման միջոցով:

Անձի նկատմամբ պաշտպանության միջոցի ընտրության ժամանակ վարույթն իրականացնող մարմինը կարող է խորհրդակցել տվյալ անձի հետ:

Վատ վերաբերմունքի զոհերի և վկաների պաշտպանության կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանց ցուցմունքները կարող են որոշիչ նշանակություն ունենալ վատ վերաբերմունքի վերաբերյալ գործի դատական քննության և լուծման ժամանակ, և եթե անձը որոշակի ճնշումների ազդեցության տակ դատարանում հրաժարվի իր ցուցմունքներից, ապա վատ վերաբերմունքի կատարման փաստը և դրա համար պատասխանատու անձանց մեղավորությունը հիմնավորելն անհամեմատ դժվար կլինի:

Վատ վերաբերմունքի զոհերի և վկաների պաշտպանության բոլոր միջոցները կարող են կիրառվել ինչպես դեպքից հետո, այնպես էլ նախաքննության ընթացքում և դրա ավարտից հետո: Պաշտպանության միջոցների կիրառման հիմք է հանդիսանում նաև տուժողի կամ վկայի հայտարարությունն այն մասին, որ իրեն ահաբեկում կամ սպառնում են:

Այն դեպքերում, երբ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառման արդյունքում անձը մահացել է, ապա պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունք ունեն որպես տուժողի իրավահաջորդ և վկա հանդես եկող անձինք, քանի որ վերջիններիս վրա ևս կարող են անօրինական ազդեցություններ և ճնշումներ գործադրվել:

### **Վատ վերաբերմունքի իրականացման մեջ մեղավոր անձանց քրեական հետապնդումն ու նրանց պատասխանատվության ենթարկելը**

ՀՀ ներպետական օրենսդրության իմաստով խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը բացարձակ բնույթ է կրում: Այսպես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությու-



յունների հետեւանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթներից»:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՍԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն պահովում է, որ խոշտանգման բոլոր գործողություններն իր քրեական օրենսդրությանը համապատասխան քննության առնվեն որպես հանցագործություններ: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկելու փորձին, ինչպես նաև ցանկացած անձի այն գործողություններին, որոնք ներկայանում են որպես մասնակցություն կամ գործակցություն խոշտանգմանը»:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, անբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:

Խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքի բացարձակ բնույթը բազմիցս շեշտադրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին

Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ կայացված նախադեպային որոշումներում: Մասնավորապես, *Ջելիլոֆն ընդդեմ Հունաստանի* վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) 3-րդ հոդվածը պաշտպանում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Անգամ այնպիսի բարդ իրավիճակներում, ինչպիսիք են ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ արտահայտություններով արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն Կոնվենցիայի և՛ 1-ին, և՛ 4-րդ Արձանագրությունների շատ նյութաիրավական դրույթների, 3-րդ հոդվածը, 15-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված թույլտվությունից բացի, որևէ բացառություն կամ սահմանափակում չի նախատեսում, անգամ ազգի գոյությանը սպառնացող արտակարգ դրության դեպքում (...)» (տես *Zelilof v. Greece*, 2004 թվականի մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03, կետ 42):

Ա. *Գոդյանի* վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման 23-րդ կետում ամրագրված է, որ խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը: ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ընդգծված պոզիտիվ պարտականությունները վերաբերում են առաջին հերթին վատ վերաբերմունքի իրականացման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց նկատմամբ արդյունավետ պաշտոնական քննության իրականացմանը, ապա՝ նշված անձանց պատասխանատվության ենթարկելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանի վկայակոչված որոշման մեջ առկա՝ պոզիտիվ գործողություններ կատարելու վերաբերյալ պահանջը համահունչ է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածում ամրագրված պահանջին, որի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի առաջին բաժնում», և հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն դիրքորոշման

վրա, որ վերոշարադրյալ հողվածուն կիրառվող՝ «ապահովել» բառը ենթադրում է այնպիսի միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականություն, որոնց արդյունքում կապահովվի իրավունքների երկուստեք՝ օրենսդրական և գործնական պատշաճ պաշտպանություն:

Խոշտանգումների, աննարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքի ապահովման ուղղությամբ պետությունների կողմից որոշակի պոզիտիվ պարտականությունների իրականացման անհրաժեշտությունը հիմնավորվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում: Մասնավորապես, *Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի* վճռում դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ՝ «(...) եթե անձը անուն է վստահելի հայտարարություն այն մասին, որ ինքն ի խախտումն 3-րդ հողվածի ենթարկվել է խոշտանգման ոստիկանի կամ նման այլ պետական պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Կոնվենցիայի 1-ին հողվածով ամրագրված՝ «իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման» պետությունների ընդհանուր պարտականության հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության առկայություն: (...) Հակառակ պարագայում, խոշտանգումների, աննարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար կարևորությանը, գործնականում ոչ արդյունավետ կլինի և որոշ դեպքերում հնարավոր կլինի պետական մարմինների կողմից խախտել իրենց տրամադրության տակ գտնվող անձանց իրավունքները և փաստացի մնալ անպատժելի (ի թիվս այլ աղբյուրների տե՛ս *Labita v. Italy*, գանգատ թիվ 26772/95, կետ 131)» (*Bekos and Koutropoulos v. Greece*, 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 15250/02, կետ 53):

Շարադրված դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով Ա.Գոյյանի վերաբերյալ գործի փաստական հանգամանքները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի նախաքննության ընթացքում պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գոյյանի հայտարարությունների ստուգման և նրան ենթադրաբար խոշտանգած անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Նման եզրակացության ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է՝ հաշվի առնելով Ա. Գոյյանի վերաբերյալ գործի մեջ առկա այն հանգամանքը, որ 2009 թվականի

մարտի 13-ին նշանակվել է ծառայողական քննություն, և դրա արդյունքում հաստատված է համարվել, որ «Ծառայողական քննությամբ պարզվել է, որ Ա. Գոյանի նկատմամբ Ա.Յամբարձումյանի կողմից անօրինական վերաբերմունք չի ցուցաբերվել (...): ԴՅ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի թիվ 818-Ն որոշմամբ հաստատված «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների» ցանկի 2-րդ կետի 3-րդ և 5-րդ ենթակետերի պահանջները լիարժեք չկատարելու՝ ԴՅ ոստիկանության [կազմակերպված հանցավորության դեմ պայքարի] գլխավոր վարչության շենք բերման ենթարկված Արայիկ Էդուարդի Գոյանի կողմից պաշտպանից հրաժարվելու հանգամանքը չարձանագրելու, ինչպես նաև վերջինիս պահանջով ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում Ա. Գոյանի գտնվելու վայրի մասին վերջինիս կողմից ընտրված անձին ուշացունով տեղեկացնելու համար ԴՅ ոստիկանության ԿՅԴՊ Գլխավոր վարչության 4-րդ վարչության 2-րդ բաժնի ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր Ավետիք Հրաչի Համբարձումյանի հարցը քննարկել ԿՅԴՊ Գլխավոր վարչության պետին կից օպերատիվ խորհրդակցությունում» (Քրեական գործ, 2-րդ - հատոր, 147-151 էջեր):

Ուստի քննարկվող նախադեպային որոշման մեջ ԴՅ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ծառայողական քննության արդյունքում կայացված որոշումը չի կարող գնահատվել որպես խոշտանգման փաստին պատշաճ արձագանք: ԴՅ վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմանն այն մասին, որ խոշտանգումը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության և պատժի (առավել մանրամասն տեսնել *Bati and Others v. Turkey*, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, 145-146 կետեր, *Mikheev v. Russia*, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռը, գանգատ թիվ 77617/01, 120 և 135 կետեր):

### **Վատ վերաբերմունքի արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունը**

ԴՅ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես

նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը (...):»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...) »:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ «1. Քրեական գործով վարություն մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

1) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով.

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի (...), էական խախտմամբ.

(...)

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:

Ա. Սարգսյանի վերաբերյալ որոշման 15-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում» (տես, Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ

վճռաբեկ դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի ԵՔՐԴ /0295/01/08 որոշման 15-րդ կետը):

*Ա.Սարգսյանի* վերաբերյալ որոշման մեջ արտահայտված սույն իրավական դիրքորոշման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը հենվել է *Ա.Գզոյանի* վերաբերյալ նախադեպային որոշման մեջ (տե՛ս, Արայիկ Էդուարդի Գզոյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի ԵԱՔԴ/0049/01/09 որոշման 35-րդ կետը) և դատողություն արել այն մասին, որ՝ «(...) անհասկանալի է, թե Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները, հաստատված համարելով այն, որ Ա. Գզոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման փաստը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, որն այլ ապացույցներով չի հաստատվել, կարո՞ղ էին արդյոք հիմնավորված հետևության հանգել այն մասին, որ վերոնշյալ 40 գրամ թմրամիջոցից Ա. Գզոյանը որոշակի չափաբաժիններով թմրամիջոց է իրացրել» (տե՛ս, Արայիկ Էդուարդի Գզոյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի ԵԱՔԴ/0049/01/09 որոշման 37-րդ կետը):

*Ա. Գզոյանի* վերաբերյալ որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից մեջբերված հարցերի բարձրացումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Ա. Գզոյանի գործով ինչպես Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի, այնպես էլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները գտել էին, որ Ա. Գզոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման հանգամանքը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, և դրա հիման վրա այն պետք է դիտել որպես չփարատված կասկած և մեկնաբանել հօգուտ ամբաստանյալ Ա. Գզոյանի: Մինչդեռ անդրադառնալով վերոնշյալ 40 գրամ թմրամիջոցից որոշակի չափաբաժիններով թմրամիջոցի իրացման վերաբերյալ փաստերին՝ դատարաններն անհասկանալի կերպով դրանք հիմնավորված էին համարել և Ա. Գզոյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով:

Ա. Գզոյանի մեղավորության վերաբերյալ վերոնշյալ ապացույցների գնահատման խնդրահարույց լինելը ՀՀ վճռաբեկ դատարանն ար-

ծանագրեց՝ հիմք ընդունելով Ա. Գզոյանի գործի մի շարք հանգամանքներ, մասնավորապես.

- 2009 թվականի մարտի 2-ին Ա. Գզոյանը ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևանի ոստիկանության վարչության Արաբկիրի ՔԲ քննիչ Ա.Յակոբյանին հայտնել է, որ՝ «(...) [ոստիկանության] 4-րդ բաժնում տրված բացատրությունները չ[են] համապատասխանում իրականությանը: Դրանք ներկայացվել են (...) ինձ ծեծի ենթարկելու, Երեխաներիս հասցեին ահաբեկչական հայհոյանքների և սպառնալիքների ազդեցության ներքո: Այդ ցուցմունքը ես ներկայացրել եմ ֆիզիկապես անտանելի հյուժված և հոգեպես ծանր՝ ծայրաստիճան ցնցված ու անկայուն վիճակում [՝ հ]արցաքննության ընթացքում չդիմանալով ֆիզիկական ահավոր ցավերին[՝, ռ]ետիմե մահակով հարվածներ ստանալով ոտքերիս տակ և երիկամներիս շրջանում: Այդ մահակի ուժեղ հարվածից պայթել է ձախ ականջիս ականջաթաղանթը և ես լիովին կորցրել եմ այդ ականջիս լսողությունը ու մի քանի սեղան ատամներ: (...)» (Քրեական գործ, 2-րդ - հատոր, 129 էջ):
- 2009 թվականի մարտի 4-ին Ա. Գզոյանի պաշտպան Ս. Միրզոյանը ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևանի ոստիկանության վարչության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Ա.Յակոբյանին տեղեկացրել է ոստիկանության աշխատակիցների կողմից իր պաշտպանյալին ծեծի ենթարկելու մասին (Քրեական գործ, 2-րդ հատոր, 115-117 էջեր):
- ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձերբակալված անձանց պահելու վայրի պետի 2008թ. նոյեմբերի 10-ի թիվ 8/8-215 գրությամբ փաստաբան Ս.Միրզոյանին հայտնվել է, որ՝ «Ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից ձերբակալված և 2008թ. հոկտեմբերի 15-ին Ոստիկանության Երևանի վարչության [ձերբակալվածներին պահելու վայր] բերված Արայիկ Էդուարդի Գզոյանը սահմանված կարգով ենթարկվել է բուժզննության, որի ընթացքում հայտնաբերվել և արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները՝ ձախ ձեռքի դաստակի ներսի մասում կա կտրված վերք, աջ բազկին կա կապտուկ, ձախ ականջին կապտուկ, ըստ նրա բանավոր հայտարարության վերը նշված վնասվածքները ստացել է երկու օր առաջ ծառից ընկնելու հետևանքով» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 212 էջ):
- Պաշտպանի վկայակոչված դիմումի կապակցությամբ 2009 թվականի մարտի 13-ին նշանակվել է ծառայողական քննություն, և



դրա արդյունքում հաստատված է համարվել, որ «Ծառայողական քննությանը պարզվել է, որ Ա. Գզոյանի նկատմամբ Ա.Յամբարձունյանի կողմից անօրինական վերաբերմունք չի ցուցաբերվել (...):

ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի թիվ 818-Ն որոշմամբ հաստատված «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող ծանուցման ենթակա իրավունքների» ցանկի 2-րդ կետի 3-րդ և 5-րդ ենթակետերի պահանջները լիարժեք չկատարելու` ՀՀ ոստիկանության [կազմակերպված հանցավորության դեմ պայքարի] գլխավոր վարչության շենք բերման ենթարկված Արայիկ Էդուարդի Գզոյանի կողմից պաշտպանից հրաժարվելու հանգամանքը չարձանագրելու, ինչպես նաև վերջինիս պահանջով ոստիկանություն բերելու պահից սկսած` երեք ժամվա ընթացքում Ա. Գզոյանի գտնվելու վայրի մասին վերջինիս կողմից ընտրված անձին ուշացումով տեղեկացնելու համար ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ Գլխավոր վարչության 4-րդ վարչության 2-րդ բաժնի ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր Ավետիք Հրաչի Համբարձունյանի հարցը քննարկել ԿՀԴՊ Գլխավոր վարչության պետին կից օպերատիվ խորհրդակցությունում» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 147-151 էջեր):

Մեջբերված փաստական հանգամանքներն արձանագրվել էին ինչպես Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի, այնպես էլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանների կողմից (տե՛ս, Արայիկ Էդուարդի Գզոյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի ԵԱՔԴ/0049/01/09 որոշման 14-րդ և 15-րդ կետերը), սակայն պատշաճ ուշադրության և զնահատականի չէին արժանացել: Նման հանգամանքների առկայության պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, կարծում ենք, կանխատեսելի էր և պատահական չէ, որ դատարանն արձանագրեց, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի միատեսակ կիրառության ապահովման խնդիր, և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածները` բեկանեց ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը և գործն ուղարկեց նույն դատարան` նոր քննության:

## Վատ վերաբերմունքից տուժած անձանց փոխհատուցումը

Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ տեսակների զոհերն իրավունք ունեն իմանալ, թե ինչ է իրենց հետ կատարվել, նրանք պետք է տեղեկացվեն նաև, որ իրենց հետ կատարվածի համար մեղավոր անձինք պատասխանատվության են ենթարկվել, բացի դրանից, վատ վերաբերմունքի զոհերն իրավունք ունեն պատճառված վնասի փոխհատուցում ստանալ:

Վատ վերաբերմունքի զոհերը շատ հաճախ թանկ և երկարատև բուժման կարիք ունեն: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ կիրառված բռնության արդյունքում վատ վերաբերմունքի զոհերը կորցնում են աշխատունակությունը, նրանց կյանքը լուրջ փոփոխությունների է ենթարկվում:

Վատ վերաբերմունքի զոհի մահվան դեպքում փոխհատուցում պահանջելու իրավունքը չի վերանում, այն պարզապես փոխանցվում է վատ վերաբերմունքի զոհի խնամարկյալներին:

Մարդու իրավունքների կոպիտ խախտումների զոհերի ռեստիտուցիայի, փոխհատուցման և վերականգնման իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն առաջարկել է այն հիմնական սկզբունքների և պահանջների նախագիծը, որոնք վերաբերում են դատական պաշտպանության և մարդու իրավունքների ու մարդասիրական իրավունքի վերաբերյալ միջազգային օրենսդրության խախտումների զոհերին պատճառված վնասի փոխհատուցման իրավունքներին (Վան Բովենի և Բասիոունիի սկզբունքներ)<sup>91</sup>:

Վան Բովենի և Բասիոունիի սկզբունքներն ամրագրում են փոխհատուցման հետևյալ ձևերը.

- Ռեստիտուցիա: Այս սկզբունքը պահանջում է միջոցների ձեռնարկում վերականգնելու համար այն կարգավիճակը, որն ունեցել է վատ վերաբերմունքի զոհը մինչև նրա նկատմամբ բռնություն կիրառելը: Ռեստիտուցիայի պահանջը ներառում է նաև իրավաբանական իրավունքների, սոցիալական կարգավիճակի, ընտանեկան կյանքի, բնակության վայրի, սեփականության և աշխատանքի վերականգնումը:
- Փոխհատուցում: Այս սկզբունքը պահանջում է միջոցների ձեռնարկում փոխհատուցելու համար բռնության արդյունքում առաջա-

<sup>91</sup>Տե՛ս, ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/2000/62, 2000 թվականի հունվարի 18:

ցած ցանկացած վնաս, այդ թվում ֆիզիկական, բարոյական վնասը, տառապանքը, ուսում ստանալու հնարավորությունից զրկվելը, աշխատանքի կորուստը, բժշկական և (կամ) իրավաբանական օգնության, սոցիալական ծառայությունների ծախսերը:

- Վերականգնում: Այս սկզբունքը պահանջում է միջոցների ձեռնարկում վատ վերաբերմունքի զոհերին բժշկական և հոգեբանական օգնություն տրամադրելու համար:
- Սատիսֆակցիա և երաշխիքներ, որ նման հանցագործությունները չեն կրկնվի: Այս սկզբունքը պահանջում է միջոցների ձեռնարկում խախտումների դադարեցումն ապահովելու, ճշմարտությունը բացահայտելու, պատասխանատվության և/կամ ներողություն հայցելու մասին պաշտոնապես հայտարարելու, խախտումների փաստերը պաշտոնապես ընդունելու, դատական կամ վարչական սանկցիաներ կիրառելու, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու, այդ թվում մարդու իրավունքների վերաբերյալ ուսուցում կազմակերպելու նպատակով:

Լուի Ջոյնը՝ Անօրենության հիմնախնդիրների վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը, մշակել է անօրենության դեմ պայքարի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության և քարոզման սկզբունքներ: Այս սկզբունքներն ընդունված է անվանել Ջոյնի սկզբունքներ<sup>92</sup> և դրանք, ի թիվս այլոց, ներառում են.

- Փոխհատուցում տրամադրելու պարտականությունից բխող իրավունքներ և պարտականություններ: Մարդու իրավունքների յուրաքանչյուր խախտում տուժողին (կամ նրա խնամարկյալներին) իրավունք է տալիս փոխհատուցում ստանալ, իսկ պետությանը պարտավորեցնում է փոխհատուցում տրամադրել:
- Փոխհատուցման ընթացակարգեր: Բոլոր տուժողներն իրավունք ունեն առանց հետաձգումների ստանալ պաշտպանության արդյունավետ միջոցներ քրեական, քաղաքացիական, վարչական կամ կարգապահական ընթացակարգերի միջոցով... Այս իրավունքի իրացման ժամանակ տուժողները պետք է պաշտպանված լինեն սպառնալիքներից և ռեպրեսիաներից:
- Փոխհատուցման ընթացակարգերի հրապարակայնությունը: *Ad hoc* ընթացակարգերը տուժողներին հնարավորություն են տալիս իրացնելու փոխհատուցման իրենց իրավունքը: Այս իրավունքի

---

<sup>92</sup> Տե՛ս, ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/Sub.2/1997/20/խմբ., 1997 թվականի հոկտեմբերի 1, 2:

վերաբերյալ տեղեկության տարածումը պետք է իրականացվի ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս՝ ընդգրկելով հյուպատոսական ծառայությունները, խոսքը վերաբերում է հատկապես այն երկրներում գործող հյուպատոսական ծառայություններին, որտեղ հարկադրաբար տեղափոխվել են վատ վերաբերմունքի բազմաթիվ զոհեր:

- Փոխհատուցման իրավունքի ծավալը: Փոխհատուցում ստանալու իրավունքը տարածվում է բոլոր տեսակի մարմնական վնասվածքների վրա, որոնք անձն ստացել է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի արդյունքում: Այն ներառում է անհատական միջոցները, որոնք վերաբերում են մարդու՝ ռեստիտուցիայի, փոխհատուցման և վերականգնման իրավունքներին, ինչպես նաև սատիսֆակցիայի ընդհանուր միջոցները... Եթե վատ վերաբերմունքի զոհն անհայտացել է, ապա կորած անձի ճակատագիրը պարզելուց հետո նրա ընտանիքի անդամները տեղի ունեցածի մասին տեղեկություն ստանալու անվիճելի իրավունք ունեն, անհայտացած անձի մահվան դեպքում նրա մարմինը հայտնաբերվելուց հետո պետք է հանձնվի նրա ընտանիքին՝ անկախ այն հանգամանքից, թե բացահայտվել են հանցանք կատարած անձինք, նրանք մեղադրվել կամ դատապարտվել են, թե՛ ոչ:

**Հավելված**

ԵԱԴԴ/0085/06/09



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԱԴԴ/0085/06/09  
Նախագահող դատավոր՝ Ա.Դանիելյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս.ՕՅԱՆՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 18-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ  
Գագիկ Գառնիկի Միքայելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական

դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի որոշման դեմ Գ.Միքայելյանի պաշտպան Ի.Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը,

## **Պ Ա Ր Զ Ե Ց**

### **Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Քրեական գործը հարուցվել է 2009թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով:

2. 2009թ. սեպտեմբերի 11-ի որոշմամբ Գագիկ Գառնիկի Միքայելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ:

3. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը 2009թ. սեպտեմբերի 11-ի որոշմամբ բավարարել է նախաքննության մարմնի միջնորդությունը և մեղադրյալ Գ.Միքայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել կալանքը՝ 2 ամիս ժամկետով:

4. Գ.Միքայելյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. հոկտեմբերի 2-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Գ.Միքայելյանի պաշտպան Ի.Պետրոսյանը:

5. Վճռաբեկ դատարանը 2009թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

6. Գ.Միքայելյանն Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. հոկտեմբերի 3-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման մեկ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան մեկ տարի ժամկետով:

7. 2009թ. սեպտեմբերի 11-ին Գ. Միքայելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34–177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ այն արարքի համար, որ նա ուրիշի զգալի չափերի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ 2009թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 02.45-ի սահմաններում, Երևան քաղաքի Շինարարների փողոցի 15/2 շենքի 12-րդ հարկում գտնվող վերելակի մեքենայական սրահի մուտքի դռան կախովի փականը կոտրելու միջոցով, ապօրինի մուտք է գործել սրահ և փորձել է այնտեղից գողանալ զգալի չափի արժեք ունեցող՝ վերելակի արգելակման կոճը, սակայն հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ բռնվել է շենքի բնակիչների կողմից:

8. Գ. Միքայելյանի նկատմամբ 2008թ. հոկտեմբերի 3-ի դատավճռով սահմանված մեկ տարի ժամկետով փորձաշրջանի հաշվարկումը սկսվել է 2009թ. փետրվարի 17-ից, ուստի Գ. Միքայելյանին մեղադրանք է առաջադրվել փորձաշրջանի ընթացքում՝ 2009թ. սեպտեմբերի 8-ին, կատարած գողության համար:

9. Գ. Միքայելյանը ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժին բերման է ենթարկվել 2009թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 03.05-ին: Գ. Միքայելյանին ձերբակալելու մասին արձանագրությունը կազմվել է 2009թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 23.30-ին: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացվել 2009թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 19-ի սահմաններում:

Դատարանը Գ.Միքայելյանի նկատման որպես խափանման միջոց կալանավորումը ընտրելու մասին որոշումը կայացրել է 2009թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 21-ի սահմաններում:

10. Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանն իր որոշման մեջ նշել է, որ «Գ. Միքայելյանը բերման ենթարկվելուց հետո գտնվել է անգիտակից վիճակում, և նրան այդ վիճակում ոստիկանությունում պահելը չի կարող դիտվել որպես նրա իրավունքների և ազատությունների սահմանափակում»:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերը փաստարկել է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ, 11-րդ, 130-րդ, 131-րդ, 131.1-րդ հոդվածների, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» ենթակետի միատեսակ կիրառության համար:

12. Բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 130-րդ, 131.1-րդ հոդվածների և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջները:

13. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Գ.Միքայելյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրվել է այն պարագայում, երբ արդեն իսկ լրացել է նրա անազատության մեջ գտնվելու 72 ժամը, բացի այդ, բողոքաբերը նշել է, որ Գ.Միքայելյանն անգիտակից վիճակում չի եղել, ավելին, 2009 թվականի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 14.00-ի սահմաններում՝ բերման ենթարկվելուց շուրջ 11 ժամ անց, անձամբ գրավոր հրաժարվել է հիվանդանոց տեղափոխվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը և Գ.Միքայելյանին անհապաղ ազատ արձակել կալանքից:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

1. Ենթադրաբար հանցագործություն կատարած լինելու հիմքով անձին ազատությունից զրկելու իրավական կառուցակարգերը.



14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում գտնվելու ընթացքում՝ նախքան ձերբակալման արձանագրությունը հայտարարելը, Գ.Միքայելյանն ունե՞ր արդյոք դատավարական կարգավիճակ:

15. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով»: Այնուհետև թվարկվում է անձին ազատությունից զրկելու իրավաչափ դեպքերի սպառիչ ցանկը, որոնց թվում է «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը» (4-րդ կետ):

Հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության կարգը, ներառյալ՝ այդ ընթացքում կիրառվող հարկադրանքի միջոցները սահմանող ճյուղային կողիֆիկացված օրենքը ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն է, որի 5-րդ բաժնում («Դատավարական հարկադրանքի միջոցները») ամրագրված են ենթադրաբար հանցագործություն կատարած լինելու հիմքով անձին ազատությունից զրկելու երկու ինքնուրույն միջոցներ՝ ձերբակալումը (17-րդ գլուխ՝ 128–133-րդ հոդվածներ) և խափանման միջոց կալանավորումը (18-րդ գլխի 137–142-րդ հոդվածներ):

16. Ձերբակալման և կալանավորման հարաբերակցության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանը 2009թ. սեպտեմբերի 12-ի ՍԴՈ-827 որոշման մեջ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտների՝ օրենսդրությամբ սահմանված նպատակների և հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այդ ինստիտուտներն ունեն ինքնուրույն բովանդակություն, հետապնդում են միմյանցից ըստ էության տարբերվող նպատակներ, ունեն կիրառման միմյանցից էապես տարբերվող հիմքեր: Դրանցից յուրաքանչյուրն օրենսդիրն ընտրել է որպես ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասով մատնանշված առանձին նպատակների հասնելու ինքնուրույն դատավարական միջոց, և կիրառվում է տարբեր հիմքերի առկայությամբ: Հետևաբար, դրանցից յուրաքանչյուրը, առանց որևէ փոխալայմանավորվածության, փոխկապակցվածության և հաջորդականության, ինքնուրույնաբար կարող է կիրառվել, երբ առկա են դրանով հետապնդվող նպատակները և դրա

կիրառման համար անհրաժեշտ հիմքերը: (...)»: (6-րդ կետի 4-րդ պարբերություն):

17. Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով Սահմանադրական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշմամբ, միաժամանակ ընդգծում է, որ ձերբակալումը և կալանավորումն ունեն էական ընդհանրություն ևս, այն է՝ երկուսն էլ հնարավորություն են տալիս հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի պարագայում դատավարական կարգավիճակ (կասկածյալի կամ մեղադրյալի) ունեցող անձին զրկել ազատությունից (պահել անազատության մեջ): Ընդ որում՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի բավարար աստիճանը ձերբակալման դեպքում ավելի ցածր է, քան կալանավորման դեպքում:

Այդուհանդերձ, ձերբակալման ընթացակարգի յուրահատկությունը հաշվի առնելով՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածով անձին ազատությունից զրկելու կառուցակարգը կարող է ընդգրկել որոշակի տևողությամբ սկզբնական փուլ, որի ընթացքում անձը կարող է որևէ դատավարական կարգավիճակ չունենալ՝ պայմանավորված գործող քրեադատավարական օրենսդրության անբավարար որոշակիությամբ:

18. Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ձերբակալումն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»:

Այս բնորոշումից երևում է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝ (1) անձին ազատությունից փաստացի զրկելը, (2) նրան իրավասու մարմին բերելը, (3) ձերբակալման արձանագրություն կազմելը և (4) այդ մասին նրան հայտարարելը: Ուստի անձը կարող է ձերբակալվածի կարգավիճակ ստանալ վերջին՝ չորրորդ գործողությունը կատարելու պահից, այսինքն՝ քրեական հետապնդման մարմնում ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելու պահից:

Նախքան դա՝ անձը, փաստացի արգելանքի վերցվելով և քրեական հետապնդման մարմին բերվելով, դեռևս ձերբակալվածի կարգավիճակ չի կարող ունենալ, մինչդեռ նրան արգելանքի վերցնելու և վարույթն իրականացնող մարմին բելելու հիմքը հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածն է՝ զուգորդված նրա փախուստը կանխելու նպատակով: Ընդ որում, այստեղ կասկածի հիմնավորվածության աստիճանն էլ ավելի ցածր է, քան ձերբակալման դեպքում:

19. Եթե բերված անձի նկատմամբ վարույթն իրականացնող մարմինը շարունակում և ավարտին է հասցնում ձերբակալման գործընթացը, ապա ԶԳ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ նախադասության ուժով ձերբակալման ժամկետի հաշվարկը սկսվում է արգելանքի վերցնելու պահից, սակայն դա կատարվում է հետադարձ կարգով: Ուստի արգելանքի վերցված ու վարույթն իրականացնող մարմին բերված անձը, նախքան ձերբակալման արձանագրությունն իրեն հայտարարելը, չի կարող բավարար որոշակիությամբ գիտակցել իր կարգավիճակը: Ավելին, քանի դեռ արձանագրությունը կազմված չէ, նա կարող է ազատ արձակվել՝ այդպես էլ չստանալով ձերբակալվածի կարգավիճակ:

20. Սույն որոշման 15–19-րդ կետերում արված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի հիմքով անձին ազատությունից զրկելու քրեադատավարական կառուցակարգերը չեն սահմանափակվում «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտներով, այլ ներառում են նաև արգելանքի վերցվելու և վարույթն իրականացնող մարմին բերվելու կառուցակարգը: Համապատասխանաբար, մինչդատական վարույթում «ձերբակալվածի» և «կալանավորվածի» կարգավիճակների հետ մեկտեղ ազատությունից զրկված անձը կարող է ունենալ նաև նախնական իրավական վիճակ, որը պայմանականորեն կարելի է անվանել «բերվածի» կարգավիճակ:

Բերմանը հարաբերական ինքնուրույնություն տալու օրենսդրի մոտեցման մասին է վկայում ԶԳ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասը, որը նախքան քրեական գործի հարուցումը թույլատրելի գործողությունների շարքում ամրագրում է նաև «հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում ... բերման ... ենթարկվել[ը]»:

21. Չնայած *բերվածի* կարգավիճակի կարճատևությանը՝ բերվածը պետք է օժտված լինի Սահմանադրական և Կոնվենցիոն համապատասխան երաշխիքներով:

Մասնավորապես, համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) արդարացի (...) դատաքննության իրավունք: (...)»: 6-րդ հոդվածի 3-րդ կետն ամրագրում է հանցագործություն կատարելու մեջ յուրաքանչյուր մեղադրվողի նվազագույն իրավունքները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա՝ «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե *ձևական* (փաստաթղթային), այլ *բովանդակային* (գործնական) իմաստով (*Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium)* գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 44): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (*Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany)* գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73, *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia)* գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62, *Գ. Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland)* գործով վճիռ, 2004թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98): Ընդ որում, մինչդաստական վարույթի նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի կիրառման եղանակը պայմանավորված է տվյալ վարույթի առանձնահատկություններով (Շաբելնիկն ընդդեմ Ուկրաինայի (Shabelnik v. Ukraine) գործով վճիռ, 2009թ. փետրվարի 19, գանգատ թիվ 16404/03, կետ 52):

22. Նախորդ կետում շարադրված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բերվածի իրավական վիճակը համապատասխանում է «քրեական մեղադրանքի» ներկայացման Կոնվենցիոն պահանջին՝ Եվրոպական դատարանի բովանդակային մեկնաբանմամբ: Ուստի բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով.

ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(ա) ենթակետից),

(բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից),

(գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասից),

(դ) լռելու (բխում է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասից):

Համապատասխանաբար, քրեական հետապնդման մարմինը պարտավոր է ապահովել բերվածի իրավունքների իրականացումը՝ բերվածի իրավունքները գրավոր պարզաբանելու, նրան առնվազն մեկ զանգի հնարավորություն ընձեռելու, բերվածի փաստաբանի մուտքը չխոչընդոտելու եղանակներով:

Այնքանով, որքանով վերաբերելի են (*mutatis mutandis*), սույն կետում ամրագրված նվազագույն իրավունքներով և երաշխիքներով օժտված են նաև ոստիկանությունում կամ քրեական հետապնդման այլ մարմնում գտնվող, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն անձինք, որոնք կարող են ողջամտորեն ենթադրել, որ (1) իրենց ազատությունը սահմանափակված է կամ իրենք ազատությունից զրկված են, և, միաժամանակ, որ (2) իրենք կասկածվում են հանցագործության մեջ:

23. Սույն որոշման 20-22-րդ կետերում սահմանված չափանիշները քննության առարկա գործի նկատմամբ կիրառելու արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում գտնվելու ընթացքում՝ նախքան ձերբակալման արձանագրության մասին իրեն հայտարարելը, Գ. Միքայելյանն ուներ *բերվածի* կարգավիճակ:

*II. Մինչդատական վարույթում ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքները.*

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Գ.Միքայելյանի ազատության իրավունքը սահմանափակելիս մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից պահպանվե՞լ են արդյոք ՀՀ Սահմանադրությամբ

և քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված երաշխիքները:

25. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝

«(...) Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «(...) ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանքը կատարելու մեջ կասկածվող անձին հետտաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ձերբակալվածը, վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, ենթակա է ազատման, եթե (...) լրացել է ձերբակալման սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել»:

26. Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից երևում է, որ անձի ազատության իրավունքի սահմանափակումը ենթադրում է ժամկետային տևողության և փաստաթղթային արձանագրման ուղղակի պահանջներ, որոնց թվին է դասվում ազատությունից զրկված անձին քրեական հետապնդման մարմին բերելուց առավելագույնը երեք ժամ հետո ձերբակալման արձանագրություն կազմելը:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածից բխում է, որ անձի ձերբակալման գործընթացն ավարտված է համարվում անձին արգելանքի վերցնելուց, նրան վարույթն իրականացնող մարմին բերելուց և ձերբակալման արձանագրություն կազմելուց հետո կազմված արձանագրության մասին ազատությունից զրկված անձին հայտարարելու պարագայում (տես սույն որոշման 18-րդ կետը): Այսինքն՝ սույն հոդվածի իմաստով անձն օրենքով սահմանված կարգով ձերբակալված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ նրան ազատությունից զրկելը պատշաճ կերպով արձանագրվել է և ինքը ծանոթացվել է կազմված արձանագրությանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանության արդյունքում պարզվում է, որ օրենսդիրը ժամանակային սահմանափակման (առավելագույնը 3 ժամ) ենթարկել է միայն անձին ձերբակալելու մասին արձանագրության կազմումը, իսկ այդ մասին նրան հայտարարելու համար որևէ ժամկետ չի սահմանել: Այսինքն՝ վերոնշյալ հոդվածների տառացի մեկնաբանությունից հետևում է, որ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձը մինչդատական վարույթն իրականացնող մարմին բերվելուց անգամ երեք ժամ հետո կարող է ձերբակալվածի կարգավիճակ ձեռք չբերել և, հետևաբար, զրկվել այդ կարգավիճակից բխող իրավական երաշխիքներից, եթե վարույթն իրականացնող մարմինը նրան չհայտարարի կազմված ձերբակալման արձանագրության մասին:

28. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածը պետք է մեկնաբանել 131<sup>1</sup>-րդ հոդվածի լույսի ներքո և ամրագրել, որ այն բանից հետո, երբ անձին քրեական հետապնդման մարմին բերելու պահից երեք ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմինը կկազմի կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, այդ մարմինը պարտավոր է անհապաղ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավելագույնը մեկ ժամվա ընթացքում դրա մասին հայտարարել ազատությունից զրկված անձին: Նման ժամկետային սահմանափակումը ողջամիտ է և բխում է ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքների ապահովման անհրաժեշտությունից: Նշված ժամկետային սահմանափակումից միակ իրավաչափ բացառությունը կարող է վերաբերել այն դեպքերին, երբ բերվածի ֆիզիոլոգիական վիճակը՝ ակոհոլի, թմրամիջոցների կամ այլ թմրեցնող նյութերի ազդեցության տակ լինելը կամ այլ համարժեք վիճակը, քրեական հետապնդման մարմնին օբյեկտիվորեն զրկում է ձերբակալման արձանագրությունը բերվածին հայտարարելու հնարավորությունից:

Այսպիսով, եթե քրեական հետապնդման մարմին բերվելուց չորս ժամ հետո ազատությունից զրկված անձին ձերբակալման արձանագրությունը չի հայտարարվի, ապա անձն օրենքի ուժով պետք է համարվի ձերբակալված և իրավունք ունենա օգտվել ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված՝ 72 ժամվա ընթացքում դատարանի

որոշմամբ չկալանավորվելու դեպքում անհապաղ ազատ արձակվելու իրավունքից:

29. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Գ.Միքայելյանը ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժին բերման է ենթարկվել 2009 թվականի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 03.05-ին, նրան ձերբակալելու մասին արձանագրությունը կազմվել է 2009 թվականի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 23.30-ին: Նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացվել 2009 թվականի սեպտեմբերի 11-ին՝ ժամը 19.00-ի սահմաններում, նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրվել է ժամը 21-ի սահմաններում (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Վերոգրյալից երևում է, որ Գ.Միքայելյանը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարան չի տարվել և ոչ էլ ազատ է արձակվել, այսինքն՝ մինչդատական վարույթում ավելի քան 16 ժամ ապօրինի գտնվել է անազատության մեջ:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Միքայելյանի ազատության իրավունքը սահմանափակելիս մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ապահովվել օրենքով նախատեսված իրավական երաշխիքները, մասնավորապես, խախտվել է 72 ժամվա ընթացքում դատարան տարվելու կամ ազատ արձակվելու նրա իրավունքը:

### *III. Ձերբակալման առավելագույն տևողության խախտման պայմաններում անձին կալանավորելու հնարավորությունը.*

30. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավական հարցը հետևյալն է.

Գ.Միքայելյանի ձերբակալման 72-ժամյա օրինական տևողությունը լրանալուց հետո դատարան ներկայացված՝ նրան կալանավորելու միջնորդությունը կարող էր բավարարվել, եթե դատարանը գտնում էր, որ նրան կալանավորելու հիմքերն առկա են:

31. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝

«(...) Մարդուն կարելի է ազատությունից զրկել կամ նրա ազատությունը սահմանափակել միայն (...) հետևյալ դեպքերում՝

(...)



3) հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում, (...)»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի՝ խափանման միջոց (այդ թվում՝ կալանավորումը) կարող է կիրառվել «միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

32. Նախորդ կետում շարադրված իրավանորմերից բխում է, որ անձին կալանավորելու միջնորդությունը կարող է բավարարվել այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրած քրեական հետապնդման մարմնին հաջողվի դատարանի համար համոզիչ հիմնավորել.

ա) անձին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը (տվյալ հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածը) և

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը:

Այսպիսով, կալանավորման միջնորդությանը նախորդած ձերբակալման ընթացակարգի (ներառյալ՝ ժամկետի վերաբերյալ պահանջի) խախտումը կալանավորման միջնորդությունը մերժելու հիմք չէ, եթե հանցագործությանը մեղադրյալի առնչությունը և կալանավորման հիմքերի առկայությունը դատարանը համարում է հիմնավորված:

Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը բխում է «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտների միջև փոխապայմանավորվածության բացակայության և դրանցից յուրաքանչյուրի

ինքնուրույնության մասին Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումից (տես սույն որոշման 16-րդ կետը):

33. Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի՝ «Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի գրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

34. Նախորդ կետում շարադրված մարդու հիմնարար իրավունքները, որպես անմիջականորեն գործող իրավունք, կիրառելու արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձերբակալման օրինականությունը չի կարող դուրս մնալ դատական վերահսկողության շրջանակից, և հարկադրանքի այդ միջոցի կիրառման ընթացքում թույլ տրված խախտումները պետք է արժանանան համարժեք իրավական գնահատականի և հանգեցնեն համարժեք իրավական հետևանքների: Հակառակ դեպքում կխախտվի ձերբակալվածի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Ուստի կալանավորման միջնորդությունը քննելիս ձերբակալման ընթացակարգի խախտման փաստ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան միջոցներ: Ձերբակալման առավելագույն ժամկետի խախտման պարագայում այդ միջոցները պետք է հանգեն հետևյալին.

ա) 72-ժամյա ժամկետի խախտման փաստի արձանագրում,

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360.1 հոդվածի հիման վրա լրացուցիչ որոշման կայացում, կամ, խախտումն ակնհայտ և կոպիտ լինելու դեպքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմում,

գ) անօրինական ձեռքակալման համար փոխհատուցում ստանալու պահանջով ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան դիմելու ընթացակարգի պարզաբանում:

35. Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի՝

«1. Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

2. Քաղաքացուն (...) հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հետևանքներին, հատուցվում է սույն օրենսգրքի 1063 հոդվածում նախատեսված հիմքերով եւ կարգով:

(...)»:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի՝

«Քաղաքացուն (...) պետական մարմինների, (...) կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ (...) պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը (...):»:

36. Սույն որոշման 33-րդ կետի «գ» ենթակետի արդյունավետ կենսագործումն ապահովելու նպատակով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձեռքակալման ընթացակարգի խախտման հիմքով հայցի քննությունը պետք է իրականացվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ոչ թե 1063-րդ, այլ 1064-րդ հոդվածի հիման վրա: Այլ կերպ՝ անօրինական ձեռքակալման գոհը պետք է օժտված լինի փոխհատուցում ստանալու իրավունքով՝ անկախ համապատասխան հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: Հակառակ դեպքում, փոխհատուցման իրավունքը կարող է վե-

րածվել պատրանքային և վերացական իրավունքի, քանի որ անօրինական ձերբակալման զոհի վրա անարդարացիորեն կդրվի ապացուցման լրացուցիչ բեռ:

Միևնույն ժամանակ, այդ հայցի քննությունը և լուծումը պետք է համապատասխանի ինչպես ՀՀ ներպետական օրենսդրությանը, այնպես էլ ՀՀ միջազգային պայմանագրերին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին:

37. Նախորդ կետում շարադրված հիմնավորումները պայմանավորված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված այն դիրքորոշմամբ, որ ազատությունից անօրինական զրկված անձի փոխհատուցման իրավունքը պետք է ապահովված լինի որոշակիության բավարար աստիճանով (*Սաքքըր և Ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (Sakik and Others v. Turkey)* գործով վճիռ, 1997թ. նոյեմբերի 27, գանգատներ թիվ 23878/94 և այլն, կետ 60, *Ն.Ս.-ն ընդդեմ Իտալիայի (N.C. v. Italy)* գործով վճիռ, 2002թ. դեկտեմբերի 18, գանգատ թիվ 24952/94, կետ 52, *Ռեհբոկն ընդդեմ Սլովենիայի (Rehbock v. Slovenia)* գործով վճիռ, 2000թ. նոյեմբերի 11, գանգատ թիվ 29462/95, կետ 92):

38. Սույն որոշման 32-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումը սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելու արդյունքում Վճռաբեկ դատարանն իրավաչափ չի համարում Գ.Միքայելյանին անհապաղ ազատ արձակելու մասին բողոքաբերի փաստարկումը այն հիմքով, որ Գ.Միքայելյանին կալանավորելու մասին որոշում կայացնելու պահին նրա ձերբակալման ժամկետը լրացած է եղել (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Ավելին, գործի փաստական հանգամանքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առերևույթ հիմնավորված են եղել թե՛ իրեն մեղսագրվող հանցագործությանը Գ.Միքայելյանի առնչությունը և թե՛ կալանավորման հիմքերը: Մասնավորապես, որպես մեղադրյալի առնչությունը հիմնավորող ժանրակչի փաստարկ՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները հաշվի են առել այն, որ առերևույթ գողություն կատարելիս Գ.Միքայելյանը բռնվել է ենթադրյալ գողության վայրի բնակիչների կողմից: Իսկ որպես կալանավորման հիմք՝ ստորադաս դատարանները հաշվի են առել այն, որ Գ.Միքայելյանը ենթադրյալ հանցանքը կատարել է փորձաշրջանի ընթացքում (տե՛ս սույն որոշման 6-րդ և 8-րդ կետերը), ինչը ժանրակչի փաստարկ է նոր հանցանք կա-

տարելու հնարավորության մասին ողջամիտ ենթադրություն կատարելու համար:

Չետևաբար վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

39. Միևնույն ժամանակ, սույն որոշման 34-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման հիման վրա, Վճռաբեկ դատարանը (ա) ճանաչում է Գ.Միքայելյանի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը՝ նրան, առանց իրավական հիմքի, 72 ժամից շուրջ 16 ժամով ավելի երկար անազատության մեջ պահելու մասով (տե՛ս սույն որոշման 29-րդ կետը), (բ) նշված խախտման փաստով կայացնում է լրացուցիչ որոշում՝ այն ուղարկելով իրավասու մարմիններին, ինչպես նաև (գ) արձանագրում է, որ Գ.Միքայելյանն ունի ձերբակալման ընթացակարգի խախտման համար քաղաքացիական դատավարության կարգով հատուցում ստանալու իրավունք՝ հաշվի առնելով սույն որոշմամբ շարադրված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գագիկ Գառնիկի Միքայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը երկու ամիս ժամկետով ընտրելու մասին Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքերի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի որոշման դեմ մեղադրյալ Գ.Միքայելյանի պաշտպան Ի.Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՈՒՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵՔՐԴ /0295/01/08  
Նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան  
դատավորներ՝ Մ.Պետրոսյան  
Ս.Համբարձումյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան/

Նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
մասնակցությամբ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս.ՕՐԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
մասնակցությամբ պաշտպան Ի.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

16 սեպտեմբերի 2009 թվական ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2008 թվականի նոյեմբերի 5-ի որոշման դեմ դատապարտյալ Ա. Սարգսյանի պաշտպան Ինեսսա Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը,

## **Պ Ա Ր Զ Ե Ց**

### **Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի և 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, 2008 թվականի մարտի 2-ին՝ թիվ 62202608 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասի և 235-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին:

Արմեն Սարգսյանը ձերբակալվել է 2008 թվականի մարտի 3-ին:

2008 թվականի մարտի 6-ին Ա.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով:

2008 թվականի հունիսի 11-ին Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով:

2008 թվականի հունիսի 12-ի որոշմամբ թիվ 62202608 քրեական գործից անջատվել են Ա.Սարգսյանի վերաբերյալ քրեական գործի նյութերը:

2008 թվականի հունիսի 17-ին Ա.Սարգսյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան (այսուհետ՝ Քրեական դատարան):

2. Քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 16-ի դատավճռով Արմեն Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական

օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 4 /չորս/ տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Սարգսյանի և պաշտպան Ի.Պետրոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2008 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 16-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 5-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պաշտպան Ի.Պետրոսյանը:

2009 թվականի հունիսի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը պաշտպան Ի.Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **Գործի փաստական հանգամանքները և Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ա.Սարգսյանը մեղադրվել է այն բանի համար, որ անմիջականորեն մասնակցել է 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած, բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրազենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ զուգորդված զանգվածային անկարգությունների կատարմանը, այն է՝ 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 23-ից 24-ի սահմաններում, Երևանի Մաշտոցի պողոտայի, Գր. Լուսավորիչ և Պարոնյան փողոցների խաչմերուկում հայիոյանքներ է տվել ու բռնություն գործադրել նշված վայրում ծառայություն իրականացնող՝ ՀՀ ոստիկանության զորքերի թիվ 1033 զորամասի ծառայողների նկատմամբ, նրանց ուղղությամբ նետել է քարեր, փայտի կտորներ և այլ առարկաներ:

6. 2008 թվականի մարտի 1-ի լույս 2-ի գիշերը զանգվածային անկարգությունների վայրում Ա.Սարգսյանը գործով չպարզված հանգամանքներում ստացել է թեթև մարմնական վնասվածք՝ առողջության կարճատև քայքայումով: 2008 թվականի մարտի 2-ին՝ ժամը 2:10



րոպեին, Արմեն Սարգսյանը ընդունվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն՝ «ձախ ոտնաթաթի միջային մակերեսի վնասվածք» նախնական ախտորոշմամբ, սակայն ինքնական, առանց բժշկական անձնակազմին տեղյակ պահելու, հազիմ եղած բաճկոնը թողնելով հիվանդանոցում՝ հեռացել է այնտեղից և վերադառնալով վերոհիշյալ զանգվածային անկարգությունների վայր՝ բռնվել ու բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից:

7. Նախաքննության մարմնի կողմից մեղադրական եզրակացության հիմքում դրվել են.

ա) Վկաներ, ՀՀ ոստիկանության ներքին զորքերի թիվ 1033 զորամասի զինծառայողներ Անտոն Ասրյանի և Տիգրան Խաչատրյանի ճանաչմանը մեղադրյալ Ա. Սարգսյանին ներկայացնելու մասին 2008 թվականի հունիսի 6-ի արձանագրությունները, որոնց համաձայն՝ ճանաչմանը ներկայացված անձանց մեջ նշված վկաները ճանաչել են Ա.Սարգսյանին՝ որպես զանգվածային անկարգությունների ժամանակ ոստիկանների նկատմամբ հայիոյանքներ տվող և նրանց ուղղությամբ քարեր, փայտեր և այլ առարկաներ նետող անձի:

բ) Նույն ոստիկանների ցուցմունքները, որտեղ վերջիններս նկարագրել են մեղադրյալ Ա.Սարգսյանի գործողությունները՝ զանգվածային անկարգությունների ժամանակ (հայիոյանքներ տալը, իրենց ուղղությամբ քարեր, փայտեր և այլ առարկաներ նետելը):

գ) Նույն վկաների և Ա.Սարգսյանի առերես հարցաքննության արձանագրությունները, որի ընթացքում վերջինը հրաժարվել է վկաների հետ առերես հարցաքննվելուց:

դ) Վկաներ, ՀՀ ոստիկանության ներքին զորքերի թիվ 1035 զորամասի զինծառայողներ Ռազմիկ Այվազյանի, Սարգիս Խանջյանի, Էմին Բալայանի և Սամվել Պետրոսյանի նույնաբովանդակ ցուցմունքները, որոնց համաձայն՝ 2008 թվականի մարտի 2-ին՝ ժամը 04:30-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողներ բերման են ենթարկել և իրենց համձնել թիվ 16 քաղաքացիների՝ որպես զանգվածային անկարգությունների կատարմանը առավել ակտիվ մասնակցություն ունեցած անձանց:

ե) Վկա, Ա.Սարգսյանի հայր Սեյրան Սարգսյանի ցուցմունքը, որով հաստատված է համարվել Արմեն Սարգսյանի կողմից 2008 թվականի փետրվարի 20-ից Երևանում կազմակերպված հրապարակային միջոցառումներին մասնակցելու հանգամանքը:

զ) Վկա Գագիկ Գինոսյանի ցուցմունքը, որով ժխտված է համարվել Ա.Սարգսյանի այն պատճառաբանությունը, որ նա զանգվածային անկարգությունների կատարման վայր է գնացել աշխատավայրից:

է) «Էրեբունի» բժշկական կենտրոնից առգրավված անհետաձգելի բուժօգնության քարտի գրանցումները, որոնցով հաստատված է համարվել Ա.Սարգսյանի կողմից նշված հիվանդանոցում բուժօգնություն ստանալու և առանց տեղյակ պահելու հեռանալու փաստը:

ը) «Էրեբունի» բժշկական կենտրոնից առգրավված Ա.Սարգսյանի բաճկոնը, որով հաստատված է համարվել զանգվածային անկարգությունների կատարման վայր վերադառնալու նրա շտապօգնականությունը:

Մեղադրանքի հիմքում դրվել են նաև դեպքի վայրի զննության արձանագրությունները, փորձագիտական եզրակացությունները, ՀՀ ոստիկանության պետի տեղակալի, Երևանի քաղաքապետի գրությունները, որոնք վերաբերում են տեղի ունեցած զանգվածային անկարգություններին և դրանց արդյունքում պատճառված վնասներին:

Ամբաստանյալ Ա.Սարգսյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել՝ նշելով, որ 2008 թվականի մարտի 1-ին եղել է նշված վայրերում, սակայն զանգվածային անկարգություններին անմիջական մասնակցություն ունենալու (դիմադրություն ցույց տալու, բռնություն գործադրելու) հանգամանքը ժխտել է:

8. Քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 16-ի դատավճռով ճանաչման ներկայացնելու մասին 2008 թվականի հունիսի 6-ի երկու արձանագրությունները ճանաչվել են որպես անթույլատրելի ապացույցներ: Քրեական դատարանը հաստատված է համարել, որ մեղադրյալ Ա.Սարգսյանին վկաներ Ա.Ասրյանի ու Տ.Խաչատրյանի ճանաչմանը ներկայացնելու ընթացքում թույլ են տրվել նշված քննչական գործողության կատարման կարգի և մեղադրյալի պաշտպանական իրավունքի էական խախտումներ, մասնավորապես, 2008 թվականի հունիսի 6-ին անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողության ընթացքում Ա.Սարգսյանը վկա Անտոն Ասրյանի ճանաչմանն է ներկայացվել ձախ ձեռքին կրելով ձեռնաշղթա: Քրեական դատարանը գտել է, որ անձին ձեռնաշղթայով ճանաչման ներկայացնելը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին (ճանաչման ենթակա անձը ներկայացվում է ճանաչողին նույն սեռի և արտաքինով ու հագուստով ճանաչվողին հնա-

րավորին չափ նման առնվազն երեք այլ անձանց հետ): Նշված հանգամանքը գնահատելով որպես տվյալ քննչական գործողության կատարման կարգի էական խախտում և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով (քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ), Քրեական դատարանը հաստատել է Ա.Սարգսյանին վկա Ա.Ասրյանի ճանաչմանը ներկայացնելու 2008 թվականի հունիսի 6-ի արձանագրության՝ որպես ապացույցի օգտագործման անթույլատրելիությունը:

Քրեական դատարանն արձանագրել է նաև, որ վկա Ա. Ասրյանի ճանաչմանը ներկայացվելուց անմիջապես հետո Ա. Սարգսյանը ցանկություն է հայտնել ունենալ պաշտպան, ինչը հաստատվել է նաև վկա Ա.Ասրյանի դատաքննության ընթացքում տված ցուցմունքով: Սակայն նախաքննության մարմինը, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի 1-ին կետի պահանջները (քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ այդպիսի ցանկություն է հայտնել մեղադրյալը՝ ցանկություն հայտնելու պահից), առանց Ա. Սարգսյանին պաշտպանով ապահովելու, մեղադրյալի մասնակցությամբ կատարել է քննչական գործողություն՝ նրան ներկայացրել է վկա Տ. Խաչատրյանի ճանաչմանը:

Քրեական դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով (քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտմամբ), հաստատել է նաև մեղադրյալ Ա. Սարգսյանին վկա Տ. Խաչատրյանի ճանաչմանը ներկայացնելու 2008 թվականի հունիսի 6-ի արձանագրության՝ որպես ապացույցի օգտագործման անթույլատրելիությունը՝ տվյալ քննչական գործողությունը մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտմամբ կատարված լինելու պատճառաբանությամբ:

9. Քրեական դատարանը 2008 թվականի սեպտեմբերի 16-ին կայացրել է լրացուցիչ որոշում, որում, բացի նախորդ կետում թվարկված էական խախտումներից, արձանագրել է նաև քրեական գործով մինչ-

դատական վարույթում թույլ տրված և դատական քննության ընթացքում ի հայտ եկած հետևյալ խախտումները.

Ա. Սարգսյանի ձերբակալումը տևել է օրենքով նախատեսված 72 ժամից ավելի, քանի որ նա ձերբակալվել է բերման ենթարկվելուց հետո ոչ թե երեք ժամվա ընթացքում, այլ 39 ժամ անց (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ և 131<sup>1</sup>-րդ հոդվածների պահանջների էական խախտումներ), քննիչի կողմից կայացված դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին 2008 թվականի մարտի 4-ի որոշմամբ փորձագետներին պարզաբանման համար հարցեր են առաջադրվել «տուժող Արմեն Սարգսյանի» մարմնական վնասվածքների վերաբերյալ, սակայն քրեական գործով վերջինս տուժող չի ճանաչվել:

10. Քրեական և Վերաքննիչ դատարանները Ա. Սարգսյանի կատարած հանցանքը և նրա մեղքը հաստատված են համարել ճանաչման ներկայացնելու քննչական գործողությանը մասնակցած վկաներ Ա. Ասրյանի և Տ. Խաչատրյանի ցուցմունքներով և նրանց ու Ա. Սարգսյանի առերես հարցաքննության արձանագրություններով, վկաներ Ռ. Այվազյանի, Ս. Խանջյանի, Է. Բալայանի, Ս. Պետրոսյանի ցուցմունքներով, առգրավման, դեպքի վայրի զննության արձանագրություններով, փորձագիտական եզրակացություններով, ՀՀ ոստիկանության պետի տեղակալի, Երևանի քաղաքապետի գրություններով:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու` ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է` Վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով դատական ակտի կայացումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը չի կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն` ճանաչման ներկայացնելու 2008 թվականի հունիսի 6-ի արձանագրությունները որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու պայմաններում օրինական ուժի մեջ է թողել Քրեական դատարանի դատավճիռը:

Ըստ բողոքաբերի՝ եթե անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողությունը կատարվում է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ, ապա դրանից բխող բոլոր գործողությունները չեն կարող դիտվել որպես ապացույց: Սակայն Քրեական դատարանը, անթույլատրելի ճանաչելով ճանաչման ներկայացնելու արձանագրությունները, որպես իր պաշտպանյալի մեղքը հիմնավորող ապացույց է դիտել Ա.Սարգսյանին ճանաչելու ներկայացած վկաներ Ա.Ասրյանի և Տ.Խաչատրյանի ցուցմունքները և նրանց ու Ա.Սարգսյանի առերես հարցաքննության արձանագրությունները, որոնց իր պաշտպանյալը հրաժարվել է մասնակցել: Բողոքաբերի պնդմամբ, թեև Քրեական դատարանն իր կայացրած լրացուցիչ որոշման մեջ արձանագրել է նախաքննական մարմնի խախտումները, սակայն լուրջ հետևություն չի կատարել, իսկ Վերաքննիչ դատարանը, իր որոշման մեջ փաստելով և ընդունելով քրեադատավարական օրենքի էական խախտումների առկայությունը, իր պաշտպանյալին արդարացնելու փոխարեն օրինական ուժի մեջ է թողել անհիմն ու անօրինական դատական ակտը:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ գործով ձեռք բերված ապացույցներով հաստատված չէ մեղսագրված արարքուն Ա.Սարգսյանի մեղքը: Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքուն բարձրացված հարցին՝ կապված վկաներ Ռ.Այվազյանի, Ս.Խանջյանի, Է.Բալայանի և Ս.Պետրոսյանի ցուցմունքների հետ: Ըստ մեղադրանքի կողմի՝ նշված վկաները Ա.Սարգսյանին բերման են ենթարկել ոստիկանության Կենտրոն բաժին, մինչդեռ վերոնշյալ վկաները հայտնել են, որ Ա.Սարգսյանին չեն տեսել և նրան բերման չեն ենթարկել: Այդ փաստը հաստատվել է նաև Քրեական դատարանում հրապարակված և հետազոտված՝ անձանց ոստիկանության բաժին բերման ենթարկելու մասին արձանագրությամբ: Ա.Սարգսյանի մեղքը հերքվում է նաև Քրեական դատարանում հրապարակված և հետազոտված դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննությունների եզրակացություններով:

12. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը, գտնելով, որ գործով հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս ստորադաս դատարանի կողմից կայացված դատական ակտը բեկանելու, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, խնդրել է Արմեն Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով Վերաքննիչ դատարանի 2008

թվականի նոյեմբերի 5-ի որոշումը բեկանել և Ա.Սարգսյանի վերաբերյալ կայացնել արդարացնող դատական ակտ:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանն ըստ էության պետք է պատասխանի այն հարցին, թե իրավաչափ էր արդյոք Ա.Սարգսյանին երկու վկաների ճանաչմանը ներկայացնելու արձանագրությունները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի հիմքով որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու պայմաններում նույն վկաների՝ Ա.Սարգսյանին որպես զանգվածային անկարգությունների անմիջական մասնակցի մատնացույց անելու մասին ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և մեղադրանքի հիմքում դնելու դատարանների որոշումը:

14. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պար-

զում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ «1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

(...)

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի (...)

(...)

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

(...) »:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ - մասի համաձայն՝ «Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:

15. Նշված իրավադրույթներից հետևում է, որ որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք

բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում:

16. Սույն գործի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմինը մեղադրական եզրակացության մեջ որպես Արմեն Սարգսյանի մեղադրանքը հիմնավորող ապացույցներ նշել է վկաներ Ա. Ասրյանի և Տ. Խաչատրյանի ճանաչմանը մեղադրյալ Ա. Սարգսյանին ներկայացնելու մասին 2008 թվականի հունիսի 6-ի արձանագրությունները, նույն վկաների ցուցմունքները, նրանց և Ա. Սարգսյանի առերես հարցաքննության արձանագրությունները, վկաներ Ռ. Այվազյանի, Ս. Խանջյանի, Է. Բալայանի, Ս. Պետրոսյանի, Ս. Սարգսյանի և Գ. Գինոսյանի ցուցմունքները, «Էրեբունի» բժշկական կենտրոնից առգրավված անհետաձգելի բուժօգնության քարտի գրանցումները և Ա. Սարգսյանի բաճկոնը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Ա. Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրական դատավճիռ կայացնելով՝ Քրեական դատարանը նույն դատավճռով հաստատված է համարել, որ մեղադրյալ Ա. Սարգսյանին վկաներ Ա. Ասրյանի ու Տ. Խաչատրյանի ճանաչմանը ներկայացնելու քննչական գործողությունների ընթացքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ են տրվել դրանց կատարման կարգի և մեղադրյալի պաշտպանական իրավունքի էական խախտումներ, որի հիման վրա այդ արձանագրությունները ճանաչել է որպես անթույլատրելի ապացույց (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Քրեական գործով մինչդատական վարույթում թույլ տրված խախտումների վերաբերյալ Քրեական դատարանը 2008 թվականի սեպտեմբերի 16-ին կայացրել է լրացուցիչ որոշում, որում արձանագրել է



քրեական գործով մինչդատական վարույթում թույլ տրված և դատական քննության ընթացքում ի հայտ եկած նաև այլ խախտումներ (տես սույն որոշման 9-րդ կետը):

17. Վերոգրյալից հետևում է, որ Քրեական դատարանը, Ա.Սարգսյանին երկու վկաների ճանաչմանը ներկայացնելու արձանագրությունները ճանաչելով որպես անթույլատրելի ապացույց և դրանք հանելով ապացուցողական զանգվածից, անբաստանյալի մեղավորությունը ապացուցված է համարել ճանաչման ներկայացնելուց հետո վկաների տված ցուցմունքներով այն մասին, որ իրենց կողմից ճանաչված Ա.Սարգսյանը հանդիսացել է 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի կենտրոնական փողոցներում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների անմիջական մասնակից: Այսինքն՝ սույն գործով Քրեական դատարանն անձի դատապարտման հիմքում դրել է այնպիսի ապացույցներ, որոնց բովանդակությունն ամբողջությամբ բխում է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ կատարված քննչական գործողությունից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ա. Սարգսյանին վկաներ Ա. Ասրյանի և Տ. Խաչատրյանի ճանաչմանը ներկայացնելու երկու արձանագրությունները որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու պարագայում ճանաչման ներկայացնելուց հետո այդ նույն վկաների տված ցուցմունքները չէին կարող որպես ապացույց օգտագործվել և դրվել Ա. Սարգսյանի մեղադրանքի հիմքում: Այդ ապացույցները թույլատրելի չեն, քանի որ դրանց բովանդակությունն ամբողջությամբ հիմնված է եղել անթույլատրելի ճանաչված քննչական գործողության տվյալների վրա, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին:

Չեղարկելով, սույն գործով իրավաչափ չի եղել Ա. Սարգսյանին երկու վկաների ճանաչմանը ներկայացնելու արձանագրությունները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի հիմքով որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու պայմաններում նույն վկաների՝ Ա.Սարգսյանին որպես զանգվածային անկարգությունների անմիջական մասնակցի մատնացույց անելու մասին ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և մեղադրանքի հիմքում դնելու դատարանների որոշումը:

Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ինչպես Քրեական դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը, ճանաչման ներկայացնելու մասին 2008 թվականի հունիսի 6-ի արձանագրությունները որպես քրեադատավարական օրենքով սահմանված կարգի էական խախտմամբ և Ա.Սարգսյանի պաշտպանության իրավունքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներ անթույլատրելի ճանաչելու հետ մեկտեղ ամբաստանյալ Ա. Սարգսյանի մեղադրանքի հիմքում դնելով ճանաչման գործընթացի մասնակիցներ, վկաներ Ա. Ասրյանի և Տ. Խաչատրյանի՝ ճանաչման ներկայացնելուց հետո տրված ցուցմունքները, թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 22-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ, 358-րդ, 360-րդ, 365-րդ, իսկ Վերաքննիչ դատարանը՝ նաև 398-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք հանգեցրել են Ա. Սարգսյանի իրավունքների էական խախտման: Արդյունքում խախտվել է նաև ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ Ա. Սարգսյանի արդարացի դատաքննության իրավունքը:

18. Վերլուծելով գործով ձեռք բերված ապացույցները՝ ամբաստանյալի ցուցմունքները, մինչև ճանաչման ներկայացնելը վկաներ Ա.Ասրյանի և Տ.Խաչատրյանի ցուցմունքները, մյուս վկաների ցուցմունքները, «Էրեբունի» բժշկական կենտրոնից առգրավված Ա. Սարգսյանի բաճկոնը, դեպքի վայրի զննության արձանագրությունները, փորձագիտական եզրակացությունները, ՀՀ ոստիկանության պետի տեղակալի, Երևանի քաղաքապետի գրությունները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի կենտրոնական փողոցներում տեղի ունեցած զանգվածային անկարգություններին Ա.Սարգսյանի անմիջական մասնակցությունը հիմնավորող փաստական տվյալներ չեն պարունակում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողությունը դասվում է այն դատավարական գործողությունների շարքին, որն իր բնույթով կրկնակի կատարման հնարավորություն չի ընձեռում: Կրկնակի ճանաչման դեպքում դրա արդյունքների վերաբերյալ կարող են հարուցվել քրեադատավարական օրենքի իմաստով փարատման ոչ ենթակա կասկածներ, քանի որ ճանաչողն արդեն տիրապետում է նրա ցուցմունքների օբյեկտիվությունը բացառող տեղեկությունների:

Հետևաբար, սույն գործով սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

19. Հիմք ընդունելով վերը շարադրված պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա. Սարգսյանի վերաբերյալ կայացված դատական ակտերը ենթական են բեկանման, քրեական հետապնդումը՝ դադարեցման, քանի որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար չեն Ա. Սարգսյանին առաջադրված մեղադրանքը հաստատված և կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված համարելու համար, և սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է անթույլատրելի ճանաչված ապացույցներից անմիջականորեն բխող այլ ապացույցների անթույլատրելիության հարցի վերաբերյալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 16-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը բեկանել, Ա.Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և

քրեական գործի վարույթը կարճել՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

2. Արմեն Սեյրանի Սարգսյանին անհապաղ ազատել ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելուց:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԱԲԴ/0049/01/09  
Նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան  
Դատավորներ՝ Ս. Չիչոյան, Ա.Դանիելյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)  
մասնակցությամբ դատավորներ  
Նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս.ՕՐԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010թ. փետրվարի 12-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ամբաստանյալ Արայիկ  
Էդուարդի Գզոյանի վճռաբեկ բողոքն իր վերաբերյալ ՀՀ քրեական  
օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 2.1-րդ կետերով, 266-րդ

հողվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 27-ի որոշման դեմ,

## **Պ Ա Ր Ձ Ե Ց**

### **Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008թ. հուլիսի 12-ին ՀՀ ոստիկանության Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 266-րդ հոդվածի 4-րդ մասի և 268-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի հատկանիշներով հարուցվել է թիվ 12113708 քրեական գործը:

2. 2008թ. հոկտեմբերի 15-ին Արայիկ Էդուարդի Գոգյանը ձերբակալվել է:

3. 2008թ. հոկտեմբերի 17-ի որոշմամբ Ա.Գոգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով:

4. 2008թ. դեկտեմբերի 4-ի որոշմամբ թիվ 12113708 քրեական գործից անջատվել է Ա.Գոգյանի և մյուսների մասը, և անջատված մասին շնորհվել է 14800508 համարը:

5. 2009թ. մարտի 6-ի որոշմամբ Ա.Գոգյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով:

6. 2009թ. մայիսի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Գոգյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով նա դատապարտվել է ազատազրկման 5/հինգ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով,

պատիժները լրիվ գումարելու միջոցով ամբաստանյալ Ա.Գոյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 5/հինգ/ տարի ժամկետով և տուգանք՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

7. Ամբաստանյալ Ա.Գոյանի և նրա պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. հոկտեմբերի 27-ի որոշմամբ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 27-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Գոյանը:

Վճռաբեկ դատարանը 2009թ. դեկտեմբերի 24-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

### **Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

9. Արայիկ Գոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2008թ. հուլիսի 18-ին, քննությանը չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերի՝ 40 գրամ քաշով ափիոն տեսակի թմրամիջոցից և 1 լիտր քաղցախաթթվի անհիդրիդից 1,36 գրամ հաստատուն քաշով երկուանգամյա օգտագործման համար նախատեսված չափաբաժին և պրեկուրսոր հանդիսացող 2մլ ծավալով քաղցախաթթվի անհիդրիդ, ինչպես նաև զգալի չափերի՝ 0,3 գրամ քաշով մզվածքային ափիոն տեսակի թմրամիջոցը վաճառելու միջոցով ապօրինի իրացրել է Գարեգին Ղազարյանին: Բացի այդ, կրկին անգամ, 2008թ. հուլիս ամսին Ա.Գոյանն իր ընկերոջ՝ ոմն Լյովայի խնդրանքով երկու անգամ, քննությանը չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք բերված առանձնապես խոշոր չափերի՝ 40 գրամ քաշով ափիոն տեսակի թմրամիջոց՝ 2 գրամ

քաշով չափաբաժինը վաճառելու միջոցով ապօրինի իրացրել է Երևան քաղաքի բնակիչներ ոմն Հրաչին և ոմն Արամին:

10. 2009 թվականի մարտի 2-ին Ա.Գոյանը ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևանի ոստիկանության վարչության Արաբկիրի ՔԲ քննիչ Ա.Հակոբյանին հայտնել է, որ «(...) [ոստիկանության] 4-րդ բաժնում տրված բացատրությունները չ[են] համապատասխանում իրականությանը: Դրանք ներկայացվել են (...) ինձ ծեծի ենթարկելու, երեխաներիս հասցեին ահաբեկչական հայիոյանքների և սպառնալիքների ազդեցության ներքո: Այդ ցուցմունքը ես ներկայացրել եմ ֆիզիկապես անտանելի հյուժված և հոգեպես ծանր՝ ծայրաստիճան ցնցված ու անկայուն վիճակում [՝ հ]արցաքննության ընթացքում չդիմանալով ֆիզիկական ահավոր ցավերին, ռ]ետինե մահակով հարվածներ ստանալով ոտքերիս տակ և երիկամներիս շրջանում: Այդ մահակի ուժեղ հարվածից պայթել է ձախ ականջիս ականջաթաղանթը և ես լիովին կորցրել եմ այդ ականջիս լսողությունը ու մի քանի սեղան ատամներ: (...)» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 129 էջ):

11. 2009 թվականի մարտի 4-ին Ա.Գոյանի պաշտպան Ս.Միրզոյանը ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևանի ոստիկանության վարչության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Ա.Հակոբյանին տեղեկացրել է ոստիկանության աշխատակիցների կողմից իր պաշտպանյալին ծեծի ենթարկելու մասին (Քրեական գործ, 2-րդ հատոր, 115-117 էջեր):

12. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձերբակալված անձանց պահելու վայրի պետի 2008թ. նոյեմբերի 10-ի թիվ 8/8-215 գրությամբ փաստաբան Ս.Միրզոյանին հայտնվել է, որ «Ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից ձերբակալված և 2008թ. հոկտեմբերի 15-ին Ոստիկանության Երևանի վարչության [ձերբակալվածներին պահելու վայր] բերված Արայիկ Էդուարդի Գոյանը սահմանված կարգով ենթարկվել է բուժզննության, որի ընթացքում հայտնաբերվել և արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները՝ ձախ ձեռքի դաստակի ներսի մասում կա կտրված վերք, աջ բազկին կա կապտուկ, ձախ ականջին կապտուկ, ըստ նրա բանավոր հայտարարության վերը նշված վնասվածքները ստացել է երկու օր առաջ ծառից ընկնելու հետևանքով» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 212 էջ):

13. Սույն որոշման 11-րդ կետում վկայակոչված պաշտպանի դիմումի կապակցությամբ 2009 թվականի մարտի 13-ին նշանակվել է



ծառայողական քննություն, և դրա արդյունքում հաստատված է համարվել, որ «Ծառայողական քննությամբ պարզվել է, որ Ա. Գզոյանի նկատմամբ Ա.Յամբարձումյանի կողմից անօրինական վերաբերմունք չի ցուցաբերվել (...):

ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի թիվ 818-Ն որոշմամբ հաստատված «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող ծանուցման ենթակա իրավունքների» ցանկի 2-րդ կետի 3-րդ և 5-րդ ենթակետերի պահանջները լիարժեք չկատարելու՝ ՀՀ ոստիկանության [կազմակերպված հանցավորության դեմ պայքարի] գլխավոր վարչության շենք բերման ենթարկված Արայիկ Էդուարդի Գզոյանի կողմից պաշտպանից հրաժարվելու հանգամանքը չարձանագրելու, ինչպես նաև վերջինիս պահանջով ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում Ա.Գզոյանի գտնվելու վայրի մասին վերջինիս կողմից ընտրված անձին ուշացումով տեղեկացնելու համար ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ Գլխավոր վարչության 4-րդ վարչության 2-րդ բաժնի ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր Ավետիք Յրաչի Յամբարձումյանի հարցը քննարկել ԿՀԴՊ Գլխավոր վարչության պետին կից օպերատիվ խորհրդակցությունում» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 147-151 էջեր):

14. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռում առկա են հետևյալ ձևակերպումները. «(...) Ամբաստանյալ Ա.Գզոյանը դատաքննության ընթացքում (...) տված ցուցմունքով հայտնեց, որ (...) իրեն տարել են ոստիկանություն և իր նկատմամբ գործադրել հոգեբանական և ֆիզիկական ներգործություն և ծեծի ենթարկելով ստիպել, որ խոստովանի, որ զբաղվել է թմրամիջոցների վաճառքով: Իրեն ենթարկել են ֆիզիկական բռնությունների, որոնց ճնշման տակ ինքը տվել է այնպիսի ցուցմունքներ, ինչպես որ իրեն թելադրել են, քանի որ իրեն սպառնացել են, որ իր տղային, որը բժշկական համալսարանի ուսանող է, նույնպես կբերեն բաժին թմրանյութ գեղելով գրպանը: Բացի այդ, ոստիկանությունում ծեծի հետևանքով կորցրել է ձախ ականջի լսողությունը, ինչի կապակցությամբ բժշկական փորձաքննության չի ենթարկվել (...):»:

«(...) Ամբաստանյալ Ա.Գզոյանը դեռևս նախաքննության փուլում գրավոր հայտնել է իր պաշտպան Ս.Միրզոյանին իր նկատմամբ գործադրած բռնության մասին, որի կապակցությամբ կատարվել է ծառա-

յական քննություն և ըստ էության չեն հերքվել Ա. Գոյանի պնդումները: Բացի այդ, գործով վկա Գ. Ղազարյանն իր դատաքննական ցուցմունքներով չհերքեց այն փաստը, որ Ա. Գոյանի հետ առերես հարցաքննության ժամանակ նրա հագուստները եղել են արյունոտ վիճակում (...):» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 233 էջ):

«(...) Սույն քր. գործով 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ձեռքբերման հանգամանքը Ա.Գոյանը միայն իր ցուցմունքում է ընդունել, և հետագայում հրաժարվել է այդ ցուցմունքից՝ պատճառաբանելով, որ իր նկատմամբ գործադրվել է ճնշում, ֆիզիկական բռնության ձևով, ծեծի միջոցով, որի հետևանքով ինքը կորցրել է նաև ձախ ականջի լսողությունը: (...) Դատարանը գտնում է, որ Ա.Գոյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքը ապացուցված չէ, սպառվել են այն բոլոր հնարավորությունները այդ փաստը՝ 40 գրամ թմրամիջոցը ձեռք բերելու մասին հավաստող որևէ նոր ապացույց ձեռք բերելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր չփարատված ենթադրությունները պետք է մեկնաբանվեն մեղադրյալի, ամբաստանյալի օգտին, իսկ Ա.Գոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման հանգամանքը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, որը այլ ապացույցներով չի հաստատվել:

Վերանայելով վերը նշվածը՝ դատարանը հաստատված և ապացուցված է համարել այն փաստը, որ Ա. Գոյանը ապօրինի ձեռք է բերել և 44.000 ՀՀ դրամով Գ.Ղազարյանին վաճառել է 1,36 գրամ հաստատուն քաշով երկուանգամյա օգտագործման համար նախատեսված չափաբաժին և պրեկուրսոր հանդիսացող 2 մլ ծավալով քացախաթթվի անհիդրիդ, ինչպես նաև զգալի չափերի հասնող 0,3 գրամ քաշով մզվածքային ափիոն տեսակի թմրամիջոց: Բացի այդ, կրկին անգամ, 2008թ. հուլիս ամսին Արայիկ Գոյանը իր ընկերոջ ոմն Լյովայի խնդրանքով երկու անգամ Երևան քաղաքի Կիևյան և Օրբելի փողոցների խաչմերուկում քննությամբ չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք բերված ափիոն տեսակի թմրամիջոցից 2 գրամ քաշով չափաբաժին ապօրինի, վաճառելու միջոցով, իրացրել է Երևան քաղաքի բնակիչներ ոմն Հրաչին և ոմն Արամին՝ յուրաքանչյուրին 1 գրամը վաճառելով 11.000 ՀՀ դրամով: Այսինքն, նա կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քր. օրի-ի 266 հոդվածի 2-րդ մասի 2-րդ

կետով և 2.1 կետով: Հետևապես ամբաստանյալ Ա. Գզոյանին մեղսագրված արարքը ՀՀ քր. օր-ի 266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից պետք է վերադարձվել ՀՀ քր. օր-ի 266 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 2.1 կետի և նա մեղավոր պետք է ճանաչվի այդ արարքի համար: (...)» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 233-234 էջեր):

15. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման պատճառաբանական մասում ամրագրված է, որ «(...) Մեղադրյալ Ա. Գզոյանը դեռևս նախաքննության փուլում գրավոր հայտնել է պաշտպան Ս.Միրզոյանին իր նկատմամբ գործադրած բռնության մասին, որի կապակցությամբ կատարվել է ծառայական քննություն և ըստ էության չեն հերքվել Ա.Գզոյանի պնդումները: Բացի այդ, գործով վկա Գ. Ղազարյանն իր դատաքննական ցուցմունքներով չի հերքել այն փաստը, որ Ա. Գզոյանի հետ առերես հարցաքննության ժամանակ նրա հագուստները եղել են արյունոտ վիճակում: Սույն քրեական գործով 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ձեռքբերման հանգամանքը Ա.Գզոյանը միայն իր ցուցմունքում է ընդունել և հետագայում հրաժարվել է այդ ցուցմունքից՝ պատճառաբանելով, որ իր նկատմամբ գործադրվել է ճնշում ֆիզիկական բռնության ձևով, ծեծի միջոցով, որի հետևանքով ինքը կորցրել է նաև իր ծախս ականջի լսողությունը:

(...)

Ամբաստանյալ Ա.Գզոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռք բերման հանգամանքը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, հետևաբար այն պետք է դիտել որպես չփարատված կասկած և մեկնաբանել ի օգուտ ամբաստանյալ Ա.Գզոյանի:

Նման պայմաններում առաջին ատյանի դատարանը, իրավացիորեն, հիմնավորված է համարել այն փաստը, որ Ա. Գզոյանը ապօրինի ձեռք է բերել և 44.000 ՀՀ դրամով Գ. Ղազարյանին վաճառել է 1,36 գրամ հաստատուն քաշով երկուամսյա օգտագործման համար նախատեսված չափաբաժին և պրեկուրսոր հանդիսացող 2 մլ ծավալով քացախաթթվի անհիդրիդ, ինչպես նաև զգալի չափերի հասնող 0,3 գրամ քաշով մզվածքային ափիոն տեսակի թմրամիջոց: Բացի այդ, կրկին անգամ, 2008թ. հուլիս ամսին Արայիկ Գզոյանը իր ընկերոջ ոմն Լյովայի խնդրանքով երկու անգամ Երևան քաղաքի Կիևյան և Օրբելի փողոցների խաչմերուկում քննությամբ չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք բերված ափիոն տեսակի թմրամիջոցը՝ 2

գրամ չափաբաժին, ապօրինի, վաճառելու միջոցով, իրացրել է Երևան քաղաքի բնակիչներ ոմն Զրաչին և ոմն Արամին՝ յուրաքանչյուրին 1 գրամը վաճառելով 11.000 ՀՀ դրամով: (...)» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 290-291 էջեր):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

16. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով և ոչ ճիշտ կիրառմամբ, որն ազդել է գործի ելքի վրա՝ հանգեցնելով դատական սխալի: Բողոքաբերը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի պահանջը, չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասը, որը ենթակա էր կիրառման, և արդյունքում կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող չհիմնավորված և չպատճառաբանված որոշում: Բացի այդ, դատարանը չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածը, որն ազդել է գործի ելքի վրա, սակայն նյութական իրավունքի նորմերի խախտմամբ կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 2.1-րդ կետերը, 266-րդ հոդվածի 4-րդ մասը, որը չպետք է կիրառեր:

17. Բողոք բերած անձը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման մեջ առկա հետևությունները միայն ենթադրություններ են: Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը փաստարկում է, որ դատարանում հետազոտվել է միայն մեկ ապացույց՝ Գ. Ղազարյանի նախաքննական ցուցմունքը, քանի որ նախաքննության մյուս ապացույցները, մասնավորապես՝ Ա.Գոյյանի ցուցմունքները, դատավճռի հիմքում չեն դրվել դրանք բռնության արդյունքում ձեռք բերված լինելու պատճառով: Ըստ բողոք բերած անձի, դատարանում Գ. Ղազարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ա.Գոյյանն իրեն փոխանցել է ոմն Լյուբոյի կողմից ծխախոտի տուփի մեջ դրված թմրանյութը, որի պարունակության մասին Ա.Գոյյանը չի իմացել, սակայն Գ. Ղազարյանի այս ցուցմունքը դատավճռում չի ներառվել:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է անում այն մասին, որ իր արարքը պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, այլ 268-րդ հոդվածի 2-րդ մասով:

18. Հիմք ընդունելով իր վերոշարադրյալ փաստարկը՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 27-ի որոշումը, իր նկատմամբ պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածով, իսկ բողոքը չբավարարելու դեպքում՝ հաշվի առնելով իր անձը բնութագրող տվյալները, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, իր նկատմամբ պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

19. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցին անդրադառնալը՝ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել սույն որոշման 16-րդ կետում առկա վերաորակման պահանջի և 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերում արձանագրված՝ Ա.Գզրյանի նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնություն կիրառելու հանգամանքների միջև առկա կապի մասին: Այսպես, ըստ բողոք բերած անձի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից իր արարքը պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 2.1-րդ կետերով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասով: Նրա պնդմամբ, այս առումով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ չի կիրառել այն օրենքը, որը ենթակա էր կիրառման և կիրառել է այն օրենքը, որը ենթակա չէր կիրառման:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից նյութական իրավունքի խախտում թույլ տալու և իրեն խոշտանգելու վերաբերյալ բողոքաբերի հայտարարությունները փոխկապակցված են. նյութական իրավունքի խախտումը կարող է հետևանք լինել ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանների կողմից թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման, որը սույն գործով դրսևորվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վե-

րաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածներից, ՀՀ Սահմանադրության 17-րդ և 22-րդ հոդվածներից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասից և 105-րդ հոդվածից բխող պահանջների չպահպանմամբ: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից սույն գործի քննության ժամանակ թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցը:

*1. Իրեն խոշտանգելու վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարության քննությունը մինչդատական վարույթում*

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախաքննության ընթացքում ձեռնարկվել են պատշաճ միջոցներ իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարությունների ստուգման և նրան ենթադրաբար խոշտանգած անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

21. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետեւանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթներից»:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ խոշտանգման բոլոր գործողություններն իր քրեական օրենսդրությանը համապատասխան քննության առնվեն որպես հանցագործություններ: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկվելու փորձին, ինչպես նաև

ցանկացած անձի այն գործողություններին, որոնք ներկայանում են որպես մասնակցություն կամ գործակցություն խոշտանգմանը»:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:

22. Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը բացարձակ բնույթ է կրում:

Նշված հանգամանքը բազմիցս շեշտադրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ կայացված նախադեպային որոշումներում: Մասնավորապես, *Ձելիլոֆն ընդդեմ Հունաստանի* որոշման մեջ դատարանն արձանագրել է. «(...) 3-րդ հոդվածը պաշտպանում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Անգամ այնպիսի բարդ իրավիճակներում, ինչպիսիք են ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ արտահայտություններով արգելում է խոշտանգումը

և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն Կոնվենցիայի և՛ 1-ին, և՛ 4-րդ Արձանագրությունների շատ նյութաիրավական դրույթների, 3-րդ հոդվածը 15-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված թույլտվությունից բացի որևէ բացառություն կամ սահմանափակում չի նախատեսում, անգամ ազգի գոյությանը սպառնացող արտակարգ դրության դեպքում (...» (տե՛ս *Zelilof v. Greece*, 2004 թվականի մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03, կետ 42):

23. Խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը:

Պոզիտիվ գործողություններ կատարելու պահանջը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածում ամրագրված պահանջից, որի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազրույթյան ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի առաջին բաժնում»:

Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն դիրքորոշումը, որ վերոշարադրյալ հոդվածում կիրառվող «ապահովել» բառը ենթադրում է այնպիսի միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականություն, որոնց արդյունքում կապահովվի իրավունքների երկուստեք՝ օրենսդրական և գործնական պատշաճ պաշտպանություն:

Վերոնշյալ պոզիտիվ պարտականության առկայությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հիմնավորվել է մի շարք այլ որոշումներում ևս: Այսպես, *Բեկրսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Դունաստանի* որոշման մեջ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) եթե անձը անում է վստահելի հայտարարություն այն մասին, որ ինքն է խախտում 3-րդ հոդվածի ենթարկվել է խոշտանգման ոստիկանի կամ նման այլ պետական պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝ «իրենց իրավազրույթյան ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման» պետությունների ընդհանուր պարտականության



հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության առկայություն: (...) Հակառակ պարագայում, խոշտանգումների, աննարողկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար կարևորության, գործնականում ոչ արդյունավետ կլինի և որոշ դեպքերում հնարավոր կլինի պետական մարմինների կողմից խախտել իրենց տրամադրության տակ գտնվող անձանց իրավունքները և փաստացի մնալ անպատժելի (ի թիվս այլ աղբյուրների տե՛ս *Labita v. Italy*, գանգատ թիվ 26772/95, կետ 131)» (*Bekos and Koutropoulos v. Greece*, 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 15250/02, կետ 53):

24. Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Գզոյանը իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ հայտնել է նախաքննության մարմնին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Ա.Գզոյանի պաշտպանի դիմումի հիման վրա նշանակվել է ծառայողական քննություն, որի արդյունքում կայացված եզրակացության մեջ ծառայողական քննությունն իրականացրած մարմինը սահմանափակվել է միայն «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող ծանուցման ենթակա իրավունքների» ցանկի 2-րդ կետի 3-րդ և 5-րդ ենթակետերի պահանջները լիարժեք չկատարելու, այն է՝ ՀՀ ոստիկանության ԿՀԴԴ գլխավոր վարչության շենք բերման ենթարկված Արայիկ Էդուարդի Գզոյանի կողմից պաշտպանից հրաժարվելու հանգամանքը չարձանագրելու, ինչպես նաև վերջինիս պահանջով ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում Ա. Գզոյանի գտնվելու վայրի մասին վերջինիս կողմից ընտրված անձին ուշացումով տեղեկացնելու հարցերի քննարկմամբ և չի անդրադարձել Ա. Գզոյանին խոշտանգելու հարցին (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Ինչպես երևում է վերոշարադրյալ մեջբերումից, ծառայողական քննություն իրականացրած մարմինը չի անդրադարձել մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ Ա. Գզոյանի հայտարարությանը, դա ստուգելու նպատակով դատաբժշկական փորձաքննություն չի նշանակել, մինչդեռ դատաբժշկական ապացույցներն առանցքային նշանակություն ունեն խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունների արդյունավետ քննության համար: Այս առումով Վճռաբեկ դատարանի համար ուղեցույց է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Մամադովն ընդդեմ Ադրբեջանի* գործով վճռի մեջ

ամրագրված մոտեցումն այն մասին, որ. «Իշխանությունները պետք է ողջամիտ քայլեր ձեռնարկեն ապահովելու համար միջադեպին վերաբերող ապացույցների պահպանությունը՝ ներառյալ դատաբժշկական ապացույցները: (...) [Դ]ատաբժշկական ապացույցները ժամանակային առումով չապահովելը հանդիսանում է սույն գործով ոչ արդյունավետ քննություն իրականացնելու հիմնական գործոններից մեկը: Ժամանակին կատարված բժշկական հետազոտությունը բժշկին հնարավորություն կտար վնասվածքների պատճառման ժամանակի և դրանց պատճառների վերաբերյալ առավել որոշակի եզրակացության հանգել» (տե՛ս *Mammadov (Jalaloglu) v. Azerbaijan*, 2007 թվականի հունվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 34445/04, կետ 74):

25. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ծառայողական քննության արդյունքում կայացված որոշումը, այն է՝ «ՀՀ ոստիկանության ԿՀԴԴ Գլխավոր վարչության 4-րդ վարչության 2-րդ բաժնի ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր Ավետիք Հրաչի Համբարձումյանի հարցը քննարկել ԿՀԴԴ Գլխավոր վարչության պետին կից օպերատիվ խորհրդակցությունում» չի կարող գնահատվել որպես խոշտանգման փաստի պատշաճ արձագանք: Այս հարցում Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն այն մասին, որ խոշտանգումը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության և պատժի (առավել մանրամասն տե՛ս *Bati and Others v. Turkey*, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, 145-146 կետեր, *Mikheev v. Russia*, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռը, գանգատ թիվ 77617/01, 120 և 135 կետեր):

26. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի նախաքննության ընթացքում պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարությունների ստուգման և նրան ենթադրաբար խոշտանգած անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

## *II. Իրեն խոշտանգելու վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարությանն արձագանքելը ՀՀ դատարանների կողմից*

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ստորադաս դատարան-

ների կողմից պատշաճ արձագանք է տրվել իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գոյանի հայտարարություններին:

28. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ «Դատարանի լիազորություններն են մասնավորապես՝

(...)

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմելը,

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝ (...) դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը իրենց վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին, իսկ դատարանը նման որոշում կայացնելու միջնորդությամբ դիմում է դատախազին, եթե մեղադրյալին վերագրվող հանցագործություններից բացի բացահայտված է առաջինի հետ չկապված այլ հանցագործություն, որը կատարել է այլ անձ՝ առանց մեղադրյալի մասնակցության»:

29. Վերոշարադրյալ դրույթների տառացի մեկնաբանությունից բխում է, որ եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող քրեական գործի քննության ընթացքում հայտնաբերում են հանցագործության ակնհայտ հատկանիշներ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա պարտավոր են քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին:

30. Սույն գործի նյութերից երևում է, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները հաստատված են համարել այն, որ Ա. Գոյանը ցուցմունքներ է տվել ֆիզիկական բռնությունների ազդեցության տակ: Դատարանները, հիմք ընդունելով իրեն խոշտանգելու վերաբերյալ Ա.Գոյանի հայտարարությունը, գտել են, որ վերջինիս՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղաազրված

արարքն ապացուցված չէ և սպառվել են նրա կողմից 40 գրամ թմրամիջոց ձեռք բերելու փաստը հավաստող որևէ նոր ապացույց ձեռք բերելու բոլոր հնարավորությունները (տե՛ս սույն որոշման 14-րդ և 15-րդ կետերը): Այսինքն, Ա.Գզոյանի նախաքննական ցուցմունքները դատարանները գնահատել են որպես ոչ հավաստի ապացույց: Նշվածի հետ մեկտեղ, սակայն, դատարանները մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող համապատասխան դատախազին Ա.Գզոյանի նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնություն գործադրելու վերաբերյալ հայտարարությունն ստուգելու և նրա նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնություն գործադրելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու միջնորդություն չեն ներկայացրել:

31. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից պատշաճ արձագանք չի տրվել իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարություններին, ինչը հանգեցրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածների, ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասից բխող պահանջների չպահպանման:

32. Ի լրումն սույն որոշման 28-րդ կետում առկա օրենսդրական կարգավորումներին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նախաքննության մարմնի դեմ ներկայացված բողոքները պետք է քննվեն անկախ մարմնի կողմից, որը չպետք է կապված լինի նախաքննության մարմնի հետ և պետք է առանձնացված լինի վերջինիցս:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 1998 թվականի նոյեմբերի 19-ի Եզրափակիչ Դիտարկումներում նշված է՝ «Կոմիտեն առաջարկում է հատուկ անկախ մարմին հիմնադրել՝ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից թույլ տրված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի առնչությամբ բերված բողոքներն ուսումնասիրելու նպատակով» (տե՛ս Մարդու իրավունքների կոմիտեի Եզրափակիչ Դիտարկումները, Հայաստան, CCPR/C/79/Add.100., 19 նոյեմբերի 1998թ., կետ 12):

*Ռանսահայն ընդդեմ Նիդեռլանդների և Բատին և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի* որոշումներում Մարդու իրավունքների եվրոպական

դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման համաձայն՝ չպետք է լինի ինստիտուցիոնալ կամ ենթակարգային կապ քննիչների և այն ոստիկանների միջև, ում դեմ բողոք է ներկայացվել (տե՛ս *Bati and Others v. Turkey*, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, *Ramsahai v. The Netherlands*, 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 52391/99):

*III. Որպես ոչ հավաստի գնահատված ապացույցից բխող փաստերի կիրառումը դատարանների կողմից*

33. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավական հարցը հետևյալն է. երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները, հաստատված համարելով այն, որ Ա.Գոյյանի կողմից 40 գրամ թմրամիջոցի ձեռքբերման փաստը ապացուցված չէ, իրավասո՞ւ էին արդյոք ապացուցված համարել փաստերն այն մասին, որ վերոնշյալ 40 գրամ թմրամիջոցից Ա. Գոյյանը որոշակի չափաբաժիններով թմրամիջոց է իրացրել:

34. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ «1. Քրեական գործով վարություն մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

1) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով.

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի (...)  
էական խախտմամբ.

(...)

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

(...) »:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:

35. *Ա.Սարգսյանի* վերաբերյալ որոշման 15-րդ կետում Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգ-

տագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում» (տե՛ս Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի՝ ԵՔՐԴ /0295/01/08 որոշման 15-րդ կետը):

36. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ինչպես Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի, այնպես էլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները գտել են, որ Ա.Գոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռք բերման հանգամանքը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, հետևաբար այն պետք է դիտել որպես չփարատված կասկած և մեկնաբանել հոգուտ ամբաստանյալ Ա.Գոյանի: Մինչդեռ, անդրադառնալով վերոնշյալ՝ 40 գրամ թմրամիջոցից որոշակի չափաբաժիններով թմրամիջոցի իրացման վերաբերյալ փաստերին, դատարանները դրանք հիմնավորված են համարել և Ա.Գոյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով (տե՛ս սույն որոշման 6-րդ, 7-րդ, 14-րդ և 15-րդ կետերը):

37. Վերոշարադրյալ փաստական հանգամանքների լուսի մերքո Վճռաբեկ դատարանին անհասկանալի է, թե Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին

ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները, հաստատված համարելով այն, որ Ա.Գոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման փաստը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, որն այլ ապացույցներով չի հաստատվել, կարող էին արդյոք հիմնավորված հետևության հանգել այն մասին, որ վերոնշյալ 40 գրամ թմրամիջոցից Ա.Գոյանը որոշակի չափաբաժիններով թմրամիջոց է իրացրել:

38. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք (...) խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

39. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արաիկ Էդուարդի Գոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 2.1-րդ կետերով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական



շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝  
նոր քննության:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից,  
վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝*

*ստորագրություն*

*Դատավորներ՝*

*ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
Քրեական գործ թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08  
Նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան  
Դատավորներ՝ Գ.Մելիք-Սարգսյան  
Ա.Դանիելյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝  
վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
մասնակցությամբ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս.ՕՐԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2010 թվականի մարտի 26-ին Երևան քաղաքում

դռնբաց դատական նիստում, քննելով ամբաստանյալ Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման դեմ պաշտպան Կ. Թումանյանի վճռաբեկ բողոքը,

## **Պ Ա Ր Ձ Ե Ց**

### **1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի Թումանյանի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 55104908 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2008 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ Ն. Պողոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ Ն. Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2008 թվականի նոյեմբերի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Հյուսիսային քրեական դատարան:

2. 2009 թվականի փետրվարի 5-ին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի կարգով Ն. Պողոսյանի վերաբերյալ քրեական գործը 2009 թվականի փետրվարի 27-ին ըստ ընդդատության փոխանցվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճռով Ն. Պողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 տարի ժամկետով:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 22-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը Ն.Պողոսյանի նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին: Ն.Պողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել ազատազրկման 1 տարի 6 ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել անբաստանյալ Ն.Պողոսյանի պաշտպան Կ.Թումանյանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի մարտի 4-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Ն.Պողոսյանը դատապարտվել է այն բանի համար, որ իր ծանոթ Արթուր Լալայանին 2008 թվականի օգոստոսի 17-ին հրավիրել է Լոռու մարզի Մեծավան գյուղ՝ իր հայրական տուն, որտեղ հացկերույթ է կազմակերպել և նրան հյուրասիրել: Ա. Լալայանը, Պողոսյանների տան բակում նկատելով կանեփի թփեր, խնդրել է Ն. Պողոսյանին, որպեսզի վերջինս թույլատրի իրեն քաղել կանեփի տերևներ՝ թմրամիջոց պատրաստելու համար: Ն. Պողոսյանը, գիտակցելով, որ այդ թփերը պարունակում են թմրամիջոց, և Ա. Լալայանը դրանք քաղում է թմրամիջոց պատրաստելու համար, տվյալ պահին իր տիրապետության տակ գտնվող, իր հայրական տան այգում ցանած և մշակած կանեփի թփերից թույլատրել է Ա. Լալայանին քաղել թմրամիջոց պարունակող տերևներ՝ այդ կերպ անհատույց իրացնելով թմրամիջոց:

6. Ա.Լալայանը սույն գործով քրեական վարույթն իրականացնող մարմնին 2008 թվականի օգոստոսի 23-ին տված լրացուցիչ բացատրության ժամանակ հայտնել է, որ իր մոտ հայտնաբերված թմրանյութն իրեն իրացրել է Ն.Պողոսյանը՝ վերջինիս հայրական տանը հյուրընկալվելու ժամանակ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 18-20 էջեր): Նույն օրը նշված բացատրության ճշմարտացիությունը ստուգելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ժամանակ Ա.Լալայանը մատնացույց է արել Պողոսյանների տան բակում աճեցված կանեփի թփերը և հայտնել, որ իր մոտ հայտնաբերված թմրանյութը ձեռք է բերել այդտեղից՝ Ն.Պողոսյանի թույլտվությամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 21-27 էջեր):

7. Փաստաբան Ա.Թամազյանը սույն գործի վարույթին ներգրավվել է 2008 թվականի օգոստոսի 27-ից (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 55-59 էջեր): Քրեական գործի նյութերում բացակայում է Ն.Պողոսյանի ստորագրությամբ վավերացված որևէ փաստաթղթային հաստատում, որով վերջինս լիազորում է փաստաբան Ա.Թամազյանին իրականացնել իր շահերի պաշտպանությունը, ինչպես նաև բացակայում է Ա.Թամազյանին պաշտպան նշանակելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի որոշումը:

8. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 2009 թվականի օգոստոսի 28-ի թիվ 19/2-Ա որոշմամբ փաստաբան Ա.Թամազյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ սույն գործի նախաքննության ընթացքում Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի խախտումն թույլ տալու համար:

ՀՀ փաստաբանների պալատում հարուցված կարգապահական վարույթի ընթացքում փաստաբան Ա.Թամազյանը բացատրություն է տվել այն մասին, որ. «23.08.2009թ. իր գործերով գտնվել է Լոռու մարզի Թումանյանի քննչական բաժանմունքի քննիչ Ս.Թանդիլյանի մոտ, և այդ ժամանակ վերջինիս մոտ են բերել Նորիկ Պողոսյանին: Տեսնելով, որ նա խուճապի մեջ է, իսկ հայրը վախեցած՝ ինքը տեղեկացրել է նրանց, որ փաստաբան է և առաջարկել է օգտվել իր ծառայություններից: Մեղադրյալը և նրա հայրը հայտնել են, որ գումար չունեն վճարելու ծառայությունների համար: Ինքը համաձայնվել է անվճար և մարդասիրական նկատառումներից ելնելով՝ ստանձնել Ն.Պողոսյանի պաշտպանությունն անվճար (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, 138-139 էջեր):

9. Ամբաստանյալ Ն.Պողոսյանն Առաջին ատյանի դատարանի դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ոչ մի տեղ չի սովորել, գրել-կարդալ չգիտի: Նախաքննության ընթացքում քննիչը գրել է ցուցմունքներ, որը չի կարդացել: Ինքը պաշտպան չի ցանկացել, սակայն քննիչը ներկայացրել է մի կնոջ որպես իր պաշտպանի (տե՛ս դատական նիստի արձանագրություն, քրեական գործ, հատոր 3-րդ, 104-106 էջեր):

10. Ամբաստանյալ Ն.Պողոսյանի և փաստաբան Ա.Թամազյանի մասնակցությամբ կատարվել են մի շարք քննչական գործողություններ, որոնց արդյունքում ձեռք են բերվել հետևյալ ապացույցները և դրվել ամբաստանյալ Ն.Պողոսյանի մեղքը հաստատող ապացույցների շարքում.

ա) վկա Ն.Պողոսյանի 2008 թվականի օգոստոսի 27-ի հարցաքննության արձանագրությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 56-59 էջեր),

բ) կասկածյալ Ա.Լալայանի և վկա Ն.Պողոսյանի 2008 թվականի օգոստոսի 28-ի առերես հարցաքննության արձանագրությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 72),

գ) վկա Ն.Պողոսյանի 2008 թվականի սեպտեմբերի 27-ի լրացուցիչ հարցաքննության արձանագրությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 123-125 էջեր),

դ) մեղադրյալ Ն.Պողոսյանի 2008 թվականի սեպտեմբերի 29-ի հարցաքննության արձանագրությունը (տե՛ս քրեական գործ հատոր 1-ին, 138-139 էջեր):

11. Քրեական գործի նյութերում բացակայում է որևէ փաստաթղթային հաստատում առ այն, որ Ն.Պողոսյանը կրթություն է ստացել: Ամբաստանյալի մասնակցությամբ կատարված քննչական գործողությունների արդյունքում կազմված փաստաթղթերի տակ, այդ թվում՝ սույն որոշման 10-րդ կետում թվարկված հարցաքննությունների արձանագրություններում Ն.Պողոսյանը ստորագրության փոխարեն դրել է խաչանման նշաններ:

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 21-րդ, 22-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 105-րդ, 106-րդ, 107-րդ, 125-րդ, 127-րդ, 358-րդ հոդվածների պահանջները:

13. Առաջին հերթին բողոքաբերը, շարադրելով և վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, փաստարկել է, որ ամբաստանյալ Ն. Պողոսյանի գործողություններում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

14. Այնուհետև բողոք բերած անձը նշել է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Ն. Պողոսյանին մեղավոր են ճանաչել՝ հիմնվելով մի շարք անթույլատրելի, ՀՀ Սահմանադրության և քրեադատավարական օրենքի պահանջների խախտմամբ ձեռք բերված ապացույցների վրա:

Մասնավորապես, սույն գործի նախաքննության ընթացքում խախտվել է ամբաստանյալ Ն. Պողոսյանի պաշտպանության իրավունքը, քանի որ վարույթն իրականացնող մարմինն իր նախաձեռնությամբ հրավիրել է փաստաբան Ա. Թամազյանին և ներգրավել գործի քննությանը՝ որպես Ն. Պողոսյանի շահերի պաշտպան:

Հիմնվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի վրա՝ բողոք բերած անձը եզրակացություն է արել այն մասին, որ քրեական գործի քննությանը մասնակցություն է ունեցել դրա իրավունքը չունեցող անձ՝ փաստաբան Ա. Թամազյանը, ում անմիջական մասնակցությամբ քրեական վարույթն իրականացող մարմնի կողմից ձեռք են բերվել նշված անթույլատրելի ապացույցներն ու դրվել ամբաստանյալ Ն. Պողոսյանի մեղքը հիմնավորող ապացույցների շարքում: Վերոշարադրյալից բացի, բողոքաբերը կասկածի տակ է դնում Ա. Թամազյանի մասնակցությամբ կատարված հարցաքննությունների արձանագրություններում առկա փաստական տվյալների ճշմարտացիությունը՝ նկատի ունենալով, որ Ն. Պողոսյանը երբևէ դպրոց չի հաճախել, կրթություն չի ստացել և որևէ լեզվով գրել-կարդալ չգիտի:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը և Ն.Պողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող արարքում ճանաչել և հռչակել անմեղ:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

16. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերին անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել սույն որոշման 13-րդ և 14-րդ կետերում բարձրացված հարցերի միջև առկա կապի վերաբերյալ: Այսպես, բողոքաբերի կողմից բարձրացված առաջին հարցը վերաբերում է ամբաստանյալ Ն.Պողոսյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայությանը (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը), այսինքն՝ այս մասով բողոքը վերաբերում է նյութական իրավունքի ենթադրյալ խախտմանը: Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ հարցը վերաբերում է նրան, թե արդյո՞ք սույն որոշման 10-րդ կետում թվարկված ապացույցները ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի պահանջների պահպանմամբ և ստորադաս դատարաններն իրավասո՞ւ էին արդյոք դրանք դնել Ն.Պողոսյանի մեղքը հաստատող ապացույցների շարքում, թե պետք է դրանք ճանաչեին որպես անթույլատրելի ապացույցներ (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը), այսինքն՝ փաստարկվում է դատավարական իրավունքի խախտման առկայությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի վկայակոչած նյութական իրավունքի ենթադրյալ խախտումներն ածանցված են դատավարական իրավունքի ենթադրյալ խախտումներով, հետևաբար առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել ստորադաս դատարանների կողմից սույն գործի քննության ժամանակ թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտումների հարցը:

*1. Բողոքաբերի կողմից վկայակոչված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման և Ն.Պողոսյանի դատավարական կարգավիճակի միջև առկա կապը*

17. Բողոքաբերի կողմից բարձրացված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցի պարզաբանման նպատակով Վճռա-



բեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել այն մասին, թե նախաքննության ընթացքում ապացույցների ձեռքբերման ժամանակ Ն.Պողոսյանն ունեցե՞լ է արդյոք կասկածյալի դատավարական կարգավիճակ:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կասկածյալ է այն անձը՝

1) որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով,

2) որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ձերբակալումն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»:

19. Շարադրված հոդվածների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը կասկածյալի կարգավիճակ ձեռք բերելը կապում է օրենքով նախատեսված գործողությունների կատարման կամ որոշման կայացման պահի հետ: Մասնավորապես, ձերբակալվածի, հետևաբար նաև կասկածյալի կարգավիճակ ձեռք բերելու համար անձը պետք է (1) փաստացի զրկվի ազատությունից, (2) բերվի իրավասու մարմնի մոտ, (3) պետք է կազմվի ձերբակալման արձանագրություն և (4) այդ մասին պետք է նրան հայտարարվի: Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով անձը կարող է ձերբակալվածի, հետևաբար նաև կասկածյալի կարգավիճակ ստանալ վերջին՝ չորրորդ գործողությունը կատարելու պահից, այսինքն՝ քրեական հետապնդման մարմնում ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելու պահից: Կամ կասկածյալի կարգավիճակ ձեռք բերելու համար անձի նկատմամբ պետք է խափանման միջոց ընտրելու մասին որոշում կայացվի:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով անձը կասկածյալի կարգավիճակ է ձեռք բերում ձևական (փաստաթղթային) ըն-

թացակարգի ավարտման պահից, այսինքն՝ կասկածյալի կարգավիճակի ձեռքբերումը կապվում է ձևական առումով «քրեական մեղադրանքի» առկայության հետ:

20. Քննարկվող հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է հայտնել *Գագիկ Միքայելյանի* վերաբերյալ գործով որոշմամբ. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա՝ «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե *ձևական* (փաստաթղթային), այլ *բովանդակային* (գործնական) իմաստով (*Դեվեերն ընդդեմ Բելգիայի* (*Deweere v. Belgium*) գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 44): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (*Էկլեն ընդդեմ Գերմանիայի* (*Eckle v. Germany*) գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73, *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի* (*Šubinski v. Slovenia*) գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62, *Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի* (*G.K. v. Poland*) գործով վճիռ, 2004թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98)» (տե՛ս Գագիկ Միքայելյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշման 21-րդ կետը):

21. Սույն գործի նյութերից երևում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, տեղեկություններ ունենալով, որ Ա. Լալայանին ապօրինի թմրամիջոց է իրացրել Ն. Պողոսյանը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), վերջինիս քրեական գործի վարույթին ներգրավել և հարցաքննել է որպես վկա, նախազգուշացրել ակնհայտ սուտ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հարցաքննության ընթացքում առաջադրել է հանցագործության կատարման մեջ Ն. Պողոսյանին մերկացնող հարցեր (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

22. Ուստի, հիմք ընդունելով սույն որոշման 20-րդ կետում և համապատասխանաբար նաև *Գ.Միքայելյանի* վերաբերյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախաքննության ընթացքում ապացույցների ձեռքբեր-

ման ժամանակ Ն.Պողոսյանը փաստացի եղել է կասկածյալ և պետք է օգտվեր այդ կարգավիճակից բխող իրավունքներից:

*II. Ն.Պողոսյանի պաշտպանության իրավունքի խախտումները*

23. Վճռաբեկ դատարանի առջև բողոքաբերի կողմից բարձրացված իրավական հարցը հետևյալն է. նախաքննության ընթացքում խախտվե՞լ է արդյոք Ն.Պողոսյանի պաշտպանության իրավունքը:

24. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Յուրաքանչյուր ոք ունի ծերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք»: Այսպիսով, քրեական դատավարությունում մեղադրվող անձի համար հայեցողական ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքը ստացել է սահմանադրական կարգավորում:

Սահմանադրական հիշյալ կարգավորումը համահունչ է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի պահանջներին, համաձայն որի՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի համար երաշխավորվում է իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք: (...)»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կասկածյալն ունի պաշտպանության իրավունք: (...)»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կասկածյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, (...)»:

25. Շարադրված դրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ ներպետական օրենսդրության իմաստով կասկածյալն ունի պաշտպա-

նության իրավունք: Կասկածյալի պաշտպանության իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունքների ամբողջությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալ որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքել իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության իրավունքը, որպես կասկածյալին վերապահված իրավունքների համակցություն, կասկածյալին հնարավորություն է տալիս իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով նշանակված պաշտպանի միջոցով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով կասկածյալի պաշտպանության իրավունքի իրականացման փաստացի հնարավորության ապահովման պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը:

Պաշտպանության իրավունքը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է: Բացի այդ, այն հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են՝

1) կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով.

2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի որևէ մեկին երաշխավորել հրավիրելու որևէ պաշտպանի:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից պահանջում է փաստաբանին նշանակել պաշտպան՝

1) կասկածյալի կամ մեղադրյալի միջնորդությամբ.

2) այն դեպքում, երբ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ կասկածյալը կամ մեղադրյալը պաշտպան չունի:(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ «Իր իրավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ, և փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ սույն օրենսգրքով իրավասու մարմնի որոշումը»:

27. Մեջբերված դրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ի թիվս պաշտպանի պարտադիր մասնակցության այլ դեպքերի, սահմանում է, որ վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին: Օրենսգիրքը հստակ սահմանում է նաև այդ դեպքում պաշտպանի հրավիրման ընթացակարգը, այն է՝ վարույթն իրականացնող մարմինը կասկածյալի ընտրած փաստաբանին ներգրավում է որպես պաշտպան: Այս դեպքում պաշտպանին վարույթ ներգրավելու հիմքը կասկածյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումն է: Եթե կասկածյալը չունի պաշտպան և վարույթն իրականացնող մարմնին չի ներկայացնում

որևէ փաստաբանի, ապա այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը ՀՀ փաստաբանների պալատից պահանջում է որևէ փաստաբանի նշանակել պաշտպան. պաշտպանի ընտրության և նշանակման իրավասություն քննիչը չունի: ՀՀ փաստաբանների պալատի նշանակումից հետո պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է պաշտպան նշանակելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի որոշումը:

ՀՀ քրեադատավարական օրենքում մնան պահանջի և ընթացակարգի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել կասկածյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ դրանով իսկ նպաստելով քրեական գործի արդարացի քննությանն ու լուծմանը, ինչպես նաև բացառել վարույթն իրականացնող մարմնի կողմից իր նախաձեռնությամբ որևէ մեկին որպես պաշտպան երաշխավորելը:

28. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննությունն իրականացնող մարմինը, ՀՀ քրեադատավարական օրենսգրքով սահմանված կարգով Ն.Պողոսյանին չտալով կասկածյալի կարգավիճակ, նրան մի քանի անգամ հարցաքննել է որպես վկա, կատարել առերեսում կասկածյալ Ա.Լալայանի հետ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ ամբաստանյալ Ն.Պողոսյանը զրել-կարդալ չգիտի, այսինքն՝ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին (տե՛ս սույն որոշման 9-րդ և 11-րդ կետերը), իսկ քրեական գործի նյութերում բացակայում է Ն.Պողոսյանի ստորագրությամբ վավերացված որևէ փաստաթղթային հաստատում, որով վերջինս լիազորում է փաստաբան Ա.Թամազյանին իրականացնել իր շահերի պաշտպանությունը, ինչպես նաև բացակայում է Ա.Թամազյանին պաշտպան նշանակելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի որոշումը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, սույն գործով փաստաբան Ա.Թամազյանի մասնակցությունը կրել է անօրինական բնույթ, քանի որ վերջինս վարույթին ներգրավվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգի խախտմամբ:

29. Հինք ընդունելով սույն որոշման 24-28-րդ կետերում արված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով

նախաքննության ընթացքում խախտվել է Ն.Պողոսյանի պաշտպանության իրավունքը, քանի որ վերջինս, փաստացի լինելով կասկածյալ, հարցաքննվել է որպես վկա: Բացի այդ, վարույթն իրականացնող մարմնի կողմից նա չի ապահովվել պաշտպանով այն դեպքում, երբ առկա էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պաշտպանի պարտադիր մասնակցության դեպք: Սույն գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, զրկելով Ն.Պողոսյանին առաջին իսկ հարցաքննության պահից պաշտպան ունենալու և օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից պաշտպանվելու փաստացի հնարավորությունից, ինչպես նաև պաշտպանի պարտադիր մասնակցության պայմաններում օրենքով սահմանված կարգով Ն. Պողոսյանին չապահովելով պաշտպանով՝ թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի, 69-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 70-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի և 71-րդ հոդվածի պահանջների խախտումներ:

30. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում չպարզաբանված է մնում այն հարցը, թե փաստաբան Ա.Թամազյանն ի վերջո ինչպես է ներգրավվել սույն գործի վարույթին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գնահատման ենթարկելով սույն որոշման 8-րդ և 9-րդ կետերում արտացոլված փաստական հանգամանքները, ինչպես նաև սույն որոշման մեջ արձանագրված Ն. Պողոսյանի պաշտպանության իրավունքի խախտման փաստը, ստորադաս դատարանը պետք է քննության առնի նաև այն հարցը, թե սույն գործով փաստաբան Ա. Թամազյանի մասնակցության առումով արդյո՞ք առկա է եղել քննիչի երաշխավորությունը:

### *III. Սույն գործով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունը*

31. Բողոքաբերի կողմից փաստարկված դատավարական իրավունքի խախտման հետ կապված հաջորդ հարցը, որը բարձրացվել է Վճռաբեկ դատարանի առաջ, վերաբերում է նրան, թե ստորադաս դատարաններն իրավասու՞ էին արդյոք սույն որոշման 10-րդ կետում թվարկված ապացույցները դնել Ն.Պողոսյանի մեղքը հաստատող ապացույցների շարքում:

32. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝ (...)

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ. (...)

2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա (...):»:

33. Ապացույցների անթույլատրելիության հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է հայտնել *Արմեն Սարգսյանի* վերաբերյալ գործով որոշմամբ. «(...) որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է



ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում» (տե՛ս Արմեն Սարգսյանի վերաբերյալ գործով Վճաբեկ դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵԲՐԴ/0295/01/08 որոշման 15-րդ կետը):

34. Հիմք ընդունելով սույն որոշման 33-րդ կետում և համապատասխանաբար նաև *Ա.Սարգսյանի* վերաբերյալ որոշման մեջ առկա իավական դիրքորոշումները, ինչպես նաև հիմնվելով սույն որոշման 24-29-րդ կետերում առկա իրավական վերլուծության վրա՝ Վճաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի նախաքննության ընթացքում ամբաստանյալ Ն.Պողոսյանի մասնակցությամբ կատարված քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված, սույն որոշման 10-րդ կետում թվարկված ապացույցները ստացվել են վերջինիս պաշտպանության իրավունքի խախտման պայմաններում:

35. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

36. Սույն որոշման 34-րդ կետում նշված խախտումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով քրեադատավարական օրենքի էական խախտում է, ուստի հիմք է սույն գործով Վերաքննիչ և Առաջին ատյանի դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Վճաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է ուղարկել Առաջին ատյանի դատարան, որը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ և 106-րդ հոդվածներով, պետք է քննարկման առարկա դարձնի վիճարկվող ապացույցների թույլատրե-

լիության հարցը՝ սույն որոշման մեջ արձանագրված պաշտպանության իրավունքի խախտման լույսի ներքո:

37. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել բողոքում բարձրացված նյութական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկները. դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

38. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական դատավարության ընթացքում հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձի պաշտպանության իրավունքի ապահովման՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականության իրավական հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝*

*ստորագրություն*

*Դատավորներ՝*

*ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի որոշում գործ թիվ ՀՅՔՐԴՅ/0106/01/08  
Նախագահող դատավոր՝ Հ.Ասատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

ճախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՅԱՆՅԱՆԻ

2009թ. ապրիլի 10-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Վարդան Մեսրոպի Մինասյանի պաշտպաններ Ռ.Սահակյանի,

Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշման դեմ,

## **Պ Ա Ր Ձ Ե Ց**

### **Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2007թ. դեկտեմբերի 18-ին՝ ժամը 18-ի սահմաններում, անհայտ անձի կողմից, ապօրինաբար պահվող հրազենով, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, դիտավորությամբ Ռոբերտ Մայիսի Վարդապետյանի, Վահագն Ռազմիկի Հովհաննիսյանի և Գևորգ Լևիկի Ստեփանյանի վրա կրակոցներ արձակելու, դրա հետևանքով Գ.Ստեփանյանին կյանքից զրկելու, իսկ Ռ.Վարդապետյանի և Վ.Հովհաննիսյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 20114307 քրեական գործը:

2. 2007թ. դեկտեմբերի 22-ին Վ.Մինասյանը ձերբակալվել է:

3. 2007թ. դեկտեմբերի 25-ին Վ.Մինասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2007թ. դեկտեմբերի 18-ին ժամը 16-ի սահմաններում, Աբովյան քաղաքի Բարեկամության փողոցում երթևեկության ընթացքում ձայնային ազդանշաններ տալու պատճառով բազմաթիվ անձանց ներկայությամբ վիճաբանել է Ռ.Վարդապետյանի հետ, որի ընթացքում նրանք մոտ 10 րոպե շարունակ, միմյանց նկատմամբ բռնություն գործադրելով, քաջքշել են իրար և տվել փոխադարձ հայհոյանքներ՝ այդ կերպ դիտավորությամբ, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և արտահայտելով բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ: Այնուհետև, շարունակելով խուլիգանական գործողությունները, մի կողմից Վ. Մինասյանը, նրա ընկեր Յ. Թանդարյանը, Ս.Արդուխանյանը և ինքնությունները չպարզված անձինք, իսկ մյուս կողմից Ռ.Վարդապետյանը, նրա ընկեր Գ.Ստեփանյանը, Վ. Հովհաննիսյանը և ինքնությունները չպարզված անձինք վիճաբանության հանգամանքները պարզաբանելու նպատակով հավաքվել են Աբովյան-Ջրաբեր ավտոճանապարհի 4-րդ կմ հատ-

վածի հարևանությամբ գտնվող «Կանալ» կոչվող տարածքում և վիճաբանել միմյանց հետ:

Խուլիգանության ընթացքում «Կանալ» կոչվող տարածքում Վ. Մինասյանը, գործադրելով իր մոտ պահվող «Բայկալ-442» մոդելի «XPM 7568» համարի հրագեն հանդիսացող ատրճանակն ու «Սայգա-12C» մոդելի «H04431605» համարի որսորդական, ողորկափող ինքնակից կարաբինը, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կրակոցներ է արձակել Ռ. Վարդապետյանի և Վ. Հովհաննիսյանի վրա նրանց սպանելու դիտավորությամբ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել: Վ.Մինասյանի արձակած կրակոցներից Վ. Հովհաննիսյանի և Ռ. Վարդապետյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս:

4. 2007թ. դեկտեմբերի 25-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի որոշմամբ Վ.Մինասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

5. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. փետրվարի 18-ի, 2008թ. ապրիլի 18-ի, 2008թ. մայիսի 16-ի, 2008թ. հուլիսի 17-ի և 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումներով մեղադրյալ Վ. Մինասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացվել է:

6. 2008թ. հուլիսի 4-ին որոշում է կայացվել Վ. Մինասյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: 2008թ. օգոստոսի 13-ին Վ. Մինասյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով:

7. 2008թ. հոկտեմբերի 1-ին Վ.Մինասյանի և մյուսների վերաբերալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հյուսիսային քրեական դատարան:

8. 2008թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ հյուսիսային քրեական դատարանը որոշում է կայացրել քրեական գործն ըստ մեղադրանքի Վարդան Մինասյանի ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով ընդունել վարույթ:

Նշված որոշմամբ Վ.Մինասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

9. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ պաշտպանների վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

10. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել Վ.Մինասյանը և նրա պաշտպաններ Ռ.Սահակյանը, Լ.Սահակյանը և Ե.Վարոսյանը: Բողոքը վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 9-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ընդունվել է վարույթ: Ներկայացված վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

11. ՀՀ հյուսիսային քրեական դատարանի՝ քրեական գործը վարույթ ընդունելու վերաբերյալ 2008թ. հոկտեմբերի 15-ի որոշմամբ Վ.Մինասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը հետևյալ պատճառաբանությամբ. «(...) նկատի ունենալով, որ դեռևս 07.10.2008թ.-ին լրացել է Վարդան Մեսրոպի Մինասյանին կալանավորման տակ պահելու ժամկետը, ուստի գործը վարույթ ընդունելու հետ միաժամանակ պետք է լուծել նաև նրա նկատմամբ խափանման միջոցի հարցը»:

12. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15-ի որոշումն անփոփոխ է թողնվել այն պատճառաբանությամբ, որ «Եվրոպական դատարանի այս (Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի գործով որոշման մեջ արտահայտված) իրավական դիրքորոշման լուսիս ներքո գնահատելով Հյուսիսային քրեական դատարանի 15.10.2008թ. որոշման՝ մեղադրյալ Վարդան Մինասյանին կալանքի տակ պահելու կարգադրությունը, վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրա «անօրինական» լինելու մասին պաշտպանների փաստարկները հիմնավորված չեն, քանի որ Վ.Մինասյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում կարող էր տեղի ունենալ հակառակ պարագայում, եթե դատարանը նման կարգադրություն չա-

ներ, և մեղադրյալը շարունակաբար գտնվել կալանքի տակ՝ դատաքննության ընթացքում»:

13. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշման մեջ նշվում է նաև, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ գլխի դրույթները, որոնք կարգավորում են ստացված քրեական գործը դատական քննության նախապատրաստելու ընթացքում իրականացվող դատավարական գործողությունները, սահմանում է, որ այդ փուլում բոլոր հարցերը քննարկվում են և դրանց վերաբերյալ որոշումները կայացվում են դատավորի կողմից՝ առանց դատավարության մասնակիցների ներկայության և առանց դատական նիստ հրավիրելու: Նշված գլխում սահմանված չէ որևէ ընթացակարգ, որը դատարանին հնարավորություն կտար մեղադրյալին մասնակից դարձնելու որոշման կայացմանը:

Իսկ նյութերից երևում է, որ դատարանը կայացված որոշումը տրամադրել է պաշտպանական կողմին, որոնք օգտվել են այն բողոքարկելու, դրա դեմ իրենց փաստարկներն ու հիմնավորումները ներկայացնելու հնարավորությունից: Այսինքն, պաշտպանական կողմը զրկված չի եղել Վարդան Մինասյանի կալանավորման օրինականությունը արդյունավետ կերպով վիճարկելու իրավունքից»:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոք բերած անձը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի (JĖČIUS v. LITHUANIA, 2000թ., գանգատ N 34578/97) գործով որոշումը, նշում է, որ 2008թ. հոկտեմբերի 7-ից սկսած՝ Վ.Մինասյանը ապօրինաբար գտնվել է անազատության մեջ:

Վ.Մինասյանին կալանքի տակ պահելու ժամկետը լրացել է 2008թ. հոկտեմբերի 7-ին, և այդ օրը նա պետք է ազատ արձակվեր, սակայն նա մինչև 2008թ. հոկտեմբերի 15-ը գտնվել է անազատության մեջ՝ առանց օրենքով սահմանված կարգով դատարանի կողմից կայացված որոշման: Վ.Մինասյանի նկատմամբ խափանման միջոցի ընտրության հարցը լուծվել է ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15-ի՝ քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշմամբ, ինչն ըստ բողոքաբերի հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմ-

նարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ և ԶԶ Սահմանադրության 16-րդ հոդվածների, ԶԶ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ, 11-րդ հոդվածի 5-րդ և 142-րդ հոդվածի 4-րդ մասերի խախտում:

15. Բողոքաբերը նշում է, որ ԶԶ հյուսիսային քրեական դատարանը քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելիս չէր կարող Վ.Մինասյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրել: Քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելիս ԶԶ հյուսիսային քրեական դատարանը չէր կարող ծանոթ լինել քրեական գործի նյութերին և դրանց ծանոթանալու հնարավորություն կստանար միայն քրեական գործը վարույթ ընդունելուց հետո: Բողոքաբերը նշում է նաև, որ ԶԶ հյուսիսային քրեական դատարանը Վ.Մինասյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց է ընտրել այն պայմաններում, երբ ծանոթ չի եղել վերջինիս կողմից կատարված դեպքին առնչություն ունենալու հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության մասին վկայող որևէ փաստաթղթի:

16. Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք նախադեպային որոշումներ՝ բողոքաբերը նշում է, որ ազգային դատական մարմինները պարտավոր են հաշվի առնել բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ են պարզելու համար, թե կա արդյոք հասարակական շահ, համապատասխան և բավարար պատճառ, որը, հաշվի առնելով անմեղության կանխավարկածը, արդարացնում է նահանջը անձի ազատության իրավունքի հարգանքից: Անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ հիմքերը պետք է հիմնավորված լինեն կոնկրետ փաստացի նյութերով, տվյալներով, մինչդեռ ԶԶ վերաքննիչ քրեական դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ առաջին ատյանի դատարանը ընդհանրապես չի նշել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու որևէ հիմք:

17. Բողոքաբերը նշում է, որ Վ. Մինասյանի նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցը լուծելիս ԶԶ հյուսիսային քրեական դատարանը պարտավոր էր ապահովել պաշտպանական կողմի հնարավորությունը արդյունավետ կերպով վիճարկելու Վ. Մինասյանի կալանավորման օրինականությունը, ինչը չի կատարել:

18. ԶԶ հյուսիսային քրեական դատարանը հաշվի չի առել, իսկ ԶԶ վերաքննիչ քրեական դատարանը կալանավորումը վերացնելու բա-



վարար հիմք չի համարել այն հանգամանքները, որ Վ. Մինասյանը դատվածություն չունի, արատավորված չի եղել, ունի բարձրագույն իրավաբանական կրթություն, անուսնացած է, խնամքին ունի երեք անչափահաս երեխա, կին և տարեց մայր, ունի մշտական բնակության վայր, աշխատանք:

19. Վկայակոչելով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ /2006/13 հանձնարարականի 21-րդ կանոնը, որի համաձայն՝ անձին կալանավորելու մասին դատական իշխանության ցանկացած որոշում պետք է լինի պատճառաբանված, բողոքաբերը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ ՀՀ հյուսիսային քրեական դատարանն իր որոշման պատճառաբանական մասում օրենքով սահմանված կարգով չի քննարկել խափանման միջոցի հիմնավոր կամ անհիմն լինելը, չի պատճառաբանել իր որոշումը: Արդյունքում դատարանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքի վրա, որ չկա հիմնավոր կասկած, որ Վ.Մինասյանն առնչություն չունի իրեն մեղսագրվող արարքի հետ, հաշվի չի առնվել, որ բացակայում են նրան կալանավորելու հիմքերը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոքաբերը խնդրել է Վ.Մինասյանի կալանավորումը որպես խափանման միջոց վերացնել և նրան կալանքից ազատ արձակել:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե ՀՀ հյուսիսային քրեական դատարանն իրավասո՞ւ էր արդյոք Վ.Մինասյանի նկատմամբ խափանման միջոցի ընտրության հարցը լուծել քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

*1. Դատական քննության նախապատրաստության փուլում անձի կալանավորման հարցը:*

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «(...) Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, կամ կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացվում է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 291-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ղատարան մուտք եղած քրեական գործը դատավորները սահմանված կարգով իրենց վարույթ են ընդունում, որի մասին կայացվում է որոշում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

1) դատական քննություն նշանակելու մասին.

2) քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին.

3) քրեական գործի վարույթը կասեցնելու մասին.

4) գործը մեղադրողին վերադարձնելու մասին.

(...)

6) գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին.

7) ինքնաբացարկի մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի համաձայն՝ «Որոշումներ կայացնելու հետ միաժամանակ, բացի գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշումից, դատարանը պարտավոր է քննել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում»:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ անձի վերաբերյալ քրեական գործը դատարան ուղարկվելու դեպքում, եթե մինչդատական վարույթում անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը չի վերացվում, ապա դրա ժամկետի ընթացքը կասեցվում է, և անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ընտրված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու մասին դատարանի որոշման բացակայության պայմաններում անձը շարունակում է գտնվել անազատության մեջ մինչև քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը 15-օրյա ժամկետում կայացնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը և վերջիններիս կայացման հետ մեկտեղ լուծի խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, իսկ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում՝ դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը:

Այլ կերպ՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության նշված կարգավորումից բխում է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ անձի ազատության իրավունքը կարող է սահմանափակվել և անձը շարունակաբար կարող է գտնվել կալանքի տակ՝ առանց դատավարական հիմքի, այն է՝ խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշման:

*II. Քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշմամբ անձի կալանքի հարցի լուծումը.*

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս (...)»:

24. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով. (...) գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար, (...)»:

25. *Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի* գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետից բխում է, որ անձի կալանքի հիմնավորումը սոսկ այն փաստով, որ գործը փոխանցվել է դատարան, չի կարող հանդիսանալ «օրինական» հիմք անձի կալանքը

շարունակելու համար (JĖČIUS v. LITHUANIA, 2000թ., գանգատ N34578/97, կետ 63):

Նշված վճռի 68-րդ կետում եվրոպական դատարանն այն մոտեցումն է արտահայտել, որ Լիտվայի նախկին քրեական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 6-րդ կետը (որի բովանդակությունն ամբողջովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությանը), չի կարող օրինական հիմք լինել կալանքի կիրառման համար: Կալանքի ժամկետը սկզբունքորեն «օրինական է», եթե այն հիմնված է դատարանի որոշման վրա (JĖČIUS v. LITHUANIA, կետ 68):

26. Հաշվի առնելով *Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի* գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացրած հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրողի կողմից գործը դատարան ուղարկված լինելու հիմքով անձին կալանքի տակ պահելու ժամկետի կասեցումն անձի ազատության իրավունքի անօրինական սահմանափակում է: Ուստի ՀՀ քրեադատավարական օրենքի 138-րդ հոդվածի 3-րդ մասում առկա կարգավորումը հակասում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ և 136-րդ հոդվածի 2-րդ մասերին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ կալանքի երկամսյա ժամկետի ավարտին մնացել է 15 օրից քիչ ժամանակ, այսինքն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկի կայացման ժամկետից պակաս ժամանակ, նախաքննական մարմինը գործը դատարան ուղարկելու հետ միաժամանակ պետք է լուծի նաև անձի կալանքի հարցը, այն է՝ պետք է անձին ազատ արձակի, եթե վերացել են նրան կալանքի տակ պահելու հիմքերը, կամ դատարանին միջնորդություն ներկայացնի կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ, եթե առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերը:

27. Հետևաբար՝ ՀՀ հյուսիսային քրեական դատարանն իրավասու էր քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշման կայացման հետ մեկտեղ լուծել Վ.Մինասյանի կալանքի հարցը, քանի որ դա բխում

է Կոնվենցիայով նախատեսված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ապահովման անհրաժեշտությունից:

### *III. Բողոքաբերի մյուս փաստարկները.*

28. Վճռաբեկ դատարանը հիմնավորված չի համարում բողոքաբերի պնդումն այն մասին, որ Վ.Մինասյանի նկատմամբ խափանման միջոցի հարցը լուծելիս ՀՀ հյուսիսային քրեական դատարանը չի ապահովել պաշտպանական կողմի հնարավորությունը արդյունավետ կերպով վիճարկելու Վ.Մինասյանի կալանավորման օրինականությունը, և իր համաձայնությունն է արտահայտում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշման մեջ արտահայտված դիրքորոշման հետ (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

29. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ ՀՀ հյուսիսային քրեական դատարանը հաշվի չի առել, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կալանավորումը վերացնելու բավարար հիմք չի համարել Վ.Մինասյանի ինքնությունը բնութագրող հանգամանքները, ապա գործի նյութերից երևում է, որ վերաքննիչ դատարանն անդրադարձել է այդ հարցին և արդյունքներով հանգել է ճիշտ հետևության (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի մեկնաբանության վերաբերյալ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է *Ասլան Ավետիսյանի* գործով 2008թ. հոկտեմբերի 31-ին կայացված ԱՎԴ/0022/06/08 որոշման մեջ):

30. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական քննության նախապատրաստության փուլում անձի կալանավորման հարցի կապակցությամբ սույն գործով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վարդան Մեսրոպի Մինասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15-ի

որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշումը Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններով թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝*

*ստորագրություն*

*Դատավորներ՝*

*ստորագրություններ*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
քրեական գործ թիվ LԴ/0197/06/08  
նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ

Ս.ՕՅԱՆՅԱՆԻ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

ք.Երևանում

ղմբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ,

## **Պ Ա Ր Ձ Ե Ց**

### **1.Գործի դատավարական նախապատմությունը**

1. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնում 2008թ. ապրիլի 23-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 53102008 քրեական գործը:

Լոռու մարզի քննչական բաժնի ավագ քննիչի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ Տիգրան Վահրադյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ներգրավվել է որպես մեղադրյալ:

2008թ. օգոստոսի 30-ին Տ.Վահրադյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ բավարարվել է քննիչի միջնորդությունը, և Տ.Վահրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ երկու ամիս ժամկետով:

2. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ բավարարվել է պաշտպանի միջնորդությունը Տ.Վահրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը գրավով փոխարինելու մասին: Որպես գրավի առարկա է սահմանվել 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամը:

3. Որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազության դատախազը՝ խնդրելով վերացնել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ Տ.Վահրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ որոշումը:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշմամբ ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

4. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:



ՀՀ վճռաբեկ դատարանը 2008թ. նոյեմբերի 3-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները**

5. Տ.Վահրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Ֆրեդո և ընկերներ» ՍՊԸ-ի տնօրեն, «Վորլդ Վիթն ինտերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի Ստեփանավանի տարածքային զարգացման ծրագրի /ՏԶԾ/ ղեկավար, իր վաղեմի ծանոթ Վահագն Ալֆրեդի Գրիգորյանից 2007թ. կեսերին տեղեկանալով նույն թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հիշյալ մասնաճյուղի կողմից կազմակերպվելիք «Տավարաբուծության զարգացումը Ստեփանավանի ՏԶԾ համայնքներում» ծրագրի շրջանակներում շուրջ 32 մլն դրամով 110 գլուխ հղի կովերի մատակարարման մրցույթի մասին, Վ.Գրիգորյանի հետ նախնական համաձայնությամբ, իր ղեկավարած ընկերության և այլ անձանց անուններից բազմաթիվ կեղծ փաստաթղթեր, այդ թվում իր մորաքրոջ դուստր անհատ ձեռնարկատեր Հերմինե Ղուկասյանի կողմից իբր 110 գլուխ կովեր մատակարարվելու, դրանք «Ֆրեդո և ընկերներ», «Օագիս Սիթի» և «Վահան և Տիգրան» ՍՊԸ-ին հանձնելու վերաբերյալ կեղծ ակտեր և այլ փաստաթղթեր կազմելու միջոցով, խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել են հիշյալ մասնաճյուղի առանձնապես խոշոր չափերի՝ 32.285.000 ՀՀ դրամը, որը ծախսել են իրենց կարիքների համար:

6. Քննիչի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Տ.Վահրադյանը ներգրավվել է որպես մեղադրյալ:

Քննիչի նույն օրվա որոշումներով նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և միջնորդություն է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որը դատարանի նույն օրվա որոշմամբ բավարարվել է:

7. 2008թ. սեպտեմբերի 8-ին Տ.Վահրադյանի պաշտպան Ի. Գազարովան դիմել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Տ.Վահրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին: Տ.Վահրադյանն ինքնակամ ներկայացել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշված միջնորդության քննարկմանը և մասնակցել է իր նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ դատական միստին: Նիստի ընթացքում հայտնաբերվելով ոստիկանության աշխատակցի կողմից՝ Տ.Վահրադյանը բերման է ենթարկվել ոստիկանության Լոռու մարզային վարչություն:

8. 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է պաշտպանի միջնորդությունը և Տ.Վահրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինել է գրավով:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

9. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ բավարարվել է Տ.Վահրադյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը, և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել 2 ամիս ժամկետով կալանքը: Օգոստոսի 30-ի որոշման մեջ դատարանը նշել է, որ «Տ.Վահրադյանի հանցանքը հիմնավորված է իր և վկաների ցուցմունքներով, կազմված կեղծ փաստաթղթերով ու այլ ապացույցներով»:

10. 2008թ. սեպտեմբերի 8-ին Տ.Վահրադյանի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան խնդրելով Տ.Վահրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոխարինել գրավով:

11. 2008թ. սեպտեմբերի 17-ին Տ.Վահրադյանն ինքնակամ ներկայացել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան, որտեղ հայտնաբերվել և բերման է ենթարկվել ոստիկանության Լոռու մարզային վարչություն՝ ի կատարումն Լոռու մարզի ընդհանուր իրավասութ-

յան դատարանի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ 2008թ. օգոստոսի 30-ի որոշման:

12. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասը, Տ.Վահրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը փոխարինվել է գրավով:

13. Դատական ստուգման արդյունքում ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշմամբ անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումը:

#### **4. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոք բերած անձը գտնում է, որ նախաքննության ընթացքում Տ.Վահրադյանն անեն կերպ փորձել է խոչընդոտել քննությանը, խեղաթյուրել ճշմարտությունը և այդ նպատակով ուղղորդել վկաներին: 2008թ. օգոստոսի 30-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Տ.Վահրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացվել դատարան: Դատարանը, հիմնավոր համարելով մեղադրյալ Տ.Վահրադյանի հանցանքն ու հաստատելով, որ նա թաքնվել է ու խուսափում է քրեական վարույթն իրականացնող մարմնից, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել կալանավորումը:

15. 2008թ. սեպտեմբերի 17-ին նույն դատարանը նույն դատավորի նախագահությամբ մեղադրյալ Տ.Վահրադյանի պաշտպանի միջնորդության հիման վրա անդրադարձել է Տ.Վահրադյանի խափանման միջոցին և կալանքը փոխարինել է գրավով, որով փաստորեն հակասել է իր իսկ կողմից 2008թ. օգոստոսի 30-ին կայացրած որոշմանը:

16. Մեղադրյալ Տ.Վահրադյանի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հանգամանքի առավել քան բավարար հիմնավորում էր նրա՝ հետախուզման մեջ գտնվելը, իսկ դատարանը

հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ այլ խափանման միջոց ընտրելով, ամբողջությամբ հակասել է իր իսկ կողմից դեռևս 2008թ. օգոստոսի 30-ին կայացրած որոշմանը:

17. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, քննության առնելով առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված բողոքը, այն թողել է օրինական ուժի մեջ, մինչդեռ սույն քրեական գործով ձեռք բերած նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալ Ս.Վահրադյանը կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութեր թաքցնելու կամ կեղծելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու ճանապարհով:

18. Բողոք բերած անձը գտնում է, որ Ս.Վահրադյանի գործով կայացրած դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ դատարանների կողմից օրենքի միատեսակ կիրառման և «ապագայում արդարացի պատիժ նշանակելու համար»:

19. Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի սեպտեմբերի 17-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

## **5.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

1. Մինչդատական վարույթի ընթացքում անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցի դատական քննարկմանը նրա մասնակցությունը.

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցին. մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցի դատական քննարկմանը մեղադրյալի մասնակցության միակ եղանակը նրան դատարան տանելն է, թե մեղադրյալը կարող է նաև ներկայանալ ինքնակամ:

21. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված

միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը (...):

22. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

զ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կետի "զ" ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով

(...)»:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ձերբակալվածը, վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, ենթակա է ազատման, եթե (...) լրացել է ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «(...) ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի (...)»:

24. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված «անհապա-

ղութունը» ՀՀ քրեական դատավարության իմաստով ձերբակալման ե-  
ռօրյա ժամկետն է, որից հետո անձը կան ազատ է արձակվում, կան  
մինչդատական վարույթ իրականացնող մարմնի միջնորդության հի-  
ման վրա դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման  
միջոց ընտրվում է կալանավորումը:

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի  
2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝

«Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբեր-  
յալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ  
քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավո-  
րի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադր-  
յալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ,  
եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության  
մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդո-  
տում միջնորդության քննմանը: Դատարանը պարտավոր է դատական  
նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնոր-  
դություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկա-  
յացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ  
մասի 1-ին պարբերությունից բխում է, որ «տարվում է դատավորի կամ  
այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականաց-  
նելու դատական իշխանություն» կոնվենցիոնալ պահանջը ՀՀ ներպե-  
տական իրավունքում արտացոլված է դատարանում կալանավորման  
միջնորդության քննարկմանը վարույթն իրականացնող մարմնի տրա-  
մադրության տակ գտնվող մեղադրյալի մասնակցությունն ապահովե-  
լու՝ այդ մարմնի պարտականության մեջ:

26. Այնուհանդերձ, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետում ամ-  
րագրված «տարվում է» արտահայտությունը մեկնաբանելով ինչպես  
Կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ ներպետական օրենսդրության տրամաբա-  
նության ենթատեքստում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղա-  
դրյալի ներկա գտնվելը դատարանում կարող է տեղի ունենալ ինչպես  
նախաքննության մարմնի կողմից նրան հարկադրաբար դատարան  
տանելով, այնպես էլ դատական նիստին մեղադրյալի ինքնակամ ներ-  
կայանալով: Կալանավորման հարցի քննարկմանը մեղադրյալի մաս-  
նակցությունն ազատությունից զրկելու օրինականության ապահովման  
հիմնական երաշխիքն է, որը չի կարող արհեստականորեն նեղացվել՝

ելնելով դատարանում անձի ներկայությունը ապահովելու դատավարական եղանակներից:

27. Հետևաբար՝ մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցի դատական քննարկմանը մեղադրյալը կարող է մասնակցել նաև ինքնական ներկայանալով: Այսինքն՝ Տ.Վահրադյանը, իր նկատմամբ խափանման միջոցի դատական քննարկմանը ինքնական ներկայանալով (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), գործել է օրինականության սահմաններում:

28. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի նաև հետևյալ հարցին. երբ հետախուզման մեջ գտնվող անձը հայտնվում է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ, նա պե՞տք է արդյոք անհապաղ տարվի դատավորի մոտ:

29. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «(...) քննիչի որոշման հիման վրա, սույն օրենսգրքով սահմանված կարգով, հետախուզվող մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է միջնորդությունը ներկայացրած անձի և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին»:

30. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման նախորդ կետում նշված իրավադրույթները, հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ խափանման միջոցի ընտրության առումով, չեն բխում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ դատավորի մոտ անհապաղ տարվելու պահանջից: Նշված իրավանորմերը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն են տալիս անձի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց ընտրել անձի բացակայության պայմաններում՝ առանց հնարավորություն ընձեռելու, որ հետախուզման արդյունքում հայտնաբերված անձը ներկայանա դատարան, և անձի կալանավորման հարցի քննարկումը տեղի ունենա իր ներկայությամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեադատավարական օրենքում ամրագրված նման կարգավորումը, կհակասի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին և կոպտորեն կխախտի անձի ազատության իրա-

վունքը, եթե հետախուզման մեջ գտնվող անձի ի հայտ գալուց հետո նա անհապաղ դատարանի առջև չներկայացվի:

31. Սույն որոշման նախորդ կետում Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը հիմնվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա: Այսպես, անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմանը՝ Եվրոպական դատարանը *Լադենտն ընդդեմ Լեհաստանի* գործով վճռում նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը չի նախատեսում որևէ հնարավոր բացառություն այն պահանջից, որ անձը ձերբակալվելիս կամ կալանավորվելիս պետք է բերվի դատավորի կամ այլ պաշտոնյայի մոտ (*Ladent v. Poland*, 2008թ., գանգատ N 11036/03, կետ 75): *Գարաբաևն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճռում Եվրոպական դատարանը դիրքորոշումը հետևյալն է. այն, որ դատարանը հեռակա որոշում է կայացրել անձին կալանավորելու մասին այն պայմաններում, երբ անձը թաքնվում էր արդարդատությունից և գտնվում էր միջազգային հետախուզման մեջ, չի հակասում Կոնվենցիայի դրույթներին: Սակայն Թուրքմենստանից դիմումատուի վերադառնալուց և Ռուսաստանում ձերբակալվելուց հետո, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա, նա պետք է անհապաղ հասցվեր դատավորի մոտ (*Garabaev v. Russia*, 2007թ., բողոք N 38411/02, կետ 101):

32. Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ ձերբակալված կամ կալանավորված անձանց ազատությունից զրկելու նկատմամբ դատական վերահսկողությունը կարևորագույն երաշխիք է ընդդեմ ազատությունից զրկված անձի նկատմամբ վատ վերաբերմունքի և իրավակիրառ մարմինների կողմից իշխանության չարաշահման (տե՛ս *McKay v. The United Kingdom*, 2006թ., գանգատ N 543/03, կետ 32):

Վճռաբեկ դատարանը ևս կարևորում է քրեական դատավարության շրջանակներում ազատությունից զրկված անձին անհապաղ դատարան ներկայացնելու երաշխիքային նշանակությունը:

33. Հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգում Կոնվենցիայի բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահաստատված պահանջի ներպետական երաշխավորման պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտնում



է, որ ՀՀ ներպետական օրենդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: Դա հնարավորություն կտա նվազեցնել կամայական կալանավորման դեպքերը, ինչպես նաև կապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը:

34. Հետևաբար՝ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տ.Վահրադյանի՝ հետախուզման մեջ գտնվելու հանգամանքը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ նրա ի հայտ գալուց հետո անհապաղ դատավորի մոտ տարվելու համար: Այդ հանգամանքը չէր կարող ազդել նաև Տ.Վահրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելու խնդրանքի իրացման վրա:

## *II. Տ.Վահրադյանի նկատմամբ գրավի կիրառումը.*

35. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ հարցը հետևյալն է. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, կայացնելով Տ.Վահրադյանի նկատմամբ ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ որոշում, հակասե՞լ է արդյոք նախկինում իր կայացրած կալանավորման որոշմանը:

36. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը և գրավը կարող են կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանավորունը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ (...): Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմի միջնորդությամբ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը:

Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը»:

37. Նախորդ կետում մեջբերված իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ գրավը, լինելով կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կարող է կիրառվել միայն այն մեղադրյալի նկատմամբ, որի նկատմամբ առկա է խափանման միջոց կալանք ընտրելու մասին դատարանի որոշումը:

Այս պարագայում եթե Վճռաբեկ դատարանն ընդունի, որ Տ.Վահրադյանին կալանավորելու և կալանքը գրավով փոխարինելու մասին դատական ակտերի միջև առկա է հակասություն, ապա դրանով գործնականում անհնարին կդարձնի խափանման միջոց գրավի կիրառման հնարավորությունը՝ ընդհանուր իրավասության դատարաններին կաշկանդելով իրենց կայացրած կալանավորման որոշումներով: Մինչդեռ անձի ազատության կանխավարկածը և մինչդատական վարույթի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը կարող են երաշխավորված լինել միայն այն պայմաններում, երբ կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս դատարանը ազատ լինի:

38. Ուստի բողոք բերած անձի պնդումն այն մասին, որ առկա է հակասություն Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած կալանավորման և գրավի մասին որոշումների միջև, անհիմն է և չի բխում ոչ ներպետական իրավունքից, ոչ էլ դրա մասը կազմող միջազգային իրավունքի նորմերից: Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դրսևորած մոտեցումն իրավաչափ է ինչ-

պես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, այնպես էլ ՀՀ ներպետական օրենսդրության իմաստով:

*III. Տ.Վահրադյանին կալանավորելու որոշումը և նրա անմեղության կանխավարկածը.*

39. Սույն գործով Վճռաբեկ դատարանն ըստ էության պետք է պատասխանի նաև հետևյալ հարցին. խախտվել է արդյոք Տ.Վահրադյանի անմեղության կանխավարկածը, երբ նրան կալանավորելու մասին դատական ակտում նրա հանցանքը հիմնավորված է համարվել:

40. ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝

«Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

(...)»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

(...)

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետեւությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

(...)

5. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր»:

41. Վճռաբեկ դատարանն իր մտահոգությունն է արտահայտում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացվող դատական ակտերում, մասնավորապես Տ.Վահրադյանին կալանավորելու որոշման մեջ անձի մեղավորության հարցերի քննարկման կապակցությամբ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դա սահմանադրական և

քրեադատավարական կարևորագույն սկզբունքի՝ անմեղության կանխավարկածի խախտումն է:

42. Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս առաջադրված մեղադրանքում անձի մեղավորության հարցը քննարկման առարկա դարձնելով՝ խափանման միջոցը ձեռք է բերում պատժիչ նպատակ: Մինչդեռ խափանման միջոցը կիրառման նպատակով տարբերվում է պատժից:

Խափանման միջոցի կիրառման նպատակը քրեական գործի մինչդատական և դատական քննության ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, ինչպես նաև դատավճռի կատարումն ապահովելն է: Մասնավորապես, կալանքի, որպես խափանման միջոցի, կիրառման վարույթը միտված չէ առաջադրված մեղադրանքի վերաբերյալ փաստական տվյալների հավաքմանը, ստուգմանն ու գնահատմանը: Այդ վարույթի նշանակությունն այն է, որ քննարկվի և լուծվի կալանավորված անձին հասարակությունից ժամանակավորապես մեկուսացնելու և հսկողության ներքո պահելու անհրաժեշտության հարցը՝ ելնելով գործի քննության շահերից:

Այլ կերպ՝ կալանավորման նպատակն է՝ նախաքննության և դատական քննության բնականոն գործընթացի ապահովումը, քրեական գործի բնականոն քննությանը մեղադրյալի (կասկածյալի) դիմակայության կամխումը, դատավարական գործընթացին մեղադրյալի մասնակցության ապահովումը, ոչ թե նրան պատժելը կատարած հանցանքի, քննության ընթացում դրսևորած ոչ պատշաճ վարքագծի համար:

43. Խափանման միջոցի մասին որոշումն ընդունվում է, եթե գոյություն ունեն այդ որոշումը պարտադրող հանգամանքներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մաս), և եթե այդ հանգամանքները վերանում են, ապա քննիչը (դատարանը) մինչև գործն ըստ էության լուծելը պարտավոր է այդ որոշումը վերացնել: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա (տե՛ս *Ա.Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2008թ. հոկտեմբերի 31-ի որոշման 20-րդ կետը):

Հակառակ դրան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ անձի հանցագործությունը հիմնավորված ճանաչելը հիմք է պատիժ կիրառելու համար: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ հանցագործության մեջ անձի մեղավորությունը պետք է հաստատվի «ողջամիտ ենթադրություններից» շատ ավելի բարձր ապացուցողական չափանիշով՝ վերաբերելի փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

44. Այսպիսով, Տ.Վահրադյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս նրա հանցանքը հիմնավորված ճանաչելով՝ դատարանը խափանման միջոցին հաղորդել է պատժի տարրեր, ինչն արգելված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով: Հետևաբար՝ Տ. Վահրադյանին կալանավորելու մասին դատական ակտում նրա հանցանքը հիմնավորված համարելը նրա անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքի խախտում է:

45. Սույն որոշման 40-44-րդ կետերից բխում է, որ կալանավորումը, լինելով մեղադրյալի (կասկածյալի) դատավարական պատշաճ վարքագիծն ապահովող միջոց, կրելով ժամանակավոր և պայմանական բնույթ, չի կարող կանխորոշել հետագայում անձի մեղավորությունը մեղսագրված արարքում, առավել ևս նշանակվող «արդարացի պատիժը»:

46. Այսպիսով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, անփոփոխ թողնելով Տ.Վահրադյանի վերաբերյալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումը, դատական ակտը բեկանելու հիմք հանդիսացող նյութական կամ դատավարական օրենքի խախտում թույլ չի տվել: Հետևաբար, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը, հաշվի առնելով սույն որոշման մեջ բերված պատճառաբանությունները, պետք է թողնել անփոփոխ, իսկ բերված բողոքն առանց բավարարման:

47. Սույն գործով բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառում ապահովելու սահմանադրական գործառույթի, ինչպես նաև իրավունքի զարգացման օրենսդրական գործառույթի իրացումն է: Այդ առումով վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշա-

նակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Տիգրան Մայիսի Վահրադյանի վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝*

*ստորագրություն*

*Դատավորներ՝*

*ստորագրություններ*





«Անտարես» հրատարակչատուն  
Երևան 0009, Մաշտոցի 50ա)1  
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 56 15 26  
Հեռ.՝ֆաքս՝ (+374 10) 58 76 69  
[antares@antares.am](mailto:antares@antares.am)  
[www.antares.am](http://www.antares.am)